



Քաղաքացիական իրավահավասարության և
ինտեգրման պետական ուղևորության 2019
թվականի գործնական պլանի կատարման
հաշվետվություն

2019

Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով
Վրաստանի պետական նախարարի գրասենյակ



**Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի
պետական նախարարի գրասենյակ**

**Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական
ռազմավարության 2019 թվականի գործնական պլանի կատարման
հաշվետվություն**

Թբիլիսի

2020 թ.

Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի
պետական նախարարի գրասենյակ

Հասցե. Թբիլիսի, 0114, փ. Ինգոբրոդվա թիվ 7

Հեռախոս. (+99532)2923299, (+99532)2922632

Կայք-էջ. www.smr.gov.ge

Էլ.-փոստ. press@smr.gov.ge

Առաջաբան	4
Ռազմավարական նպատակ 1	4
Հավասար և լիարժեք մասնակցություն քաղաքացիական և քաղաքական կյանքին	4
Ռազմավարական նպատակ 2.....	42
Հավասար սոցիալական և տնտեսական պայմանների և հնարավորությունների ստեղծում...	42
Ռազմավարական նպատակ 3.....	52
Որակյալ կրթության մատչելիության ապահովում և պետական լեզվի իմացության բարելավում	52
Ռազմավարական նպատակ 4.....	65
Ազգային փոքրամասնությունների մշակույթի պահպանում և հանդուրժողական միջավայրի խթանում	65

Վրաստանը բազմազգ երկիր է, որտեղ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները կազմում են երկրի (Աբխազիայից և Յխինվալի տարածաշրջան/Հարավային Օսեթիայից բացի) բնակչության 13.2%-ը: Վրաստանի կառավարության կարևոր առաջնահերթություն է ներկայացնում Վրաստանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների նույնականության պաշտպանությունը և նրանց քաղաքացիական ինտեգրման գործընթացին աջակցությունը: Քաղաքացիական ինտեգրման քաղաքականության կարևոր գործիք է հանդիսանում *«Քաղաքացիական հավասարության և ինտեգրման պետական ռազմավարությունը և 2015-2020 թվականների գործնական պլանը»*: Ռազմավարությունը հենվում է *«Ավելի բազմերանգություն, ավելի ինտեգրում» մոտեցմանը* և նպատակաուղղված է էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների քաղաքական և քաղաքացիական մասնակցությանը, հավասար սոցիալական և տնտեսական պայմանների և կարողությունների ապահովմանը, որակյալ կրթության մատչելիության աճին և պետական լեզվի իմացության մակարդակի բարձրացմանը, մշակութային բազմազանության խրախուսմանը և ժողովրդականացմանը:

Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի գրասենյակը համակարգում է քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական ռազմավարության և համապատասխան գործնական պլանի մշակման, իրականացման և հաշվետվության աշխատանքները:

2019 թվականի ընթացքում նախատեսված կոնկրետ միջոցառումների, ծրագրերի և նախագծերի կատարման ճանապարհով շարունակվեց ռազմավարության իրականացումը:

Սույն փաստաթուղթը, որը պատրաստվեց պետական նախարարի գրասենյակի համակարգմամբ, արտացոլում է քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական ռազմավարության շրջանակներում, պետական գերատեսչությունների կողմից 2019 թվականի գործնական պլանով (հունվար-դեկտեմբեր) իրականացված գործունեությունը:

Ռազմավարական նպատակ 1

Հավասար և լիարժեք մասնակցություն քաղաքացիական և քաղաքական կյանքին

Նշված ռազմավարական նպատակի շրջանակներում սահմանված են հետևյալ առաջնահերթային ուղղությունները.

- Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական մակարդակով ընդգրկման բարելավում,
- Որոշումների ընդունման գործընթացում նրանց մասնակցության/ընդգրկման բարելավում,
- Այնպիսի քաղաքական գործընթացներում, ինչպիսիք են ընտրությունները, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների լրիվ և հավասար մասնակցության ապահովում,
- Քաղաքացիական ընդգրկման ապահովում տեղեկատվության և զանգվածային լրատվության միջոցների, հասարակական սերվիսների, պետական վարչարարության և իրավապաշտպան մարմինների և մեխանիզմների մատչելիության բարելավման ճանապարհով,
- Փոքրաթիվ և խոցելի էթնիկ փոքրամասնությունների աջակցություն,
- Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ կանանց իրավունքների պաշտպանության և դրանց ուժեղացման աջակցություն:

Միջանկյալ նպատակ - 1.1. Փոքրաթիվ և խոցելի էթնիկ փոքրամասնությունների աջակցություն

Խնդիր - 1.1.1 Փոքրաթիվ և խոցելի էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ քաղաքականության մշակում և իրականացում

Տրված խնդրի շրջանակներում հստակեցվել են հետևյալ ուղղությունները.

- Փոքրաթիվ էթնիկ խմբերի նույնականության պաշտպանության աջակցություն,
- Գնչուների գրանցման ապահովում,
- Գնչու երիտասարդների ընդգրկում կրթական համակարգում:

Փոքրաթիվ և խոցելի էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների իրավունքների պաշտպանությունը և նրանց լիարժեք ինտեգրման օժանդակությունը քաղաքացիական ինտեգրման քաղաքականության կարևորագույն խնդիրն է, որի իրականացմանը ընդգրկված են ճյուղային նախարարությունները:

2019 թվականի ընթացքում շարունակվեց փոքրաթիվ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին մայրենի լեզուների ուսուցումը (օսերեն, չեչներեն, ավարերեն, ուդիերեն, ասորերեն) նրանց պահանջին համապատասխան սահմանված հանրային դպրոցներում:

Գնչու պատանիներին կրթական համակարգում ընդգրկելու նպատակով Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իրականացված գործողություններ.

- ❖ Ակտիվորեն ընթանում է գնչու պատանիների բարօրության համար կազմակերպված միջգերատեսչական և միջսեկտորային աշխատանքային հանդիպումներին մասնակցությունը,
- ❖ Գնչու պատանիների հասակակիցների հետ սոցիալականացմանը օժանդակելու նպատակով, 2014 թվականից մինչև օրս ՀԻԻԱ քաղաք Քոբուլեթի թիվ 5 հանրային դպրոցում, «Սոցիալական ինկլյուզիայի» օրենքով, ոչ ձևական միջավայրում իրականացվում է տարրական դասարանների (8-11 տարեկան) և բարձր դասարանցիների (11-15 տարեկան) միջավայրում գնչու պատանիների ընդգրկումը: Դպրոցում գործում են ընթերցանության (12 գնչու և 8 տեղացի հասակակից), պարի (8 գնչու և 7 տեղացի հասակակից) և թատերական (7 գնչու և 8 տեղացի հասակակից) ակումբներ: Նշված ակտիվությունները օժանդակեցին գնչու պատանիների շրջանում պետական լեզվի իմացության մակարդակի բարձրացմանը, ինչը դրականորեն անդրադարձավ նաև նրանց ակադեմիական առաջադիմության վրա,
- ❖ 2017-2019 թվականներին, ոչ ձևական կրթության ճանապարհով բազմադիսցիպլինային թիմի կողմից իրականացվեց, այսպես կոչված, «անտեսանելի» գնչու պատանիներին կրթական միջավայրում ընդգրկումը և գնահատումը: Նրանք սովորում են բազային աստիճանում, որտեղ ուսուցումն ընթանում է նրանց համար հատուկ մշակված անհատական պլանով,
- ❖ 2017-2019 թվականներին ք. Զուգդիդի և ք. Փոթիի հանրային դպրոցների կողմից դրամաշնորհային մրցույթով, ենթածրագրի շահառուների համար առաջարկվել էին արտագնա վարժանքներ, որտեղ Վրաստանի տարբեր տարածաշրջաններում բնակվող գնչու պատանիները և նրանց հասակակիցները հնարավորություն ունեին միմյանց հետ փոխանակելու տեղեկություններ գնչուական համայնքի մշակույթի և կենցաղի մասին:

Տարվա ընթացքում սոցիալական ինկլյուզիայի ենթածրագրի շրջանակներում ֆինանսավորված նախագծերին ընդգրկված էին 65 գնչու պատանիներ: Աշխատանքի ընդունվեց 8 գնչու (որպես սոցիալական ինկլյուզիայի ծրագրով գնչուների համայնքի համակարգող, ընդորդում 1-ը որպես պարուսույց, 1-ը՝ կարճատև (սեզոնային) պայմանագրով մասնավոր սեկտորում որպես փոստի սուրհանդակ (կուրիեր): Նշվածից բացի, նույն ծրագրի

շրջանակներում, փողոցում բնակվող և աշխատող երեխաների, այդ թվում գնչու երեխաների կրթության իրավունքի ապահովման նպատակով, նախարարությունն աշխատում է դպրոցից դուրս մնացած երեխաներին կրթության երկրորդ հնարավորություն ապահովելու ուղղությամբ, մասնավորապես, նախարարությունը անապաստան երեխաների ցերեկային կենտրոնների և այլ հոգատարության սերվիսների բազայի վրա իրականացնում է հատուկ կրթական սերվիս (տարանցիկ ծրագրեր)՝ դպրոցից դուրս մնացած կամ մնալու բարձր ռիսկ ունեցող պատանիներին ձևական կրթությունում ինտեգրելու – վերաինտեգրելու համար:

1.1.1.1 Ք. Թբիլիսիի մունիցիպալիտետի սակրեբուլոյին (Ժողովրդական ժողով) առընթեր գործող ազգային փոքրամասնությունների համակարգող խորհրդի շրջանակներում տարբեր միջոցառումների անցկացում

Տարվա ընթացքում ք.Թբիլիսիի մունիցիպալիտետի սակրեբուլոյին առընթեր գործող ազգային փոքրամասնությունների համակարգող խորհրդի շրջանակներում անցկացվեցին տարբեր կարգի միջոցառումներ և հանդիպումներ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, այդ թվում «Նովրուզ բայրամ» միջոցառումը (շուրջ 200 հյուր):

1.1.1.2 Ք. Բաթումում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին, «Բարեկամության տան» շրջանակներում, օգնություն ցուցաբերվեց նույնականացման փաստաթղթերի կարգավորման հարցում

Հաշվետու տարում «Բարեկամության տունը», իրավասության շրջանակներում, օգնություն ցուցաբերեց էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ 35 շահառուի: Խնդիրներն ընդգրկում էին ինչպես նույնականացման փաստաթղթերի կարգավորման, այնպես էլ ունեցվածքի գրանցման հարցերը, օտար երկրների այցեհրավերային ծառայությունների մասին տեղեկատվություն ստանալը, մասնավոր ձեռներեցային գործունեության մասին տեղեկատվական աջակցությունը: Բացի դրանից, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների դիմումի համապատասխան, իրականացվեց ոչ պետական լեզվով կազմված տարբեր փաստաթղթերի թարգմանություն՝ նոտարական վավերացմամբ, ինչպես նաև վրացերեն կազմված փաստաթղթերի թարգմանություն պահանջվող լեզուներով:

1.1.1.3 Ք.Բաթումում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին մունիցիպալային ծրագրերի մասին տեղեկությունների մատչելիության ապահովում

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների տեղական մակարդակով ընդգրկվածությունը բարելավելու նպատակով, «Բարեկամության տան» շահառուները ակտիվորեն ընդգրկված էին 2019 թվականի բյուջեի հանրային շնորհանդեսի և 2020 թվականի բյուջեի հանրային քննարկման գործընթացին:

2019 թվականի հունվարի 22-ին «Բարեկամության տանը», ք. Բաթումի մունիցիպալիտետի ներկայացուցիչները, 2019 թվականի բյուջեին ծանոթանալու նպատակով անցկացրեցին հանդիպում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը ներկա էին 9 էթնիկ խմբի (ադրբեջանցի, հույն, գերմանացի, հրեա, թուրք, եզդի, ռուս, հայ, ուկրաինացի) 20 ներկայացուցիչ: Հանդիպման ժամանակ, մանրամասն քննարկվեց 2019 թվականին պլանավորված մշակութային միջոցառումների ֆինանսավորումը, որտեղ արտահայտվեց գաղափար «Բաթումոբա»-ի շրջանակներում, Բաթումիի բազմազգությունը ներկայացնելու վերաբերյալ: Արդյունքում, 2019 թ. «Բաթումոբա» տոնի ժամանակ Բաթումիի ճեմուղում կայացած միջոցառումների կենտրոնական տեսարաններից մեկը ներկայացնում էր, այսպես կոչված, «Բարեկամության ծառուղին»:

2019 թվականի հոկտեմբերի 15-ին, քաղաք Բաթումի մունիցիպալիտետի քաղաքապետարանի նախաձեռնությամբ, 2020 թվականի բյուջեի նախագծի քննարկման նպատակով, «Բարեկամության տանը» կայացավ հանդիպում ք. Բաթումում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը ներկա էր էթնիկ փոքրամասնությունների 26 ներկայացուցիչ: Հանդիպման ժամանակ ցանկություն արտահայտվեց բյուջեում էթնիկ փոքրամասնություններին հատկացված գումարը ավելացնելու վերաբերյալ, ինչը նկատառվեց 2020 թվականի բյուջեում:

1.1.1.4 Մունիցիպալիտետների կողմից երիտասարդական քաղաքականության փաստաթղթի հաստատում, որը ներառում է էթնիկ փոքրամասնությունների ինտեգրմանը օժանդակող միջոցառումներ

Ք. Մառնեուլիի մունիցիպալիտետի քաղաքապետարանում ավարտվեց մունիցիպալային երիտասարդական քաղաքականության փաստաթղթի մշակման գործընթացը: Փաստաթղթում նկարագրված է 3-ամյա ժամանակաշրջանը և նախատեսվում է էթնիկ փոքրամասնությունների ինտեգրման նպատակով տարբեր նախագծի, ծրագրի և միջոցառման իրականացում:

Փաստաթղթի մշակման գործընթացը ներառում է երիտասարդության կարիքների հետազոտության անցկացում (ֆոկլուս խմբեր), հանդիպումներ ոչկառավարական/կառավարական սեկտորի հետ, հաղորդակցություն կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ:

Փաստաթղթով սահմանվել են հետևյալ առաջնահերթային ուղղությունները.

- ❖ Ոչձևական կրթության օժանդակություն,
- ❖ Անվտանգ միջավայր,

- ❖ Ջարգացման հավասար հնարավորություններ,
- ❖ Ինքնադրսևորման օժանդակություն,
- ❖ Որոշման ընդունման գործընթացին մասնակցություն:

1.1.1.5 Ծննդյան/Անձր հաստատող վկայական չունեցող կամ թերի փաստաթղթեր ունեցող անձանց փաստաթղթերով ապահովելու նպատակով համապատասխան միջոցառումների անցկացում

2019 թվականի ընթացքում Վրաստանի Արդարադատության նախարարությունը, «Վրաստանում քաղաքացիություն չունեցող անձանց թվի կրճատման և քաղաքացիություն չունենալու կանխման» նախագծի շրջանակներում, գնչուների համայնքի 9 ներկայացուցչի ապահովեց նույնականության տվյալների կարգավորումը: Տրվեց 1 կեցության վկայական, 1 ժամանակավոր նույնականության վկայական, 3 դեպքում որոշվեց Վրաստանի քաղաքացիությունը (տրվեց ID քարտ), տրվեց 3 ծննդյան վկայական, 1 դեպքում որոշվեց քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակը:

Միջանկյալ նպատակ. 1.2 Գենդերային մեյնստրիմինգ (հիմնական ուղղություն, կարծիք)

Խնդիր. 1.2.1 Գենդերային նշանով խտրականության վերացման աջակցություն

Տարվա ընթացքում պետական միջգերատեսչական հանձնաժողովի գործունեությանը ընդգրկված պետական հաստատությունները շարունակեցին կոնկրետ միջոցառումների և նախագծերի իրականացումը հետևյալ առաջնահերթային ուղղություններով.

- Կանանց իրավունքների/գենդերային հավասարության մասին գիտակցության բարձրացում,
- Ընտանիքում բռնության/վաղ ամուսնության մասին տեղեկատվության մատչելիություն,
- Կանանց սոցիալ-տնտեսական ուժեղացման օժանդակություն:

Ինտենսիվ ռեժիմով ընթանում էին ընտանիքում բռնության և վաղ ամուսնության թեմայի մասին տեղեկատվական հանդիպումները: Ընդարձակվեց հանդիպումների տեսադաշտը և շահառուների թվաքանակը: Վերոնշյալ թեմատիկայի կապակցությամբ իրականացվեց էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցչի երիտասարդների վերապատրաստում, վերջիններս տեղեկատվությունը տարածեցին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծ բնակվող տարածաշրջաններում:

2019 թվականին առանձնահատուկ ուշադրություն հատկացվեց էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ կանանց բիզնես-հմտությունների զարգացմանը, որի արդյունքում պատրաստվեցին կոնկրետ նախագծային առաջարկություններ:

1.2.1.1 Գենդերային հավասարության թեմայով տեղեկատվական հանդիպումների անցկացում էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջաններում

Ներքին գործերի նախարարության նախաձեռնությամբ, կանանց նկատմամբ բռնության դեմ 16-օրյա քարոզարշավի շրջանակներում կայացավ շուրջ 20 հանդիպում: Այդ թվում. ք. Թբիլիսիում 17, իսկ ք. Ռուսթավում, ք. Մառնեուլիում և Յոթուղանլո գյուղում՝ մեկական հանդիպում: Հանդիպումների շրջանակներում աշակերտներին հաղորդվեց տեղեկատվություն կանանց նկատմամբ և ընտանիքում բռնության պրակտիկ հարցերի մասին, գենդերային հավասարության նշանակության, վաղ ամուսնության հետ կապված հանցագործությունների, ամուսնության ստիպողականության, բուլլինգի, դրա բացասական ազդեցությունների և դրանցից պաշտպանվելու միջոցների մասին: Նշված հանդիպումներին մասնակցություն ունեցան շուրջ 500 աշակերտներ: Դրա հետ միասին, 16-օրյա քարոզարշավի շրջանակներում սեռական ճնշումների կապակցությամբ տպագրվեցին տեղեկատվական բուկլետներ: Քարոզարշավի շրջանակներում ներքին գործերի նախարարությունը ակտիվորեն համագործակցում էր ինչպես միջազգային, այնպես էլ թեմատիկ, տեղական ոչկառավարական կազմակերպությունների հետ,

2019 թվականին ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի (UNFPA) Վրաստանի գրասենյակի աջակցությամբ, Շվեդիայի կառավարության ֆինանսավորմամբ և ՄԱԿ-ի «Հանուն գենդերային իրավահավասարության» ծրագրի շրջանակներում, ներքին գործերի նախարարության մարդու իրավունքների պաշտպանության և հետաքննության որակի մոնիթորինգի դեպարտամենտի նախաձեռնությամբ, իրականացվեց «Մի խի՛ր մանկությունը» 18-օրյա տեղեկատվական քարոզարշավ: Քարոզարշավի շրջանակներում ամբողջ Վրաստանի տարածքով կայացան բազում հանդիպումներ: Հանդիպումներ անցկացվեցին ք.Գորիում, ք.Կասպիում, ք.Բաթումում, ք.Քոբուլեթում, ք.Քութաիսում, ք.Թելավում, ք.Գարդաբանում, ք. Դմանիսում, Մուխրանի գյուղում, ք. Ռուսթավում, Թեթրիձղարոյի մունիցիպալիտետի Քոսալար գյուղում, ք. Մառնեուլիում, ք. Սագարեջոյում, Բայդար գյուղում և այլն (ընդամենը 15 հանդիպում): Հանդիպումներին մասնակցում էին ինչպես դպրոցի աշակերտներ, այնպես էլ ուսուցիչներ, տեղական ինքնակառավարման ներկայացուցիչներ և հասարակության այլ շահագրգիռ կողմեր, (1000 շահառու): 2019 թվականի նոյեմբերի 15-22-ին, Վրաստանում առաջին անգամ տեղի ունեցավ իրավահավասարության շաբաթ: Շաբաթվա շրջանակներում Վրաստանի մասշտաբով անցկացվեցին տեղեկատվական հանդիպումներ, որտեղ

երիտասարդները, տարբեր մասնագիտության անձինք և խմբի ներկայացուցիչներ հնարավորություն ունեցան տեղեկատվություն ստանալ իրավահավասարության նշանակության և խտրականության դեմ պայքարի իրավական մեխանիզմների մասին: Վերը նշված ակտիվությունների շրջանակներում իրականացված տեղեկատվական հանդիպումներին ակտիվորեն մասնակցում էին տարածաշրջաններում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները:

1.2.1.2 Կանանց ձեռներեցության ուժեղացում – Վրաստանի տնտեսության և կայուն զարգացման նախարարության ՀԻԻԱ «Արտադրի՛ր Վրաստանում»

2019 թվականին միկրո և փոքր ձեռներեցության աջակցության ծրագիր չի իրականացվել, համապատասխանաբար չեն կատարվել ակտիվություններ կանանց ձեռներեցության ուժեղացման ոլորտում:

1.2.1.3 Ուսուցիչների և դասղեկների վերապատրաստում բուլիինգի կանխման և հանդուրժողական մշակույթի խրախուսման, ինչպես նաև գենդերային հավասարության հարցերով

2019 թվականին Վրաստանի մասշտաբով 453 ունկնդրի համար, այդ թվում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներ (ուսուցիչներ և դասղեկներ), անցկացվեց վարժանք «Բուլիինգի կանխարգելում և հանդուրժողական մշակույթի խթանում դպրոցներում»:

1.2.1.4 Քաղաք Թբիլիսիի մունիցիպալիտետի սակրեբուլոյին (Ժողովրդական ժողով) առընթեր գործող գենդերային իրավահավասարության համակարգող խորհրդի շրջանակներում տարբեր միջոցառումների անցկացում

Ք.Թբիլիսիի մունիցիպալիտետի գենդերային խորհուրդը 2019 թվականին իրականացրեց 14 միջոցառում տարբեր ուղղություններով:

1.2.1.5 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ կանանց համար, գենդերային նշանով խտրականության մասին աշխատանքային հանդիպումների և վարժանքների կազմակերպում

Ք.Թբիլիսիի սակրեբուլոյի կողմից պլանավորված ակտիվությունը տարվա ընթացքում չի իրականացվել:

1.2.1.6 Ք.Բաթումի «Բարեկամության տանը» գործող «Կանանց ակումբի» շրջանակներում, կանանց նկատմամբ բռնության կրճատման/կանխման նպատակով հանդիպումների կազմակերպում

«Բարեկամության տան» շրջանակներում գործող «Կանանց ակումբում» գրանցված է էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ 32 շահառու: Հաշվետու տարում ամենամսյա անց էին կացվում հանդիպումներ կանանց տնտեսական, սոցիալական և քաղաքական ուժեղացման, նրանց իրավունքների պաշտպանության նպատակով, իրականացվում էին տեղեկատվական քարոզարշավներ կանանց նկատմամբ բռնության կանխման և այլ կարգի հիմնախնդիրների լուծման հնարավորությունների վերաբերյալ, ինչպիսիք են բռնության զոհին (ենթադրական զոհին) բռնություն իրականացնողից խուսափման ապահովումը:

1.2.1.7 Գենդերային հիմնադրույթների հարցով աշխատող ոչկառավարական կազմակերպությունների հետ հանդիպումներում և թեմատիկ վարժանքներում կանանց ընդգրկման ապահովում

Ք. Բաթումի մունիցիպալիտետի քաղաքապետարանի կողմից պլանավորված ակտիվությունը տարվա ընթացքում չի իրականացվել:

1.2.1.8 Տեղեկատվական հանդիպումներ էթնիկ խմբերի հետ գենդերային հավասարության թեմայով– Ո(ո)ԻԱ Բաթումի մշակույթի կենտրոնին առընթեր գործող «Բարեկամության տան» անդամների հետ

ՀԻԻԱ Աճարայի իրավաբանական օգնության բյուրոյի աջակցությամբ և «Բարեկամության տան» կազմակերպմամբ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ տեղի ունեցավ 2 տեղեկատվական հանդիպում գենդերային հարցերի շուրջ, ինչպես նաև անցկացվեց խորհրդատվություն տարբեր իրավական հարցերի մասին: Նշված հանդիպումներին ներկա էր էթնիկ փոքրամասնությունների 70 ներկայացուցիչ:

1.2.1.9 Գենդերային բռնության դեմ գործողության շրջանակներում, ք. Բաթումի «Բարեկամության տանը» կայացան իրավական խորհրդատվական հանդիպումներ իրավաբանական խորհրդատվական հաստատությունների ներկայացուցիչների հետ

2019 թվականի նոյեմբերին կանանց նկատմամբ և ընտանիքում բռնությունն արմատախիլ անելու նպատակով կառավարական գործողության շրջանակներում անցկացվեցին տեղեկատվական-խորհրդատվական տարբեր կարգի 3 հանդիպումներ, որոնց ներկա էին էթնիկ փոքրամասնությունների 35 ներկայացուցիչներ: Հանդիպումների ժամանակ քննարկվեցին հետևյալ հարցերը. ընտանեկան բռնությունը և ընտանեկան բռնության զոհի կարգավիճակի նույնականացումը, համապատասխան արձագանքի հնարավորությունները:

1.2.1.10 «Կանանց սենյակներ» մունիցիպալային սերվիսի շրջանակներում «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության Եվրոպական շրջանակային կոնվենցիայի» մասին հանդիպումների անցկացում

Կախերթի տարածաշրջանի Գուրջաանիի մունիցիպալիտետի Ղիտաանի և Չումլադի գյուղերի վարչական միավորման տարածքում բնակվող էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչների հետ, քաղաքապետարանի առողջության պահպանության և սոցիալական սպասարկման ծառայության և «Կանանց սենյակ» մունիցիպալային սերվիսի կողմից պլանավորվեցին և անցկացվեցին տեղեկատվական բնույթի հանդիպումներ, այդ թվում «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին Եվրոպական շրջանակային կոնվենցիայի» մասին:

1.2.1.11 Ակադեմիայի IV կուրսի յունկերների գնահատման դասախոսություն (4 ժամ) գենդերային հավասարության սկզբունքների մասին

2019 թվականին պաշտպանության ակադեմիայի յունկերների համար անցկացվեց գնահատման դասախոսություն (4 ժամ) գենդերային հավասարության սկզբունքների մասին:

1.2.1.12 I կուրսի յունկերների համար ծանոթության բնույթի վարժանք (2 ժամ) գենդերային հավասարության սկզբունքների և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերի մասին

ՀԻԻԱ Դավիթ Ադմաշենբեկիի անվան ազգային պաշտպանության ակադեմիայի կողմից պլանավորված ակտիվությունը տարվա ընթացքում չի իրականացվել:

1.2.1.13 2019-2020 ակադեմիական տարում ակադեմիա ընդունված ունկնդիրների համար անցկացվեց ծանոթության կարգի վարժանք (2 ժամ) գենդերային հավասարության սկզբունքների մասին

2019 թվականին ակադեմիա ընդունված ունկնդիրների, այդ թվում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար, անցկացվեց ծանոթության բնույթի վարժանք (2 ժամ) գենդերային հավասարության սկզբունքների մասին:

1.2.1.14 Մունիցիպալային սերվիս «Կանանց սենյակներում» կանանց տնտեսական ուժեղացման, կանանց նկատմամբ բռնության կրճատման/կանխման, նրանց իրավունքների մասին, ինչպես նաև որոշումների ընդունման գործընթացին նրանց ընդգրկմանը կողմնորոշված հանդիպումների և վարժանքների անցկացում (կանանց բիզնես ստարտապների՝ նորարարությունների, ձեռներեցության մասին)

Քվեմո Քարթլիի տարածաշրջանի յուրաքանչյուր մունիցիպալիտետում բնակչության հետ ակտիվորեն անց էին կացվում քարոզարշավներ վաղ ամուսնությունների կանխման և

կանանց նկատմամբ, ընտանիքում բռնության դեմ, կանանց տնտեսական ուժեղացման, որոշումների ընդունման գործընթացում կանանց ընդգրկման, ռեպրոդուկտիվ առողջության, իրավունքների, գենդերային հավասարության և առողջ կենսակերպի մասին, բիզնես-նախագծերի վրա աշխատանքի/ուսուցման ուղղությամբ: Վերը հիշատակված հարցերի շրջանակներում անցկացվեցին շուրջ 50 հանդիպում/վարժանքներ, որոնց մասնակցեցին շուրջ 400 շահառուներ: Հատկանշական է, որ ձեռներեց կանանց ուժեղացման նպատակով ֆինանսավորվեց 2 նախագիծ:

1.2.1.15 Աշխատանքային զբաղվածության ժամանակ, գենդերային հավասարության սկզբունքների պաշտպանություն, կառավարական խորհուրդներում գենդերային հաշվեկշռի (բալանսի) պաշտպանություն

Քվեմո Քարթլիի տարածաշրջանի մունիցիպալիտետների (ք.Ռուսթավի, Դմանիսի, Մառնեուլի, Գարդաբանի) քաղաքապետարաններում աշխատանքային զբաղվածության գործընթացում պաշտպանված է գենդերային հավասարության սկզբունքը և աշխատանքով զբաղված է շուրջ 200 կին:

- ❖ Բոլնիսի քաղաքապետարանում զբաղվածության ընդհանուր թվաքանակը ներկայացնող 180 հոգուց 85-ը կին է:
- ❖ Մառնեուլիի մունիցիպալիտետում զբաղված է 215 անձ, այստեղից 74-ը կին է,
- ❖ Թերթիձղարոյի մունիցիպալիտետում, քաղաքապետարանում զբաղված ծառայողների ընդհանուր թվաքանակը կազմում է 118, որից 76-ը տղամարդ է և 42-ը՝ կին:
- ❖ Գարդաբանի մունիցիպալիտետում զբաղված է 88 կին և 101 տղամարդ:
- ❖ Դմանիսի մունիցիպալիտետում 23 կին է և 70 տղամարդ:
- ❖ Ռուսթավի մունիցիպալիտետում՝ 124 կին և 99 տղամարդ:
- ❖ Ծալկայի մունիցիպալիտետում՝ 26 կին և 64 տղամարդ:

1.2.1.16 Գենդերային խորհուրդների ստեղծում և արդյունավետ գործունեության ապահովում **Քվեմո Քարթլիի տարածաշրջանի կազմի մեջ մտնող մունիցիպալիտետներում: Նշված խորհուրդների նիստերն անց են կացվում սակրեբուլոներում**

Քվեմո Քարթլիի տարածաշրջանի մունիցիպալիտետներում ակտիվորեն անց էին կացվում (ք. Ռուսթավի, Դմանիսի, Մառնեուլի և Բոլնիսի) գենդերային խորհրդի հանդիպումներ, այդ թվում արտագնա նիստեր: Հանդիպումներին ակտիվորեն մասնակցում էին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները:

Մառնետուլիի մունիցիպալիտետի գենդերային խորհուրդը հետազոտություն անցկացնելու նպատակով 5 գյուղում անցկացրեց հանդիպումներ: Գարդաբանի մունիցիպալիտետում գենդերային խորհրդի նախաձեռնությամբ հանրային ծառայության աշխատակիցների և ձեռներեց կանանց համար անցկացվեցին վարժանքներ և ուսումնական հանդիպումներ:

Ծալկայի մունիցիպալիտետում անցկացվեց գենդերային խորհրդի երեք հանդիպում:

1.2.1.17 «Երիտասարդները հանուն գենդերային հավասարության» նախագծի շրջանակներում հասակակից լուսավորիչների վերապատրաստում (TOT վարժանքի անցկացում) և նրանց կողմից գենդերային հավասարության, ընտանիքում բռնության, վաղ ամուսնությունների մասին վարժանքների/հանդիպումների անցկացում

Հաշվետու ժամանակաշրջանում պետական նախարարի գրասենյակի և Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի համատեղ նախագծի շրջանակներում, մարդկանց վաճառքի (թրեֆիկինգ) զոհերի, տուժյալների պաշտպանության և օգնության պետական հիմնադրամի (ATIP Fund) հետ գործընկերային եղանակով վերապատրաստվեցին կամավոր հասակակից լուսավորիչները, ովքեր նախագծի շրջանակներում իրականացված տեղեկատվական քարոզարշավի արդյունքում 2018-2019 թվականներին, 21 մունիցիպալիտետի 147 գյուղերում անցկացրին 217 հանդիպում: Հանդիպումներին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ 5 300 – ից ավելի շահառուի հաղորդվեց տեղեկություն գենդերային հավասարության, վաղ ամուսնության, ընտանիքում բռնության, բարեփոխումների մեխանիզմների և այլ հարցերի մասին:

1.2.1.18 Պանկիսի կիրճում բնակվող կանանց համար ուսումնական վարժանք – դասընթաց «Ինչպես սկսել և զարգացնել բիզնես»

Պետական նախարարի գրասենյակի և ՀԻԻԱ ֆինանսների նախարարության ակադեմիայի համատեղ նախաձեռնության շրջանակներում, Պանկիսի կիրճում բնակվող կանանց համար, նրանց տնտեսական հզորացման նպատակով, իրականացվեց ուսումնական վարժանք-դասընթաց՝ «Ինչպես սկսել և զարգացնել բիզնես», որի ավարտից հետո, 2019 թվականին Պանկիսի կիրճից վարժանք-դասընթացին ընդգրկված 14 մասնակիցներից 11-ը՝ բիզնես սկսելու համար ՄԱԿ-ի Կանանց հիմնադրամից ստացավ դրամաշնորհային ֆինանսավորում:

1.2.1.19 - 1.2.1.20 Գենդերային սենյակների շրջանակներում հանդիպումների/միջոցառումների անցկացում

Սամցխե-Ջավախեթի երկրամասային վարչության գենդերային հավասարության հարցերով ներկայացուցիչը համակարգում է մունիցիպալիտետներում ստեղծված գենդերային

խորհուրդների գործունեությունը: Այս տեսանկյունից երկրամասի վարչության նախաձեռնությամբ և միջազգային կազմակերպությունների ընդգրկմամբ կրկին շարունակվեց վարժանքների շարքը գենդերային հարցերով: Վարժանքներին ակտիվորեն ընդգրկված են Ախալքալաքի և Նինոծմինդայի մունիցիպալիտետների կանանց սենյակների ներկայացուցիչները:

Կախերի տարածաշրջանի մունիցիպալիտետում գործող «Կանանց սենյակներում» 2019 թվականին 5 գյուղում անցկացվեց 30 հանդիպում: Սագարեջոյի մունիցիպալիտետի Յորմուղանլո գյուղի կանանց սենյակի նախաձեռնությամբ. Յորմուղանլո գյուղի պոլիկլինիկայում, հրավիրված բժիշկների կողմից անցկացվեց 40 շահառուի անվճար բժշկական քննում: 2019 թվականին Թելավի մունիցիպալիտետի գենդերային հավասարության խորհուրդը և Թելավի մունիցիպալիտետի «Կանանց սենյակը» բնակչության հետ անցկացրեցին 2 հանդիպում, որին մասնակցում էր Թելավի մունիցիպալիտետում բնակվող էթնիկ փոքրամասնությունների շուրջ 30 ներկայացուցիչ: Ղարաջալայում կազմակերպվեցին հանդիպումներ ինչպես դպրոցի աշակերտների և մանկավարժների, այնպես էլ մանկապարտեզի վարչության և երեխաների ծնողների հետ: Հանդիպումների ժամանակ քննարկվեցին վաղ ամուսնությունների, դրա բացասական կողմերի, վաղ ամուսնությունների հետ կապված իրավական և բժշկական հիմնախնդիրների մասին հարցերը:

Միջանկյալ նպատակ. 1.3 Պետական վարչարարության և իրավապահ մարմինների և մեխանիզմների մատչելիության աճ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար

Խնդիր. 1.3.1 **Էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջաններում պետական լեզվին չտիրապետող քաղաքացիների ոչ պետական լեզվով կազմված փաստաթղթերի ըստ անհրաժեշտության թարգմանության աջակցություն**

1.3.1.1 **Կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության հարցերի մասին, ինչպես նաև գոյություն ունեցող պետական սերվիսների հանրայնացման նպատակով կրթական տեղեկատվական հանդիպումների կազմակերպում Թբիլիսիում և տարածաշրջաններում**

Մարդկանց վաճառքի (թրեֆիկինգի) գոհերի, տուժյալների պաշտպանության և օգնության պետական հիմնադրամի կողմից հաշվետու ժամանակաշրջանում անցկացվեցին տեղեկատվական հանդիպումներ, մասնավորապես. հունվարի 22-ին՝ Քվեմո Քարթլիի տարածաշրջանում, Մառնեուլիի թիվ 8 հանրային դպրոցում՝ «Ընտանիքում բռնության և թրեֆիկինգի գոհերի իրավունքները և պաշտպանության երաշխիքները, հիմնադրամի

ծառայությունները և ընտանիքում բռնությունից և թրեֆիկինգից ինքնապաշտպանության միջոցները և եղանակները» թեմայով (ներկա էր ադրբեջանական սեկտորի 65 աշակերտ), փետրվարի 8-ին Գարդաբանի շրջանի երկու գյուղերում՝ (Գամարջվեբա և Ղարաջալա գյուղեր) «Կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության հարցերի, ինչպես նաև բռնության զոհերի համար պետական սերվիսների մասին» թեմայով՝ (ներկա էր ադրբեջանական սեկտորի 105 աշակերտ), փետրվարի 22-ին Քվեմո Քարթլիի տարածաշրջանում, Մառնեուլիի թիվ 4 և թիվ 8 հանրային դպրոցներում՝ «Ընտանիքում բռնության և թրեֆիկինգի զոհերի իրավունքները և պաշտպանության երաշխիքները, հիմնադրամի ծառայությունները և ընտանիքում բռնությունից և թրեֆիկինգից ինքնապաշտպանության միջոցները և եղանակները» թեմայով՝ (ներկա էր 105 աշակերտ):

1.3.1.2 Ք.Բաթումիի «Բարեկամության տան» գործունեության շրջանակներում ոչ վրացալեզու դիմումների և այլ փաստաթղթերի թարգմանության ապահովում, անհրաժեշտության դեպքում նոտարական վավերագրությամբ (ռուսերեն, ուկրաիներեն և հունարեն) դիտեք՝ 1.1.1.2

1.3.1.3 Պետական լեզվին չտիրապետող քաղաքացիների կողմից հանրային հիմնարկությանը ներկայացվելիք, ոչ պետական լեզվով կազմված դիմումների և փաստաթղթերի թարգմանության աջակցություն

Սամցխե-Ջավախեթի երկրամասային վարչությունում և տարածաշրջանի մունիցիպալիտետներում քաղաքացիներին լեզվական պատենշի պատճառով խոչընդոտներ չեն ստեղծվել: Նրանց համապատասխան պարզաբանումները և հանձնարարականները տրվում են մայրենիով կամ նրանց հասկանալի լեզուներով:

Խնդիր. 1.3.2. Պետական լիազոր-նահանգապետերի վարչության կազմում Էթնիկ փոքրամասնությունների ընդգրկման բարելավում

1.3.2.1 Թբիլիսիի Սակրեբուլոյի գործունեությունում Էթնիկ փոքրամասնությունների խորհրդի անդամների ընդգրկման ապահովում: Սակրեբուլոյում անցկացվող կարևոր հանդիպումներին, սակրեբուլոյի և հանձնաժողովների նիստերին նրանց մասնակցությունը- ք.Թբիլիսիի Սակրեբուլոյի կողմից պլանավորված ակտիվությունը տարվա ընթացքում չի իրականացվել:

1.3.2.2 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների քաղաքացիական ընդգրկման բարելավման նպատակով ստեղծված խորհրդի նիստերի անցկացում

Հաշվետու ժամանակաշրջանում ք. Թեւալիում կայացավ Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների հասարակական խորհրդակցական խորհրդի նիստ: Էթնիկ փոքրամասնությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները,

ակտիվորեն ընդգրկված էին տարբեր հարցերի քննարկմանը: Նիստում տեղական ինքնակառավարությունների ներկայացուցիչները հաշվետվություն ներկայացրեցին էթնիկ փոքրամասնությունների բնակավայրերում իրականացված տարբեր սոցիալ-տնտեսական նախագծերի մասին:

1.3.2.3 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների քաղաքացիական ընդգրկման բարելավման նպատակով ստեղծված խորհրդի նիստերի անցկացում

Ք. Ռուսթավում տեղի ունեցավ պետական լիազորի վարչությանն առընթեր գործող հասարակական խորհրդատվական խորհրդի նիստը, որին մասնակցեցին տարածաշրջանում գործող ոչկառավարական կազմակերպությունները, համայնքային առաջնորդներ, կրթական ոլորտի և ինքնակառավարման ներկայացուցիչներ, ինչպես նաև Ժողովրդական պաշտպանի գրասենյակի աշխատակիցներ: Խորհրդի նիստում դատողություն արվեց քաղաքական և հասարակական կյանքին էթնիկ փոքրամասնությունների մասնակցության, պետական լեզվի իմացության նշանակության և էթնիկ փոքրամասնությունների մշակույթի խրախուսման, որակյալ կրթության մատչելիության (մարտահրավերների մասին, որոնք կան այս ուղղությամբ, մասնավորապես, դպրոցներում ոչ բավարար դասագրքերի քանակ և ենթակառուցվածքային հիմնախնդիրներ, տարածաշրջանում մանկապարտեզների սակավություն), ինչպես նաև վաղ ամուսնությունների հիմնախնդիրների, էթնիկ փոքրամասնություններով բնակվող գյուղերում ենթակառուցվածքի կարգավորման մասին: Ընդգծվեց մունիցիպալիտետներում էթնիկ փոքրամասնությունների հիմնահարցերի թեմայով աշխատող խորհրդակցական խորհուրդների ստեղծման և գործունեության նպատակաուղղվածությունը:

1.3.2.4 Նահանգապետի վարչությունում հանրային գործիչների հաստիքային պաշտոնների համար հայտարարված մրցույթին մասնակցության նպատակով էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների իրազեկում, համապատասխան հանդիպումների կազմակերպում ուսումնական հաստատություններում – տեղեկատվությունը բացակայում է:

Սամցխե-Ջավախեթի երկրամասային վարչության կողմից էթնիկ փոքրամասնություններով բնակվող վարչական միավորներում անցկացված հանդիպումների ժամանակ երիտասարդությանը տեղեկատվություն է հաղորդվում հանրային ծառայություններում մրցութային ընտրությանը մասնակցության մասին:

Խնդիր. 1.3.3 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար հասարակական սերվիսների մատչելիության բարելավում

1.3.3.1 Առողջության օժանդակության պետական ծրագրի շրջանակներում, առողջության աջակցության հարցերի մասին կրթական և տեսա նյութերի պատրաստում/տարածում

«Առողջության օժանդակություն», «Անվտանգ արյուն» և «Հիվանդությունների վաղ բացահայտում և սկրինինգ» պետական ծրագրերի շրջանակներում, առողջության աջակցության հարցերի մասին պատրաստվեցին կրթական տպագիր և տեսա նյութեր և տարածվեցին էթնիկ փոքրամասնությունների (հայերեն և ադրբեջաներեն) մայրենի լեզուներով, տարվա ընթացքում տպագրվեց 15 անուն նյութ, ինչպես նաև պատրաստվեց 3 հեռուստատեսային կլիպ վրացերեն լեզվով, էթնիկ փոքրամասնությունների մայրենի լեզուներով սուբտիտրերով:

ՀԻԻԱ Լևան Սաղվարեղիձեի անվան հիվանդությունների վերահսկման և հասարակական առողջության ազգային կենտրոնի ներկայացուցիչները մասնակցեցին Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի գրասենյակի կողմից Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում իրականացված տեղեկատվական քարոզարշավին, մասնավորապես. անցկացվեց 2 հանդիպում կենտրոնի ներկայացուցիչների մասնակցությամբ, որտեղ հանդիպման մասնակիցներին հաղորդվեց տեղեկատվություն C հեպատիտի և քաղցկեղի սկրինինգի պետական ծրագրերի մասին: Տեղում իրականացվեց C հեպատիտի սկրինինգի ակցիա: Մասնակիցներին փոխանցվեցին լուսավորչական կարգի նյութեր: «Առողջության օժանդակություն» պետական ծրագրի շրջանակներում անցկացվեց 4 վարժանք հասարակական առողջության մունիցիպալային կենտրոնների ներկայացուցիչների մասնակցությամբ, որին մասնակցում էին նաև էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով բնակվող մունիցիպալիտետների (Ախալքալաքի, Նինոծմինդա, Ախմետա) ներկայացուցիչները: Վարժանքներին քննարկվեցին նաև հասարակական առողջությունում թվանշանային առողջության և հաղորդակցության սկզբունքները: Դոնոր կազմակերպությունների հետ համագործակցությամբ, էթնիկ փոքրամասնություններով բնակվող տարածաշրջաններում իրականացվեցին տարբեր կարգի հետազոտություններ

- ❖ «Ալկոհոլի, ծխախոտի և այլ թմրանյութերի օգտագործումն ուսումնասիրող Եվրոպայի դպրոցական հետազոտություն - ESPAD 2019» - ESPAD հետազոտության ժամանակ էթնիկ փոքրամասնությունների համար կիրառվեցին հարցաշարեր հայերեն և ադրբեջաներեն:
- ❖ «Տղամարդիկ, կանայք և գենդերային հարաբերությունները Վրաստանում»,

- ❖ «Մանկական տարիքի գիրության էպիդեմիոսկոպիայի նախաձեռնություն»,
- ❖ «Ծխախոտի լայն տարածվածության պոպուլյացիոն հետազոտություն»:

3.3.2 Սակրեբուլոյի գործունեության մասին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների հետ տեղեկատվական հանդիպումների կազմակերպում

Ք. Թբիլիսիի սակրեբուլոյի կողմից պլանավորված ակտիվությունը տարվա ընթացքում չի իրականացվել:

1.3.3.3 Հասարակական սերվիսների և ընթացիկ պետական/ինքնավար հանրապետության մունիցիպալային ծրագրերին (կրթության, առողջության և սոցիալական պաշտպանության ծրագրեր, տարբեր օրենսդրական փոփոխություններ) ծանոթություն

Ք.Բաթումի մունիցիպալիտետի քաղաքապետարանի կողմից պլանավորված ակտիվությունը տարվա ընթացքում չի իրականացվել:

1.3.3.4 Վրաստանի եվրախնտեզրման գործընթացի մասին տեղեկատվական քարտզարշավ

Ք.Բաթումի մունիցիպալիտետի քաղաքապետարանի կողմից պլանավորված ակտիվությունը տարվա ընթացքում չի իրականացվել:

1.3.3.5 Վրաստանի եվրոպական և Եվրատլանտյան ինտեգրման գործընթացի մասին տեղեկատվական հանդիպումներ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ

ՆԱՏՕ-ի և Եվրամիության մասին տեղեկատվական կենտրոնը, 2019 թվականին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ քաղաքացիների համար անցկացրեց շուրջ 125 միջոցառում, որոնց շրջանակներում մոտավորապես 3400 մարդու հետ կայացավ ուղիղ հաղորդակցություն:

ՆԱՏՕ-ի և Եվրամիության մասին տեղեկատվական կենտրոնը սիստեմատիկաբար իրականացնում էր տարբեր տեսակի ակտիվություն, այդ թվում, հանրային միջոցառումներ, սեմինարներ, տեղեկատվական հանդիպումներ և քարտզարշավներ, բաց բանավեճեր, կրթական-ճանաչողական միջոցառումներ և էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին տեղեկատվություն էր հաղորդում երկրի Եվրոպական և Եվրատլանտյան ինտեգրման նշանակության, Եվրամիության հետ անանցազրային տեղաշարժի, ասոցիացման համաձայնագրի և ազատ առևտրի մասին: Հանդիպումներ տեղի

ունեցան ինչպես Թբիլիսիում, այնպես էլ էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող մունիցիպալիտետներում. Գարդաբանի, Մառնեուլի, Բոլնիսի, Դմանիսի, Թեթրիժդարո, Ծալկա, Ախալցխե, Ախալքալաքի, Նինոծմինդա: Հանդիպումներ կայացան Պանկիսի կիրճում, Լագոդեխում, Սագարեջոյում և Թելավում: Տեղեկատվական կենտրոնը տարվա ընթացքում հանդիպումներ անցկացրեց էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների, տարբեր թիրախային լսարանների հետ. ուսուցիչների, աշակերտների, ուսանողների, տեղական ինքնակառավարման ներկայացուցիչների, մեդիայի և տեղի բնակչության հետ: 1.3.3.5 Ակտիվության համապատասխան, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման գործընթացի մասին կայացավ 21 միջոցառում և ուղիղ հաղորդակցության ճանապարհով շուրջ 1200 շահառուի հաղորդվեց տեղեկատվություն Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման գործընթացի և դրանից բխող շահի մասին:

Հավելյալ միջոցառում.

ՆԱՏՕ-ի և Եվրամիության մասին տեղեկատվական կենտրոնը Ամերիկայի Միացյալ Նահանգների պետական դեպարտամենտի ֆինանսական աջակցությամբ, 2019 թվականից իրականացնում է մասշտաբային նախագիծ «Արևմտյան ինտեգրման գործընթացի մասին» տեղեկացվածության և ընդգրկվածության աճ Վրաստանի տարածաշրջաններում»: Այն նպատակաուղղված է Վրաստանի բոլոր տասը տարածաշրջանների բնակչությանը երկրի եվրոպական և եվրատլանտյան կառույցներին ինտեգրման հարցերով օբյեկտիվ և համապարփակ տեղեկատվության հաղորդմանը կենտրոնի տարածաշրջանային հնարավորությունների ուժեղացման ճանապարհով և վերևում նշված համայնքների մեդիա լուսաբանման մեծացմանը տարածաշրջանային հաղորդումների ցանցի, տպագիր և առցանց մեդիայի միջոցով: Նշված նախագծի շրջանակներում, էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջաններում սիստեմատիկաբար իրականացվում են տեղեկատվական հանդիպումներ: Ինչ վերաբերում է զանգվածային լրատվության միջոցներով լուսաբանման մեծացմանը, էթնիկ փոքրամասնություններով բնակվող տարածքներում աշխատող հինգ տեղական գործընկեր զանգվածային լրատվական միջոցները (Քվեմո Քարթլիում և Սամցխե-Ջավախեթիում) 2019 թվականին Վրաստանի արևմտյան ինտեգրման հարցերի կապակցությամբ պատրաստեցին 48 բովանդակային արտադրանք:

Ք. Թեթրիժդարոյում հասարակական սերվիսների մատչելիության բարելավման նպատակով կառուցվեց և բացվեց հասարակական կենտրոն, ինչպես նաև ընթանում է շտապ-բժշկական օգնության կենտրոնի շինարարություն:

1.3.3.6 «Երիտասարդ եվրոպացի դեսպաններ» նախագծի շրջանակներում Վրաստանի եվրոինտեգրման գործընթացի մասին ToT վարժանքի անցկացում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ուսանողների համար

«Երիտասարդ եվրոպացի դեսպաններ» նախագիծը Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետական նախարարի գրասենյակի և արտաքին գործերի նախարարության ՆԱՏՕ-ի և Եվրամիության մասին տեղեկատվական կենտրոնի և Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի համատեղ նախաձեռնությունն է, որն իրականացվում է հանդուրժողականության, քաղաքացիական գիտակցության և ինտեգրման աջակցության ծրագրի (PITA) շրջանակներում Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսավորմամբ: Նախագծի նպատակը ներկայացնում է Վրաստանի ՆԱՏՕ և Եվրամիություն ինտեգրման գործընթացի մասին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծ բնակվող տարածաշրջաններում (Քվեմո Քարթլի, Սամցխե-Ջավախեթի, Կախեթի) տեղեկատվության մատչելիությունը նրանց հասկանալի լեզուներով: Այդ նպատակով, հաշվետու տարվա հոկտեմբեր ամսին, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ 20 երիտասարդի համար ինչպես Թբիլիսիից, այնպես էլ Քվեմո Քարթլիից, Կախեթից, Սամցխե-Ջավախեթիից, անցկացվեց մարզիչների դպրոց, որի շրջանակներում մասնակիցները հանդիպեցին պետական կառուցվածքների ներկայացուցչների և հրավիրված փորձագետների հետ, ստացան տեղեկատվություն Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման հարցերի, եվրոպական արժեքների, երկրի ապագա հեռանկարների և ձգտումների մասին: Վարժանքի արդյունքում, նախագծի մասնակիցները դարձան հասակակից լուսավորչներ/մուլտիպլիկատորներ, ովքեր իրենց տարածաշրջաններում տարածում են տեղեկատվությունը և անց են կացնում տեղեկատվական հանդիպումներ հետևյալ թիրախային խմբերի՝ ծնողների և մանկավարժների, դպրոցների աշակերտության հետ՝ Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման նշանակության և արևմտյան արժեքների մասին:

1.3.3.7 «Երիտասարդ եվրոպացի դեսպաններ» նախագծի շրջանակներում Վրաստանի եվրոինտեգրման գործընթացի մասին տեղեկատվական հանդիպումների անցկացում

Նախագծի նպատակ է ներկայացնում Վրաստանի ՆԱՏՕ և Եվրամիություն ինտեգրման գործընթացի մասին էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջաններում (Քվեմո Քարթլի, Սամցխե-Ջավախեթի, Կախեթի) տեղեկատվության մատչելիությունը նրանց հասկանալի լեզուներով: Երիտասարդներից բաղկացած մոբիլ խումբը (20 մասնակից), 39 մունիցիպալիտետի 152 գյուղերում անցկացրեց 179 հանդիպում, որին մասնակցեց էթնիկ

փոքրամասնությունների 3376 ներկայացուցիչ՝ ծնողներ, մանկավարժներ և աշակերտներ: Տարածվեցին համապատասխան տեղեկատվական նյութեր:

1.3.3.8 Էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջաններում, քաղաքացիական ինտեգրման ուղղությամբ պետական քաղաքականությանը ծանոթացում/Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների իրավունքներին ծանոթության նպատակով հանդիպումների անցկացում

Հաշվետու ժամանակաշրջանում պետական նախարարը և գրասենյակի ներկայացուցիչները Էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջանների բնակչության հետ ինտենսիվորեն անց էին կացնում հանդիպումներ՝ պետության քաղաքականությանը և իրավունքներին ծանոթացնելու նպատակով (անցկացվեց 10 հանդիպում):

1.3.3.9 «Պանկիսի կիրճի հանրային դպրոցների ուսուցիչների և տնօրենների՝ Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման մասին գիտակցության բարձրացման նպատակով» նախագծի շրջանակներում միջոցառումների իրականացում

Անցկացվեց միջոցառում, որի շրջանակներում նախագծի մասնակից ուսուցիչները ինչպես վարչապետին, այնպես էլ Եվրամիության դեսպանին փոխանակեցին ուսումնական այցի շրջանակներում ստացած փորձը: Բացի դրանից, մանկավարժները, ուսումնական այցի ժամանակ ստացած գիտելիքի և փորձի հիման վրա անցկացրեցին բաց դասեր «Եվրոպան իմ դասին» վերնագրով: Նախագծի մասնակից մանկավարժները մասնակցեցին «Եվրոպայի օրեր 2019»-ին:

1.3.3.10 Էթնիկ փոքրամասնություններով բնակվող վարչական միավորներում արդարադատության տների քանակի աճին օժանդակություն, արդարադատության տների շինարարությանը աջակցություն (համապատասխան փաստաթղթերի պատրաստում, հողատարածքների հատկացում)

Հաշվետու ժամանակաշրջանում Վրաստանի Արդարադատության նախարարության կողմից իրականացված գործունեություն. Էթնիկ փոքրամասնություններով բնակվող վարչական միավորներում արդարադատության տների շինարարությանը աջակցության տեսանկյունով, 2019 թվականի դեկտեմբերի 27-ին բացվեց Բոլնիսի արդարադատության տան մասնաճյուղը:

1.3.3.11 Հասարակական սերվիսների և ընթացիկ պետական ծրագրերի մասին տեղեկատվական նյութերի (այդ թվում, Էթնիկ փոքրամասնությունների լեզուներով) տարածում տարածաշրջաններում

2019 թվականի ընթացքում, Վրաստանի մասշտաբով, այդ թվում էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջաններում, հասարակական կենտրոնների միջոցով տարածվեց 74 450 բրոշյուր, որոնք վերաբերում էին Եվրամիության երկրներում առանց այցեհրավերի տեղաշարժվելու հարցերին: Բացի դրանից, 2019 թվականին (հոկտեմբերին) էթնիկ փոքրամասնություններով բնակվող գյուղերում (Գումբուրդոյի, Փոկայի, Բարալեթի, Սադախլոյի, Կազրեթի, Յորմուղանլոյի, Կաբալայի, Մարտոդոփի, Սարթիճալայի հասարակական կենտրոններ) տարածվեցին տեղեկատվական նյութեր Հանրային ռեեստրի-բիզնես ռեեստրի նոր էլեկտրոնային սերվիսների մասին, մասնավորապես, 7 000 օրինակ տրիպլետ հայերեն և ադրբեջաներեն լեզուներով: Նշված տրիպլետները բաժանվեցին նաև վրացալեզու գյուղերում (հասարակական կենտրոններում): Այս տեսակետից նշանակալից է նաև այն, որ տարվա ընթացքում Վրաստանի մասշտաբով բացվեցին լրացուցիչ հասարակական կենտրոններ, այդ թվում, էթնիկ փոքրամասնություններով խիտ բնակվող տարածաշրջաններում, մասնավորապես Ղաչաղան գյուղում:

1.3.3.12 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ մեղադրյալ/դատապարտյալների իրազեկում նրանց իրավունքների մասին

Տարվա ընթացքում մեղադրյալների/դատապարտյալների իրավունքների մասին պատժա-կատարողական համակարգում վարժանք անցավ 278 շահառու, այդ թվում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Իրավունքներին ծանոթանալիս, լեզվական պատենշի դեպքում, իրականացվում էր շահառուի ապահովումը թարգմանչի ծառայությունից: Դրա հետ միասին, պատժա-կատարողական հիմնարկությունների սոցիալական աշխատողներն ունեն մեղադրյալների/դատապարտյալների իրավունքների էլեկտրոնային տարբերակը 5 լեզվով (անգլերեն, ռուսերեն, հայերեն, ադրբեջաներեն, թուրքերեն) և պահանջի դեպքում տպագիր տեսքով փոխանցում են մեղադրյալ/դատապարտյալին:

Խնդիր. 1.3.4. Հանրային վարչարարությունում և հանրային ծառայությունում էթնիկ փոքրամասնությունների ընդգրկման աճ և մասնագիտական զարգացում

1.3.4.1-1.3.4.2 Ստաժավորման 1+4 ծրագրի իրականացում

Շարունակվեց էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար «1+4» ծրագրի շահառուների ստաժավորման ծրագրի իրականացումը հանրային հաստատություններում: Նշված ծրագիրը, որը 2017 թվականից իրականացվում է պետական նախարարի գրասենյակի նախաձեռնությամբ, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդության շրջանում օգտվում է ժողովրդականությամբ: Ծրագիրն անցնելուց հետո երիտասարդները սկսեցին իրենց մասնագիտական կարիերան ոչվրացալեզու դպրոցներում, տեղական

ինքնակառավարություններում և այլ ինստիտուտներում: Ծրագրի նպատակն է օժանդակել երիտասարդներին ստանալու համապատասխան փորձ և զարգացնելու մասնագիտական ունակություն-հմտությունները: 2019 թվականի ընթացքում ստաժավորում անցավ 87 երիտասարդ: Մինչև օրս ստաժավորման ծրագրին մասնակցել է 298 երիտասարդ:

1.3.4.3 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների աշխատանքային պրակտիկայի ապահովում

Ք.Բաթումի մունիցիպալիտետի քաղաքապետարանի կողմից պլանավորված ակտիվությունը տարվա ընթացքում չի իրականացվել:

1.3.4.4 Էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող վարչական միավորներում նահանգապետի, մունիցիպալիտետների և ուսումնական հաստատությունների ղեկավարների հանդիպումների կազմակերպում հանրային ծառայությունների գործունեությանը ծանոթության և էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների աշխատանքային զբաղվածության նպատակով

2019 թվականին Սամցխե-Ջավախեթի պետական լիազորը և վարչության աշխատակիցները 7 անգամ հանդիպում ունեցան Սամցխե-Ջավախեթի համալսարանի պրոֆեսոր-մանկավարժների և էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ուսանողների հետ: Հանդիպումների նպատակն էր երկրում ընթացող գործընթացներին, ինչպես նաև հանրային ծառայություններում ընդունելության ընթացակարգերին և պետական լեզվի ուսուցման ծրագրին ծանոթությունը:

1.3.4.5 Հանրային ծառայություններում զբաղված էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ հանրային գործիչներին տարբեր ուսումնական ծրագրերում ընդգրկման ապահովում

2013 թվականից Ախալքալաքում գործում է Զուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցի Ախալքալաքի տարածաշրջանային ուսումնական կենտրոնը: Կենտրոնը տեղում իրականացնում է պետական լեզվի ուսուցման ծրագիր, իսկ 2015 թվականից մեկնարկեց նաև ճյուղային ծրագրերի ուսուցումը:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀԻԻԱ Զուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցի կողմից հանրային կառավարման և վարչարարության ծրագրով վերապատրաստվել է էթնիկ փոքրամասնությունների 30 ներկայացուցիչ:

Միջանկյալ նպատակ. 1.4 Քաղաքական որոշումների ընդունման գործընթացում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցության խթանում

Խնդիր 1.4.1 Էթնիկ փոքրամասնությունների կողմից ձայն տալու և տեղեկացված ընտրություն կատարելու ապահովում

2019 թվականի մայիսի 19-ին, ընտրական վարչությունն անցկացրեց Վրաստանի խորհրդարանի (I և II փուլ) և սակրեբուլոնների՝ ժողովրդական ժողովների միջանկյալ, ինչպես նաև մունիցիպալիտետների քաղաքապետների արտահերթ ընտրություններ, այդ թվում Մառնեուլիի մունիցիպալիտետի քաղաքապետի արտահերթ և Ախմետայի մունիցիպալիտետի սակրեբուլոյի միջանկյալ ընտրություններ:¹

1.4.1.1 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդության համար կրթական ծրագրերի իրականացում.

1. «Ընտրական զարգացման դպրոց» (18-24 տարեկան երիտասարդների համար),
2. «Ընտրություններ և երիտասարդ ընտրող» (Հանրային դպրոցների XI-XII դասարանների աշակերտների համար),
3. «Ուսումնական դասընթաց ընտրական իրավունքի ճյուղից» (Ախալցխիի համալսարանի ուսանողների համար),
4. «Ընտրական ադմինիստրատորի տեղեկատվական-ուսումնական դասընթացներ» (18 տարեկանից բարձր քաղաքացիների համար)

«Ընտրական զարգացման դպրոց» 18-24 տարեկան երիտասարդների համար

2019 թվականին, ԿՀՀ-ն և ՀԻԻԱ Ընտրական համակարգերի զարգացման, բարեփոխման և ուսուցման կենտրոնը (Ուսուցման կենտրոն), Եվրոպայի խորհրդի (CoE) և ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (IFES) աջակցությամբ, իրականացրեցին «Ընտրական զարգացման դպրոց» նախագծի հինգերորդ փուլը: Նախագծի գործողության տեսադաշտը ընդարձակվեց և անցկացվեց Թբիլիսիի 27 դպրոցում և 25 մունիցիպալիտետում²: Երրորդ տարին է դպրոցը գործում է Ախմետայի

¹ 2019 թվականի մայիսի 19-ին, անցկացվեցին ընտրություններ. Վրաստանի խորհրդարանի միջանկյալ ընտրություններ Վրաստանի խորհրդարանի 2016 թվականի հոկտեմբերի 8-ի ընտրությունների մեծամասնական ընտրական համակարգով՝ թիվ 1 մեծամասնական ընտրատարածքում, մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի 2017 թվականի հոկտեմբերի 21-ի ընտրություններ մեծամասնական ընտրական համակարգով Սագարեջոյի, Ախմետայի, Ադիգենի, Ջեստաֆոնի, Ճիաթուրայի, Տղիբուլի, Օղալտուբոյի և Օգուրգեթի մունիցիպալիտետների սակրեբուլոնների միջանկյալ ընտրություններ, Մառնեուլի, Ջեստափոնի, Ճիաթուրայի, Ջուգիդի և Խուլույի մունիցիպալիտետների քաղաքապետների արտահերթ ընտրություններ: Քաղաքացիները, մեծամասնական համակարգով ընտրեցին Վրաստանի խորհրդարանի մեկ անդամ, ութ մունիցիպալիտետի սակրեբուլոյի ութ անդամ և հինգ մունիցիպալիտետի հինգ քաղաքապետ:

² Ամբրուլաուրի, Ախալգորի, Ախալցխիսե, Ախմետա, Բաթումի, Բորջոմի, Գարդաբանի, Գորի, Գուրջաանի, Դուշեթի, Ջեստափոնի, Ջուգիդի, Թելավի, Մառնեուլի, Օգուրգեթի, Ռուսթավի, Սամտրեդիա, Մաչխերե, Սենակի, Սիդնալի, Փոթի, Քոբուլեթի, Քութաիսի, Խոնի, Խաշուրի:

մունիցիպալիտետում, որտեղ մասնակցություն ունեցան Պանկիսի կիրճում բնակվող երիտասարդները: Նշանակալից էր միջոցառումների անցկացումը էթնիկ փոքրամասնություններով խիտ բնակվող մունիցիպալիտետներում, մասնավորապես, Գարդաբանում, Ախալցխեում և Մառնեուլիում:

2019 թվականի հուլիսի 15-26 ժամանակաշրջանում իրականացվեց տասնօրյա ուսումնական դասընթաց 18-24 տարեկան երիտասարդների համար: Մասնակիցները ծանոթացան հետևյալ հարցերին. պետական ինստիտուտների սարքավորում, ուղիղ ժողովրդավարական ձևեր, ընտրությունների օրենսդրական կարգավորում, միջազգային սկզբունքներ, Եվրոպայի խորհրդարան, միջազգային կազմակերպություններ. գնում և ընտրական օգնություն, ընտրությունների պատմությունը և վիճակագրությունը Վրաստանում, 1919 թվականի հիմնադիր ժողովի ընտրություններ, ընտրական համակարգերը Վրաստանում, ընտրական վարչության մոդելներ, Վրաստանի ընտրական վարչություն, ընտրություններին ընդգրկված կողմեր, թափանցիկություն և հրապարակայնություն, ընտրական միջավայրի ինկլյուզիոնություն, գենդերային հավասարություն, գենդերը և ընտրությունները, ընտրողների գրանցում, նախընտրական ժամանակաշրջան, ընտրատեղամասի բացում, ընտրատեղամասի փակում (ամփոփում), ընտրական վեճեր, ընտրությունների հանրագումարում, ընտրական ցիկլի շրջապտույտի տեսություն:

Ուսումնական դասընթացը հաջողությամբ անցավ և վկայագիր ստացավ 463 երիտասարդ, այստեղից, 296 (64%) կին և 167 (36%) տղամարդ: Այդ թվում, էթնիկ փոքրամասնություններով բնակվող երեք տարածաշրջաններում և Ախմետայի մունիցիպալիտետում դասընթացը հաջողությամբ անցավ և վկայական ստացավ 62 երիտասարդ, այստեղից 36 (58%)-ը կին էր և 26 (42%)-ը՝ տղամարդ: Մանրամասն տեղեկատվությունը դիտե՛ք աղյուսակում (1):

Աղյուսակ 1.

Ընտրատարածք N	Մարզի անվանում	Արտոնագրվածների՝ վկայական ստացածների թվաքանակ	Կին	Տղամարդ
18	Ախմետա	16	10	6
21	Գարդաբանի	12	5	7
22	Մառնեուլի	19	10	9
37	Ախալցխե	15	11	4
Ընդամենը		62	36 (58%)	26 (42%)

«Ընտրական ադմինիստրատորի տեղեկատվական-ուսումնական դասընթացներ» 18 և բարձր տարիքի քաղաքացիների համար

«Ընտրական աղմինիստրատորի դասընթացներ - ընտրատեղամասային հանձնաժողովների պոտենցիալ անդամների համար» տեղեկատվական-ուսումնական նախագծի նպատակն է ընտրական հարցերի կապակցությամբ քաղաքացիական գիտակցության բարձրացումը, ինչը օժանդակում է ընտրական վարչությունում որակյալ կադրային ռեսուրսների ձևավորմանը: Ուսուցման կենտրոնը, մշակած ուսումնական ծրագրին համապատասխան, ապահովեց 153 մարզիչի վերապատրաստումը: Նախագծի համար մշակված նյութը թարգմանվեց հայերեն և ադրբեջաներեն լեզուներով: Ծրագիրը նաև ներառում էր ուսումնական մոդուլ սահմանափակ կարողություններ ունեցող անձանց ընտրական գործընթացին ընդգրկվածության հարցերի մասին:

Ուսումնական նախագծի I փուլն իրականացվեց 2019 թվականի սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 25-ը ընկած ժամանակաշրջանում, Վրաստանի 64 մունիցիպալիտետում, իսկ II փուլն իրականացվեց 2019 թվականի նոյեմբերի 25-ից դեկտեմբերի 17-ն ընկած ժամանակաշրջանում³: Նախագիծը հաջողությամբ անցավ և վկայական ստացավ 7 751 անձ, ընդ որում՝ 6273 (81%) կին և 1478 (19%) տղամարդ: Ինչ վերաբերում է էթնիկ փոքրամասնություններով բնակվող տարածաշրջաններին, նախագիծն իրականացվեց էթնիկ փոքրամասնություններով բնակվող 12 մունիցիպալիտետում: Մանրամասն տեղեկատվությունը դիտե՛ք աղյուսակում (2):

Աղյուսակ 2.

Ընտրատարածքի N	Մարզի անվանում	Արտոնագրվածների՝ վկայական ստացածների թվաքանակ	Կին	Տղամարդ
11	Սագարեջո (I փուլ)	100	88	12
11	Սագարեջո (II փուլ)	28	25	3
15	Լազոդեխի	86	63	23
17	Թելավի	89	82	7
21	Գարդաբանի	108	91	17
22	Մառնեուլի (I փուլ)	208	59	149
22	Մառնեուլի (II փուլ)	74	14	60

³Նախագծի II փուլն իրականացվում է 8 մունիցիպալիտետում (Թբիլիսի, Քութայսի, Ռուսթավի, Մառնեուլի, Սագարեջո, Գորի, Զուգդիդի, Բաթումի):

	փուլ)			
23	Բոլնիսի	127	65	62
24	Դմանիսի	100	49	51
25	Ծալկա	86	56	30
26	Թեթրիծղարո	81	73	8
37	Ախալցխի	81	70	11
40	Ախալքալաքի	169	83	86
41	Նինոծմինդա	100	55	45
Ընդամենը՝		1437	873 (60.75%)	564 (39.25%)

«Ընտրությունները և երիտասարդ ընտրողը» հանրային դպրոցների XI-XII դասարանների աշակերտների համար

Ընտրական գիտակցության բարձրացման և քաղաքացիական պատասխանատվության աճի նպատակով, իրականացվեց տեղեկատվական-ուսումնական նախագիծ՝ «Ընտրությունները և երիտասարդ ընտրողը»: Ուսումնական դասընթացը ներառում էր հետևյալ հարցերը. ընտրությունների պատմական էքսկուրս և արդիականություն, ընտրությունները և ժողովրդավարությունը, ընտրական վարչություն և ընտրող, ընտրություններին ընդգրկված այլ կողմեր:

Նախագիծն իրականացվեց 64 մունիցիպալիտետի 145 հանրային դպրոցում, այդ թվում էթնիկ փոքրամասնություններով բնակվող 12 մունիցիպալիտետում ⁴ գտնվող 24 հանրային դպրոցում: Ուսումնական դասընթաց անցավ XI-XII դասարանների 2 763 աշակերտ, այդ թվում էթնիկ փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջանների 457 աշակերտ:

«Ուսումնական դասընթաց ընտրական իրավունքի ճյուղից» Ախալցխի համալսարանի ուսանողների համար

Ախալցխի համալսարանի ուսանողների համար իրականացվեց ուսումնական դասընթաց ընտրական իրավունքի ճյուղից: Ծրագիրը նպատակամղված է ընտրական իրավունքից ուսանողների անհրաժեշտ մասնագիտական գիտելիքի խորացման, նրանց գործնական ունակություն-սովորությունների զարգացման և քաղաքացիական գիտակցության բարձրացման աջակցությանը: Ուսումնական դասընթացի շրջանակներում, ուսանողները ծանոթացան հետևյալ հարցերին. ընտրություններ հասկացություն, ընտրությունների

⁴ Մազաթեզո, Լազոդեխի, Թելավի, Գարդաբանի, Մաոնեուլի, Բոլնիսի, Թեթրիծղարո, Դմանիսի, Ծալկա, Ախալցխի, Ախալքալաքի, Նինոծմինդա:

տեսակներ և պարբերականություն, ընտրական համակարգեր, Վրաստանի ընտրական իրավունքի աղբյուրներ և սկզբունքներ, ընտրական գործընթաց և ընտրական գործընթացի կառավարման մարմին, Վրաստանի ընտրական վարչության իրավասուներ և աշխատանքի կարգ, ընտրություններին ընդգրկված կողմեր, ընտրողների գրանցում, նախընտրական ընթացակարգ (քարոզչություն), նախընտրական քարոզարշավ վարելու տեղեկատվական ապահովում, ընտրությունների ֆինանսավորում, քվեարկության ժամանակ և վայր, ընտրատեղամասի բացում, մինչև քվեարկությունը անցկացվելիք ընթացակարգեր, քվեարկության գործընթաց, ընտրատեղամասի փակում, քվեարկության արդյունքների հանրագումարում, քվեարկության և ընտրության արդյունքների հանրագումարում/որոշում, ընտրական վեճեր, Վրաստանի նախագահի ընտրություններ, Վրաստանի խորհրդարանի ընտրություններ, Աճարայի Ինքնավար Հանրապետության Գերագույն խորհրդի ընտրություններ, ինքնակառավարող համայնքների և ինքնակառավարող քաղաքների ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի ընտրություններ, ինքնակառավարվող քաղաքի քաղաքապետի (ինքնակառավարվող համայնքի գամգեբելի) ընտրություններ, հանրաքվե, պլեբիսցիտ: Ուսումնառություն անցավ 23 ուսանող:

1.4.1.2 Փոքր դրամաշնորհների շնորհում քաղաքացիական կազմակերպություններին և փոքրամասնությունների համայնքներին՝ ընտրությունների նշանակության մասին տեղեկատվական քարոզարշավ վարելու և ընտրական մշակույթը ուժեղացնելու նպատակով

2019 թվականին ԿՀՀ-ն սահմանեց ֆինանսավորման առաջնահերթային ուղղությունները և ԿՀՀ-ի կարգադրության հիման վրա, ուսումնական կենտրոնը 2019 թվականի փետրվարի 18-ին և հունիսի 25-ին հայտարարեց երկու դրամաշնորհային մրցույթ:

2019 թվականի փետրվարի 18-ին հայտարարված դրամաշնորհային մրցույթի համար ԿՀՀ-ն սահմանեց ֆինանսավորման հետևյալ առաջնահերթային ուղղությունները⁵:

Առաջին ուղղություն–ընտրողների իրազեկում 2019 թվականի մայիսին անցկացվելիք Վրաստանի խորհրդարանի միջանկյալ, մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի միջանկյալ և մունիցիպալիտետի քաղաքապետի արտահերթ ընտրությունների մասին,

Երկրորդ ուղղություն–երիտասարդ ընտրողների ընտրական գիտակցության և քաղաքացիական մշակույթի բարձրացման աջակցություն,

⁵ԿՀՀ-ի 2019 թվականի փետրվարի 8-ի №2/2019 կարգադրությամբ սահմանվեցին դրամաշնորհային մրցույթի ֆինանսավորման ուղղությունները:

Ուսումնական կենտրոնը, դրամաշնորհային մրցութային հանձնաժողովի որոշմամբ, առաջին ուղղությամբ ֆինանսավորեց ոչկառավարական կազմակերպությունների չորս նախագիծ, որոնք իրականացվեցին Մառնեուլի մունիցիպալիտետում: Ֆինանսավորված նախագծերի ընդհանուր բյուջեն կազմեց 79660 լարի, իսկ երկրորդ ուղղությամբ ֆինանսավորեց ոչկառավարական կազմակերպությունների չորս նախագիծ, որոնք իրականացվեցին Քվեմո Քարթլիի և Սամցխե-Ջավախեթի տարածման տարածքում: Ֆինանսավորված նախագծերի ընդհանուր բյուջեն կազմեց 119 852 լարի:

2019 թվականի հունիսի 25-ին հայտարարված դրամաշնորհային մրցույթում, որպես ֆինանսավորման առաջնահերթային ուղղություն ԿՀՀ-ն սահմանեց ընտրողների կրթությունը՝ ընտրական և քաղաքացիական մշակույթի զարգացման համար⁶:

Ուսուցման կենտրոնը, դրամաշնորհային մրցութային հանձնաժողովի որոշմամբ, էթնիկ փոքրամասնություններով խիտ բնակվող տարածաշրջաններում (Քվեմո Քարթլի, Կախեթի և Սամցխե-Ջավախեթի) բնակվող ընտրողների իրազեկման նպատակով, ֆինանսավորեց ոչկառավարական կազմակերպությունների ութ նախագիծ, որոնց ընդհանուր բյուջեն կազմեց 236 790 լարի: Նախագծերն իրականացվեցին 2019 թվականի սեպտեմբերի 25-նոյեմբերի 25 ժամանակաշրջանում:

Հավելյալ միջոցառում

2019 թվականի մայիսի 19-ին Մառնեուլիի մունիցիպալիտետի քաղաքապետի արտահերթ և Ախմետայի մունիցիպալիտետի սակրեբուլոյի միջանկյալ ընտրությունների համար, ԿՀՀ-ն իրականացրեց հետևյալ գործողությունները.

Մառնեուլիի թիվ 22 տարածքային ընտրական հանձնաժողովում ստեղծվել էր 90 ընտրական տեղամաս. վրաց-ադրբեջանական՝ 78, վրաց-հայկական՝ 8, վրաց-հայ-ադրբեջանական՝ 4: Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրատեղամասային հանձնաժողովների անդամների թվաքանակը կազմեց 307 (ադրբեջանալեզու՝ 262, հայալեզու՝ 45), ովքեր անցան ինտենսիվ ուսումնական դասընթաց: Նրանց համար ադրբեջաներեն և հայերեն լեզուներով թարգմանվել էին ընտրական փաստաթղթերը և ձեռնարկային հրահանգները:

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրողների համար ԿՀՀ-ն ադրբեջաներեն լեզվով թարգմանեց մեկ տեղեկատվական տեսահոլովակ «Քվեարկության օրվա ընթացակարգեր»: Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրողները հնարավորություն ունեին ընտրողների միասնական ցուցակում անձնական և ընտանիքի

⁶ԿՀՀ-ի 2019 թվականի հունիսի 17-ի №128/2019 կարգադրությամբ սահմանվեցին դրամաշնորհային մրցույթի ֆինանսավորման ուղղությունները:

անդամների տվյալները, ընտրատեղամասի տեղադրության վայրը ճշտել վերստուգելով ԿԸՀ-ի կայք-էջի միջոցով:

Մառնեուլի մունիցիպալիտետում բնակվող հայալեզու և ադրբեջանալեզու ընտրողների քվեարկությանը մասնակցությանը օժանդակելու նպատակով, թարգմանվեցին և տպագրվեցին. ընտրական քվեարկության թերթիկը (վրացերեն-հայերեն, վրացերեն-ադրբեջաներեն և վրացերեն-հայերեն-ադրբեջաներեն լեզուներով), ընտրողների միասնական ցուցակը, քվեաթերթիկը լրացնելու կարգը և քվեարկությանը մասնակցությունն արտացոլող պաստառ:

2019 թվականին, Վրաստանի մասշտաբով իրականացվեց տեղեկատվական քարոզարշավ «Զրուցում ենք ընտրողների հետ»: Քարոզարշավի շրջանակներում, հասարակական կուտակման տեղերում, մունիցիպալիտետների կենտրոններում և գյուղերում ընդհանուր առմամբ անցկացվեց 214 հանդիպում, այդ թվում էթնիկ փոքրամասնություններով խիտ բնակվող մունիցիպալիտետներում և գյուղերում՝ 14 հանդիպում:

Ընտրությունների համար, «Գտի՛ր քո անձը, գտի՛ր քո տեղամասը» գործողության շրջանակներում, Մառնեուլիի թիվ 22 տարածքային ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչները և կամավորները ընտրողների միասնական ցուցակում անձնական տվյալների վերստուգման նպատակով, Մառնեուլիի մունիցիպալիտետի կենտրոնում և գյուղերում⁷ անցկացրեցին 10 գործողություն, իսկ Ախմետայի թիվ 18 տարածքային ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչները Ախմետայի մունիցիպալիտետի սակրեբուլոյի միջանկյալ ընտրությունների համար անցկացրեցին երկու գործողություն Խալաժանի և Օմալո գյուղերում բնակվող քիստ ընտրողների հետ: Ընտրական վարչության ներկայացուցիչները, ժամանակակից տեխնոլոգիայի կիրառմամբ (պլանշետ) առաջարկեցին ընտրողների միասնական ցուցակում սեփական և ընտանիքի անդամների տվյալները վերստուգելու սերվիս: Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները գրանցման տեղի համաձայն տարածեցին հետևյալ ֆլայերները. քվեարկության օրվա ընթացակարգերը և ԿԸՀ-ի նախագահի գրավոր դիմումը այն երիտասարդներին, ովքեր առաջին անգամ են մասնակցում ընտրություններին: Դրա հետ միասին, Մառնեուլիի մունիցիպալիտետի քաղաքապետի արտահերթ ընտրությունների անցկացման գործողությունների շրջանակներում տարածված ամբողջ տեղեկատվական նյութը թարգմանվել էր հայերեն և ադրբեջաներեն:

⁷Գործողություններ կայացան Մառնեուլիի մունիցիպալիտետի հետևյալ գյուղերում. Դիզիլաջը, Շահումյան ավան, Դուլարի, Կապանախչի, Ալգեթի, Շուլավերի, Մադախլո, Մերեթելի, Թամարիսի:

Տեղեկատվական քարոզչության շրջանակներում, 2019 թվականին ԿԸՀ-ի նախաձեռնությամբ, առաջին անգամ ուսուցման կենտրոնի կողմից դրամաշնորհային մրցույթի շրջանակներում ֆինանսավորված ոչկառավարական և տարածքային ընտրական հանձնաժողովների համատեղ համագործակցությամբ, իրականացվեցին հանդիպումներ երիտասարդ ընտրողների հետ: Հանդիպման նպատակը ներկայացնում էր երիտասարդության իրազեկումը ընտրությունների և ընտրական իրավունքների, ընտրական վարչության կողմից առաջարկված սերվիսների և կրթական ծրագրերի մասին: Մառնեուլիի տարածքային ընտրական հանձնաժողովների ներկայացուցիչները անցկացրեցին չորս տեղեկատվական հանդիպում, որին մասնակցեց շուրջ 90 անձ: Նման հանդիպումներ անցկացրեցին Թերթիձղարոյի, Գարդաբանի, Ախմետայի և Նինոծմինդայի ընտրատարածքների հանձնաժողովների ներկայացուցիչները, որոնց ընդհանուր առմամբ մասնակցեցին շուրջ 100 երիտասարդներ:

ԿԸՀ-ն կանոնավորապես անց է կացնում բաց դռների օրեր և շահագրգիռ անձանց մատուցում է տեղեկատվություն ընտրական վարչության, ընտրական գործընթացների կազմակերպման և ԿԸՀ-ի գործունեության մասին: Նշված ծրագրի շրջանակներում, Ախալքալաքի և Նինոծմինդայի մունիցիպալիտետներում բնակվող 36 երիտասարդի համար ԿԸՀ-ում անցկացվեց բաց դռների օր: Ծրագրի շրջանակներում, տեղի ունեցավ սեմինար «Ընտրությունները և երիտասարդ ընտրողը» վերնագրով և կազմակերպվեց նմանակված քվեարկություն:

1.4.1.3 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների քաղաքացիական գիտակցության բարձրացման նպատակով իրավասության շրջանակներում երկրամասային վարչության ընդգրկում

Սամցխե-Ջավախեթի երկրամասային վարչության ծառայությունները ակտիվորեն համագործակցում են տարածաշրջանում գործող լրատվական միջոցների հետ: Ինչպես նաև, անսահմանափակ է հանրային լրատվության տրամադրումը վարչությունից: Ակտիվ է ընդգրկվածությունը կենտրոնական հաստատությունների և ոչկառավարական սեկտորի կողմից կազմակերպված այն միջոցառումներին, որոնք նվիրված են էթնիկ փոքրամասնությունների կարիքների լուծման և նրանց քաղաքացիական ակտիվության բարձրացման խնդիրներին: Տարվա ընթացքում անցկացվեց մոտավորապես 20 հանդիպում համապատասխան թեմայով:

1.4.1.4 Երկրամասային վարչությունում «Բաց դռների» օրվա կազմակերպում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին վարչության գործունեությանը և էթնիկ

փոքրամասնությունների հիմնադրույթներին ծանոթության նպատակով – տեղեկատվություն չկա

1.4.1.5 Մունիցիպալիտետներում բյուջեների հանրային քննարկմանը և տարբեր միջոցառումների պլանավորմանը-անցկացմանը էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ընդգրկման ապահովում

Հաշվետու ժամանակաշրջանում, Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանի մունիցիպալիտետներում, հանրային քննարկման ռեժիմով տեղի էր ունենում բյուջեների կատարման և պլանավորման գործընթացում բնակչության ընդգրկման ապահովում, նախագծային առաջարկությունների պատրաստում, ինչպես նաև բնակչության հետ հանդիպումներ երկրամասային վարչություններին առընթեր գործող Սամցխե-Ջավախեթի զարգացման ռազմավարության գործնական պլանի մշակման նպատակով ստեղծված աշխատանքային խմբերում, որոնցում ընդգրկված են մունիցիպալիտետների ներկայացուցիչները, այդ թվում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներ:

Միջանկյալ նպատակ. 1.5. Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար զանգվածային լրատվության միջոցների և տեղեկատվության մատչելիության բարելավում

Խնդիր.1.5.1 Էթնիկ փոքրամասնությունների լեզուներով հաղորդումների ծրագրերի և էլեկտրոնային/տպագիր մեդիայի մատչելիության ապահովում

Շարունակվեց ոչվրացալեզու տպագիր լրատվամիջոցներին օժանդակությունը: Տարվա ընթացքում պետության աջակցությամբ հրատարակվեցին հայալեզու ամենշաբաթյա «Վրաստան» թերթը (102 համար, 3500 տպաքանակ) և ադրբեջանալեզու ամենշաբաթյա «Գուրջիստան» թերթը (98 համար, 2000 տպաքանակ): Լրագրերը տարածվում են ինչպես Թբիլիսիում, այնպես էլ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով խիտ բնակվող տարածաշրջաններում, պատժա-կատարողական հիմնարկություններում:

1.5.1.1 Բնապահպանության և գյուղատնտեսության թեմատիկայի մասին տարածաշրջանային հեռուստատեսային հաղորդումներում խոսնակների մասնակցություն

Վրաստանի բնապահպանության և գյուղատնտեսության նախարարության կողմից մշակվեց և տարածաշրջանային հաղորդումներում տարածվեց մեկ տեղեկատվական տեսահոլովակ, ագրոապահովագրության ծրագրի մասին պատրաստված 3 գրաֆիկական հոլովակ 2 ամսվա ընթացքում պտտվում էր Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում tok tv-ով և Քվեմո Քարթլիի տարածաշրջանում Մառնեուլիի հեռուստատեսության և 4-րդ ալիքով:

1.5.1.2 Կենդանիների հիվանդությունների և բուսական վնասարար հիվանդությունների մասին էթնիկ փոքրամասնությունների լեզուներով պատրաստված լրատվական բրոշյուրների տարածում

Վրաստանի բնապահպանության և գյուղատնտեսության նախարարությունը տարածեց 4 500 միավոր բրոշյուր, ֆլայեր և պաստառ, այդ թվում. 1500 միավոր ինֆեկցիոն հիվանդությունների մասին, 1500 միավոր կենդանիների գրանցման/նույնականացման մասին, 1 500 միավոր կաթի և դրա հետ կապված հիվանդությունների մասին:

Բրոշյուրները, ֆլայերները և պաստառները ներառում էին տեղեկատվություն հետևյալ ինֆեկցիոն հիվանդությունների մասին. կատաղություն, բրուցելյոզ, նոդուլար դերմատիտ, մանր եղջերավոր անասունների ժանտախտ, սիբիրախտ, ինչպես նաև Վրաստանում խոշոր եղջերավոր և մանր եղջերավոր անասունների նույնականացման/գրանցման մասին: Նյութը տարածվեց հայերեն և ադրբեջաներեն:

1.5.1.3 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով խիտ բնակվող տարածաշրջաններում տեղեկատվական նյութի (լրագրեր, բրոշյուրներ, բուկլետներ, տեղեկատվական տեսանյութ և այլն) տարածում

Քվեմո Քարթլիի և Սամցխե-Ջավախեթի տարածաշրջաններում տարածվեց տարբեր նախագծերի շրջանակներում պատրաստված 20000 բրոշյուր, բաժանվեց բնապահպանության և գյուղատնտեսության նախարարության կողմից հրատարակված ծրագիր (3 500 միավոր): Մոբիլային էքստենսիայի շրջանակներում տարածվեց 27 905 միավոր տեղեկատվական նյութ, այդ թվում 5 100 միավոր՝ Քվեմո Քարթլիում, 7 685 միավոր՝ Սամցխե Ջավախեթիում, 15 120 միավոր՝ Կախեթում:

Հավելյալ միջոցառում.

ՀԻԻԱ տեղեկատվական կենտրոնը 2019 թվականին ՆUSO-ի և Եվրամիության մասին էթնիկ փոքրամասնությունների լեզուներով պատրաստեց և տարածեց տեղեկատվական նյութեր, այդ թվում. «13 առասպել ՆUSO-ի մասին» (հայերեն և ադրբեջաներեն), «10 առասպել Եվրամիության մասին», տեղեկատվական բրոշյուրներ անանցագրային տեղաշարժի մասին (հայերեն և ադրբեջաներեն):

1.5.1.4 Առողջության և սոցիալական պահպանության պետական ծրագրերի մասին տեղեկատվության տարածում

Դիտե՛ք 1.3.3.1. Միջոցառման կատարման հաշվետվությունը

1.5.1.5 Աշխատանքի և զբաղվածության ոլորտում (Աշխատանքային իրավունքներ) իրականացված և ընթացիկ բարեփոխումների մասին գիտակցության բարձրացում

Զբաղվածության սերվիսների մասին գիտակցության բարձրացման և տեղեկատվության տարածման նպատակով, հաշվետու ժամանակաշրջանում Վրաստանի բռնագրավված տարածքներից տարհանվածների, աշխատանքի, առողջության և սոցիալական պաշտպանության նախարարությունն անցկացրեց վարժանք/սեմինար տարածաշրջանային և կենտրոնական մեդիայի և շահագրգռված կողմերի (տեղական ոչկառավարական/միջազգային կազմակերպություններ, սոցիալական գործընկերներ, գործատուներ) ներկայացուցիչների համար:

2019 թվականի ընթացքում Քվեմո Քարթլիի տարածաշրջանում, Մառնեուլիի և Դմանիսի մունիցիպալիտետներում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ կայացավ տեղեկատվական հանդիպում զբաղվածությանը օժանդակող ակտիվությունների, աշխատանքի անվտանգության և աշխատանքային իրավունքների վերաբերյալ, որին ներկա էին մունիցիպալիտետի ներկայացուցիչներ, ոչկառավարական կազմակերպություններ և այլ շահագրգիռ կողմեր (100-ից ավելի մասնակից): Մառնեուլիի մունիցիպալիտետի բոլոր համայնքների ղեկավարներին, Դմանիսի մունիցիպալիտետի վարչական մարմնի ղեկավարներին, ոչկառավարական կազմակերպության ներկայացուցիչներին փոխանցվեցին լրատվական բուկլետներ (մոտավորապես 150 հատ): Բացի դրանից, աշխատանքի պայմանների վերստուգիչ դեպարտամենտը կազմակերպություն/հիմնարկությունների վերստուգման ժամանակ պարբերաբար ապահովում էր տեղեկատվական բնույթի բուկլետների տարածումը:

1.5.1.6 Նահանգապետի վարչության կայք-էջին տարածաշրջանում ընթացող գործընթացների սիստեմատիկ լուսաբանում, մունիցիպալիտետի կայք-էջերին նյութերի տեղադրում

Ներկայումս Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանի պետական վարչության կայք-էջի աշխատանքը խաթարված է տեխնիկական թերությունների պատճառով, սակայն ակտիվորեն գործում է էջը սոցիալական ցանցում (Facebook), որտեղ սիստեմատիկաբար լուսաբանվում են տարածաշրջանի, այդ թվում էթնիկ փոքրամասնություններով բնակվող վարչական միավորներում ընթացող գործունեությունները:

1.5.1.7 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ մեղադրյալ/դատապարտյալների ապահովումը համապատասխան պետական հաղորդումով

Պատժա-կատարողական հաստատություններում էթնիկ փոքրամասնությունների լեզուներով հեռարձակվում են 20 հեռուստատեսային ալիքներ:

Միջանկյալ նպատակ. 1.6: Էթնիկ փոքրամասնությունների իրավունքների վերաբերյալ հասարակության իրազեկվածության ապահովում

Խնդիր.1.6.1 «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» Եվրոպական շրջանակային կոնվենցիայի կատարում և «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների մասին» Եվրոպական խարտիայի մասին հասարակության իրազեկվածության ապահովում

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով խիտ բնակվող տարածաշրջաններում անցկացված տեղեկատվական քարոզարշավի արդյունքում բարելավվեց էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների իրազեկվածության մակարդակը տարբեր հարցերի նկատմամբ: Մասնավորապես, մարդու իրավունքների, էթնիկ փոքրամասնությունների պաշտպանության, այդ թվում միջազգային մեխանիզմների մասին:

1.6.1.1 Ոչկառավարական կազմակերպությունների հետ համագործակցությամբ վարժանքների/հանդիպումների կազմակերպում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար Վրաստանի օրենսդրության, էթնիկ փոքրամասնությունների իրավունքների և «ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին Եվրոպական շրջանակային կոնվենցիային» ծանոթության նպատակով

Ք. Թբիլիսիի սակրեբուլոյի կողմից պլանավորված ակտիվությունը տարվա ընթացքում չի իրականացվել

1.6.1.2 Ք. Բաթումիի մունիցիպալիտետի քաղաքապետարանի, սակրեբուլոյի և «Բարեկամության տան» կազմակերպմամբ «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» Եվրոպական շրջանակային կոնվենցիայի և «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների մասին» Եվրոպական խարտիայի մասին հասարակության տեղեկացվածության նպատակով զանգվածային հաղորդակցության միջոցների, ոչկառավարական կազմակերպությունների և տարբեր աստիճանների կրթական հաստատությունների ընդգրկման ճանապարհով տեղեկատվական բնույթի հանդիպման անցկացում

Ք.Բաթումի մունիցիպալիտետի քաղաքապետարանի կողմից պլանավորված ակտիվությունը տարվա ընթացքում չի իրականացվել:

1.6.1.3 Տեղեկատվական հանդիպումներ ազգային փոքրամասնությունների պաշտպանության Եվրոպական շրջանակային կոնվենցիային ծանոթության նպատակով

Պետական նախարարի գրասենյակի կազմակերպմամբ և ընդգրկմամբ Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Բարթլիի և Կախեթի տարածաշրջաններում հանդիպումներ կայացան էթնիկ

փոքրամասնությունների իրավունքների և ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի և դրա կատարման մասին:

1.6.1.4 Մեղիայի հետ համագործակցության ուժեղացում, համապատասխան հաստատությունների և ոչկառավարական կազմակերպությունների համակարգում, համատեղ միջոցառումների պլանավորում

Սամցխե-Ջավախեթի երկրամասային վարչությունը և տարածաշրջանի մունիցիպալիտետները համագործակցում են ինչպես Ախալքալաքի և Նինոծմինդայի մունիցիպալիտետների, այնպես էլ երկրում գործող լրատվական գործակալությունների հետ:

Խնդիր. 1.6.2 Էթնիկ փոքրամասնությունների իրավունքների և հակախտրականության օրենսդրության ոլորտում հանրային ծառայողների և էթնիկ փոքրամասնությունների թիրախային խմբերի գիտակցության բարձրացում

1.6.2.1-1.6.2.2 Իրավապահների վերապատրաստում խտրականության հարցերում

- 2019 թվականի հունվարից մինչև օրս, Եվրոպայի խորհրդի և ԵԱՀԿ-ի աջակցությամբ, խտրականության, ատելությամբ մոտիվացված հանցանքի և ատելության լեզվի դեմ ուղղված միջոցառումների կապակցությամբ անցկացվեց տասը վարժանք (մեկը՝ ԵԱՀԿ-ի աջակցությամբ, յոթը՝ Եվրոպայի խորհրդի «Խտրականության, ատելությամբ մոտիվացված հանցանքի և ատելության լեզվի դեմ պայքար Վրաստանում» նախագծի շրջանակներում), որի ժամանակ վերապատրաստվեցին ներքին գործերի նախարարության կառուցվածքային և տարածքային միավորների մենեջերային դիրքում գտնվող 46 աշխատակից և 80 շարքային աշխատակից,
- Դրա հետ միասին, Եվրոպայի խորհրդի աջակցությամբ, 2019 թվականին Ներքին գործերի նախարարությունում արմատավորվեց ծրագիր, որի շրջանակներում քննիչներն անցնում են վերապատրաստում ատելությամբ մոտիվացված հանցանքների մասին: Վարժանք մոդուլ մշակվեց ինչպես պետական հիմնարկությունների, այնպես էլ թեմատիկ ոչկառավարական կազմակերպությունների ընդգրկմամբ,
- Ներքին գործերի նախարարության մարդու իրավունքների պաշտպանության և քննության որակի մոնիթորինգի դեպարտամենտի կողմից քննիչների համար մշակվեց հանձնարարական, որի նպատակն է խտրականության նշանով անհանդուրժելի մոտիվով կատարված հանցանքների հետաքննության որակի աճ և պրակտիկայի համակարգման նպատակով ղեկավար սկզբունքների արմատավորում: Փաստաթուղթը ներառում է վերը նշված կարգի հանցագործությունների նույնականացում և արդյունավետ հետաքննության հետ կապված թեմաներ: Մասնավորապես, հանձնարարականը միավորում է այնպիսի հարցեր, ինչպիսիք են. խտրականության

նշանով անհանդուրժելի մոտիվով կատարված հանցանքի և խտրականության նշանների պարզաբանում, լրատվություն նշված հանցանքի հավանական նշանակետերի և հետաքննության մեթոդոլոգիայի մասին, քննիչի տուժյալի հետ հարաբերության չափանիշներ, անհանդուրժելի մոտիվի հստակեցման նախատեսված հանգամանքներ և հարցեր, որոնց առաջադրումը պարտադիր է տուժվածին, վկային և մեղադրյալին հարցաքննության գործընթացում: Հանձնարարականում ներկայացված են ինչպես տեսական տեղեկատվություն, այնպես էլ գործնական օրինակներ, ինչը օժանդակում է քննիչների որակավորման բարձրացմանը, նրանց կողմից անհանդուրժելի մոտիվի նույնականացմանը և հետաքննությունը արդյունավետ վարելուն: Փաստաթղթի ստեղծման գործընթացում մարդու իրավունքների պաշտպանության և հետաքննության որակի մոնիտորինգի դեպարտամենտը ակտիվորեն համագործակցում էր Եվրոպայի խորհրդի փորձագետների, ժողովրդական պաշտպանի գրասենյակի և տեղական ոչկառավարական կազմակերպությունների հետ: Նշված հանձնարարականն արդեն ուղարկվել է համապատասխան կառուցվածքային ենթաբաժիններին և տարածքային մարմիններին:

1.6.2.3 Ոչկառավարական կազմակերպությունների հետ համագործակցությամբ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների վարժանքների/հանդիպումների կազմակերպում էթնիկ փոքրամասնությունների իրավունքների և «ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» եվրոպական շրջանակային կոնվենցիային ծանոթության նպատակով

Ք. Բաթումի մունիցիպալիտետի քաղաքապետարանի կողմից պլանավորված ակտիվություն տարվա ընթացքում չի իրականացվել:

1.6.2.4 Էթնիկ փոքրամասնություններով բնակվող վարչական միավորներում արտագնա հանդիպումների կազմակերպում նրանց հիմնախնդիրների և կարիքների նույնականացման նպատակով

Սամցխե-Ջավախեթի երկրամասային վարչության ծառայությունները ակտիվորեն համագործակցում են տարածաշրջանում գործող լրատվական միջոցների հետ: Հանրային տեղեկատվությունը վարչությունից նույնպես տրվում է անսահմանափակորեն: Ակտիվ է ընդգրկվածությունը կենտրոնական հաստատությունների և ոչկառավարական սեկտորի կողմից կազմակերպված այն միջոցառումներում, որոնք նվիրված են էթնիկ փոքրամասնությունների կարիքների կարգավորման և նրանց քաղաքացիական ակտիվության աճի խնդիրներին:

1.6.2.5 Վարժանքների և լրատվական հանդիպումների անցկացման ճանապարհով արդարադատության նախարարության աշխատակիցների գիտակցության բարձրացում էթնիկ փոքրամասնությունների իրավունքների և հակախտրականության օրենսդրության մասին

2019 թվականի հունվար ամսից արդարադատության ուսումնական կենտրոնը պատժակատարողական հաստատությունների հատուկ ծառայության պահակախմբի սպաների համար կազմակերպում է «Պահակախմբի սպաների կողմնորոշման դասընթաց»: Դասընթացի շրջանակներում նախատեսված է 5-7 ժամանոց վարժանք՝ «Ի՞նչ է խտրականությունը»: Վարժանքը առավելապես նախատեսում է թիրախային խմբի յուրահատկությունը և գործունեության առանձնահատկությունները:

Բացի դրանից, Արդարադատության նախարարությունը միջազգային իրավունքի դեպարտամենտի և արդարադատության ուսումնական կենտրոնի կազմակերպմամբ և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ու Նորվեգիայի կառավարության աջակցությամբ, Ղվարելի արդարադատության ուսումնական կենտրոնում արդարադատության նախարարության աշխատակիցների համար անցկացրեց հանրային դասախոսություն «Մարդու իրավունքներին հիմնված մոտեցում և ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակները»: Հանդիպմանը քննարկվեց, թե ինչ դեր ունի մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցման զարգացումը, հակախտրականության օրենսդրությունը, մարդու իրավունքների քաղաքականությունը և ռազմավարությունը ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներին հասնելու գործընթացում:

Հավելյալ ակտիվություններ.

Վրաստանի պաշտպանության նախարարություն - Վրաստանի պաշտպանության նախարարության համակարգում (քաղաքացիական գրասենյակ, գլխավոր շտաբ, Վրաստանի պաշտպանության ուժեր) զբաղված անձանց աշխատանքային միջավայրի, գործընկերների և դեկավարների նկատմամբ տրամադրությունների և վերաբերմունքների բացահայտման, ինչպես նաև զարգացման հավասար հնարավորությունների և նեղությունների, այդ թվում սեռական նշանով խտրականության մասին իրավիճակի ուսումնասիրության համար, 2018-2019 թվականներին իրականացվեց կազմակերպչական եղանակի հետազոտություն՝ «Կանայք, խաղաղություն և անվտանգություն Վրաստանի պաշտպանության ուժերում. կազմակերպչական գնահատում»: Նախագիծը ֆինանսավորված էր NATO-ի SPS Programme-ի շրջանակներում և ներկայացնում էր Վրաստանի կառավարության, Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկման Ժնևի կենտրոնի (DCAF), Մեծ Բրիտանիայի և Իսպանիայի պաշտպանության նախարարությունների համատեղ աշխատանքի արդյունք:

Հետազոտության շրջանակներում կիրառված քանակական (հարցաշարեր) և որակական (ֆոկուս խմբեր) մեթոդների միջոցով ստացած տվյալների վերլուծության հիման վրա պատրաստվեցին հաշվետվություն և համապատասխան հանձնարարականներ: Հանձնարարականների մի մասը նկատառված կլինի Պաշտպանության նախարարության գենդերային հավասարության նոր, 2020 թվականի ռազմավարությունում և զինված անձնակազմի հավաքագրման հայեցակարգում: Այս վերջինը ներկայումս աշխատանքային տարբերակ է և դեռևս կատարելագործման գործընթացում է:

Հետազոտության հաշվետվությունը կազմակերպության ներքին փաստաթուղթ է, թեև մարդկային ռեսուրսների դեպարտամենտի ներկայացուցիչները, ՀԻԻԱ Պաշտպանության ինստիտուցիոն վերակառուցման դպրոցում կազմակերպեցին հանդիպում և 2019 թվականի սեպտեմբերի 20-ին ոչկառավարական կազմակերպությունների և անվտանգության սեկտորի ներկայացուցիչներին ծանոթացրին հետազոտության մեթոդոլոգիային, արդյունքներին և փորձին:

Վրաստանի անվտանգության սեկտորում գենդերային մեյնստրիմինգի ապահովման նպատակով, ընթանում է սեռի նշանով սեգրեգացված տվյալների փաստաթղթերի մշակում և անցկացվելիք միջոցառումների պլանավորում, ինչը օժանդակում է և պաշտպանության նախարարությանը օգնում է ազգային գործնական պլանով ստանձնած պարտականությունների կատարման մեջ:

ՄԱԿ-ի կանանց կազմակերպության աջակցությամբ և պաշտպանության նախարարության «Գենդերային հավասարության ռազմավարության» համաձայն, կանոնավոր կերպով իրականացվում էին պաշտպանության նախարարության և զինված ուժերի ստորաբաժանումների գենդերային խորհրդատուների վարժանքներ, նախարարության համակարգում գենդերային հոդի վրա բողոքարկման մեխանիզմների բարելավման միջոցառումներ, զինվորական կրթության և միջազգային խաղաղարար գործողություններին արագ փոխադրումների նախապատրաստության գործընթացում գենդերային հարցերի սիստեմատավորում:

2019 թվականին արագ տեղափոխությունների նախապատրաստությունում գտնվող Կենտրոնական Աֆրիկայի և Աֆղանստանի առաքելություններ ուղարկվելիք 1530 զինվորական ծառայողի (մշակույթի, կրոնի և ավանդույթների արժեքների նկատառումով) անցկացվեց ուսուցում գենդերային հավասարության սկզբունքների, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերի, ինչպես նաև տրավմա ստանալուց հետո հոգեբանական խանգարվածության ռիսկի նկատառումով ընտանեկան բռնության մասին:

Գենդերային հավասարության և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի, կանանց, խաղաղության և անվտանգության 1325 և հետագա բանաձևերը, ինչպես նաև միջազգային մարդասիրական իրավունքի ուսուցումները ինտեգրված են սպաների և սերժանտների կարիերային ուսուցման բոլոր կուրիկուլումներում և նաև խաղաղարար գործողություններին արագ տեղափոխությունների նախապատրաստության ծրագրերում:

Ռազմավարական նպատակ 2

Հավասար սոցիալական և տնտեսական պայմանների և հնարավորությունների ստեղծում

Միջանկյալ նպատակ 2.1. Սոցիալական և տարածաշրջանային շարժունության աջակցություն

Խնդիր.2.1.1 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների տնտեսական իրավիճակի բարելավման օժանդակություն

2.1.1.1 Տեղեկատվական քարտզարշավ պետական սերվիսների և ծրագրերի մասին

Պետական նախարարի գրասենյակի նախաձեռնությամբ և կազմակերպմամբ, Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում անցկացվեց տեղեկատվական քարտզարշավ առողջապահության, տնտեսության, ֆինանսների, արդարադատության, բնապահպանության և գյուղատնտեսության նախարարությունների մասնակցությամբ: Քարտզարշավի շրջանակներում շեշտադրությունը կատարվեց նշված նախարարությունների կողմից իրականացված և ընթացիկ կարևոր նախագծերի վրա, բնակչությանը տեղեկատվություն հաղորդվեց պետական ծրագրերի և սերվիսների մասին: Նշված տարածաշրջանի մունիցիպալիտետներում անցկացվեց 11 հանդիպում:

2.1.1.2 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով խիտ բնակվող տարածաշրջաններում պլանավորված մոբիլ էքստենցիայի շրջանակներում ֆերմերների հետ տեղեկատվական-խորհրդատվական հանդիպումների անցկացում

Մոբիլ էքստենցիայի շրջանակներում անցկացվեց 382 տեղեկատվական-խորհրդատվական հանդիպում, այդ թվում. 279–ը՝ Քվեմո Քարթլիում, 57–ը՝ Սամցխե-Ջավախեթիում, 46–ը՝ Կախեթում, ինչպես նաև Քվեմո Քարթլիի և Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում

անցկացվեց տեղեկատվական-խորհրդատվական շուրջ 35-40 հանդիպում: Շահառուների թվաքանակը մինչև 800-1 000 մարդ էր:

2.1.1.3 Համայնատիրություններին աջակցող պետական ծրագրերի մասին տեղեկատվական հանդիպումների անցկացում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով բնակվող տարածաշրջաններում (Քվեմո Քարթլի, Սամցխե-Ջավախեթի, Կախեթի)

Վրաստանի բնապահպանության և գյուղատնտեսության նախարարության կողմից անցկացվեց 4 տեղեկատվական հանդիպում, այստեղից 2-ը Սամցխե-Ջավախեթիում (ք.Ախալխալաքում՝ Ախալքալաքի և Նինոծմինդայի համայնատերերի և շահագրգիռ ֆերմերների հետ ու Ախալքալաքի մունիցիպալիտետի Կոթելիա գյուղում՝ Կոթելիայի և մերձակա գյուղերի բնակչության հետ), 2 հանդիպում Քվեմո Քարթլիում (Ծալկայի և Դմանիսի մունիցիպալիտետներում):

Բոլոր չորս հանդիպումների հիմնական թեման ներկայացնում էր «Բարձրալեռ տարածաշրջաններում պետական սեփականությունում գոյություն ունեցող արտադարյերի ռացիոնալ օգտագործման մասին» Վրաստանի կառավարության 2017 թվականի մայիսի 29-ի թիվ 265 որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում Ախալքալաքի, Ծալկայի և Դմանիսի մունիցիպալիտետներում կառուցվելիք կաթի վերամշակման արտադրամասերը համայնատիրություններին փոխանցելու պայմանները, ինչպես նաև Վրաստանի կառավարության 2016 թվականի մարտի 29-ի թիվ 150 որոշմամբ հաստատված «Կաթ արտադրող գյուղատնտեսական համայնատիրություններին աջակցության պետական ծրագրին» մասնակցության պայմանները, նաև համայնատիրությունների ստեղծմամբ հետաքրքրվող անձանց համար համայնատիրությունների ստեղծման և գործունեության սկզբունքների կապակցությամբ խորհրդատվությունները:

Նշված հանդիպումների շրջանակներում, ք. Ախալքալաքում, հանդիպմանը մասնակցեց շուրջ 20 անձնավորություն, Ախալքալաքի մունիցիպալիտետի Կոթելիա գյուղում անցկացված հանդիպմանը մասնակցում էին հիմնականում համայնատիրությունների բաժնետերերը, մոտավորապես 35 անձ, ք. Դմանիսում անցկացված հանդիպմանը մասնակցեցին վերը նշված ծրագրերին մասնակցող համայնատիրությունների բաժնետերեր և ֆերմերներ, մոտավորապես 25 անձ, իսկ ք. Ծալկայում անցկացված հանդիպմանը մասնակցեց 20 անձնավորություն:

2.1.1.4 Բիզնեսի զարգացմանը նպաստող միջավայրի ձևավորում, պետական ծրագրերի իրականացմանը օժանդակություն, տրանս-սահմանային տնտեսական կապերի հզորացմանը աջակցություն

Վրաստանի տնտեսության և կայուն զարգացման նախարարության կողմից Վրաստանի տարածաշրջաններում անցկացվեցին տեղեկատվական կարգի հանդիպումներ, այդ թվում էթնիկ փոքրամասնություններով բնակվող մունիցիպալիտետներում, մասնավորապես Պանկիսի կիրճի և Յորմուղանլո գյուղում, որտեղ տեղի ունեցավ գործակալության «Արտադրի՛ր Վրաստանում» ծրագրերի շնորհանդես և ծրագրերին ընդգրկված պայմաններին ծանոթացում:

Հավելյալ ակտիվություն.

Սամցխե Ջավախեթի, Քվեմո Քարթլիի և Կախեթի տարածաշրջաններում «Արտադրի՛ր Վրաստանում» ծրագրի ֆինանսների մատչելիության բաղադրիչի արդյունաբերական ուղղությամբ, 2019 թվականին ձևակերպվեց նոր պայմանագիր 22 հյուրանոցի և 15 ձեռնարկատիրական նախագծի կապակցությամբ: Այս 37 նախագծի ենթադրական գումարային ներդրման ծավալը գերազանցում է 107 միլիոն լարիին, իսկ կոմերցիոն բանկերի կողմից հաստատված վարկի ծավալը 56 միլիոն լարիից ավելի է: Նախագծերի շրջանակներում ստեղծվեց 950-ից ավելի նոր աշխատատեղ: «Համաֆինանսավորման մեխանիզմ փոքր և ընտանեկան հյուրանոցային արդյունաբերությանը աջակցության համար» ծրագրի շրջանակներում Կախեթում (10 նախագիծ) և Սամցխե-Ջավախեթիում (14 նախագիծ) ֆինանսավորված նախագծերի արժեքը կազմեց 62.4 հազար լարի:

2.1.1.5 Միկրո և փոքր ձեռներեցության օժանդակություն էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով խիտ բնակվող տարածաշրջաններում

Միկրո և փոքր ձեռներեցության օժանդակության ծրագիրը 2019 թվականին չի իրականացվել:

Հավելյալ միջոցառում.

2019 թվականին ՀԻԻԱ «Վրաստանի զբոսաշրջության ազգային վարչության» կողմից իրականացված ակտիվություն.

- ❖ Մառնեուլիում հյուրանոցային ծառայության ունակություն-հմտություններից անցկացվեց 2 վարժանք և վերապատրաստում անցավ զբոսաշրջության ոլորտում զբաղված շուրջ 60 անձ,
- ❖ Պանկիսի կիրճում նախագծվեց զբոսաշրջանային հետիոտնի 8 արահետ:

ՀԻԻԱ «Վրաստանի նորացումների և տեխնոլոգիաների գործակալությունը» 2019 թվականի ընթացքում իրականացրեց հետևյալ ակտիվությունները.

- ❖ Էթնիկ փոքրամասնություններով բնակվող մունիցիպալիտետներում տրվեց համացանցին միանալու 115 վաուչեր, մասնավորապես. Ադիգենի, Ախալքալաքի, Ախալցխի, Ախմետա, Դմանիսի, Նինոծմինդա, Ծալկա:
- ❖ Տեղական ձեռներեցների համար անցկացվեցին վարժանքներ էլեկտրոնային գրագիտությունից, որին ընդհանուր առմամբ մասնակցեց 86 ձեռներեց: Վարժանքներ անցկացվեցին հետևյալ մունիցիպալիտետներում. Ադիգենի, Ախալքալաքի, Ախալցխի, Ախմետա, Գարդաբանի, Թերթիծղարո, Մառնեուլի:

2.1.1.6 Սոցիալական ծրագրերին ծանոթության նպատակով, էթնիկ փոքրամասնություններով բնակվող տարածաշրջանների մունիցիպալիտետներում տեղեկատվական հանդիպումների կազմակերպում

Էթնիկ փոքրամասնություններով խիտ բնակվող տարածաշրջաններում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին սոցիալական ծրագրերին ծանոթացնելու նպատակով, Վրաստանի բնագրաված տարածքներից տարհանվածների, աշխատանքի, առողջության և սոցիալական պաշտպանության նախարարության քաղաքականության դեպարտամենտի սոցիալական պաշտպանության քաղաքականության վարչության կազմակերպմամբ և Մառնեուլի ու Դմանիսի մունիցիպալիտետների քաղաքապետերի համակարգմամբ, Քվեմո Քարթլիի տարածաշրջանի Մառնեուլիի և Դմանիսի մունիցիպալիտետներում անցկացվեց 2 տեղեկատվական հանդիպում: Բացի դրանից, Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի գրասենյակի կողմից կազմակերպված տեղեկատվական քարոզարշավի շրջանակներում, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին սոցիալական ծրագրերին ծանոթության նպատակով, Վրաստանի բնագրաված տարածքներից տարհանվածների, աշխատանքի, առողջության և սոցիալական պաշտպանության նախարարության ընդգրկմամբ Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում անցկացվեց 4 հանդիպում:

2.1.1.7 Քաղաքի բյուջեով նախատեսված տնտեսական ծրագրերին և սերվիսներին ծանոթության նպատակով ոչկառավարական կազմակերպությունների հետ միասին տեղեկատվական բնույթի հանդիպումների կազմակերպում

Ք. Թբիլիսիի սակրեբուլոյի կողմից պլանավորված ակտիվությունը տարվա ընթացքում չի իրականացվել:

2.1.1.8 Ք. Բաթումի «Բարեկամության տան» էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար մունիցիպալիտետի տնտեսական քաղաքականությանը և 2019-2020 թթ. Գործնական պլանին ծանոթացում

Ք. Բաթումի մունիցիպալիտետի քաղաքապետարանի կողմից պլանավորված ակտիվությունը տարվա ընթացքում չի իրականացվել:

2.1.1.9 Ենթակառուցվածքային աշխատանքներ. դրսի լուսավորության սարքավորում, ջրի ակունքային-շինության դրենաժային համակարգի բարեկարգում-վերականգնում և շինության ցանկապատում, ներքին թաղամասային ճանապարհների ասֆալտապատում, միտոնյա կամրջի սարքավորում, ճանապարհների վերականգնում

2019 թվականին **Կախեթի տարածաշրջանի** էթնիկ փոքրամասնություններով բնակվող գյուղերում իրականացվեցին բազում ենթակառուցվածքային նախագծեր, մասնավորապես.

Ախմետայի մունիցիպալիտետ.

- ❖ Մունիցիպալային զարգացման հիմնադրամ. 1 նախագիծ - 400 000 լարի,
- ❖ Պետական բյուջե. 1 նախագիծ - 75854 լարի,
- ❖ Տարածաշրջանային զարգացման հիմնադրամ. 3 նախագիծ - 494 598 լարի,
- ❖ Գյուղին աջակցության ծրագիր. 16 նախագիծ - 116 705 լարի,
- ❖ Տեղական բյուջե՝ 4 նախագիծ – 46458 լարի:
- ❖

Դեդոփլիսծղարոյի մունիցիպալիտետ.

- ❖ Տեղական բյուջե, Գյուղին աջակցության ծրագիր. 3 նախագիծ – 53 000 լարի

Թելավի մունիցիպալիտետ.

- ❖ Տարածաշրջանային զարգացման հիմնադրամ, 2 նախագիծ - 500 200 լարի,

Լազոդեխի մունիցիպալիտետ.

- ❖ Տարածաշրջանային զարգացման հիմնադրամ. 6 նախագիծ - 1142349 լարի,
- ❖ Տեղական բյուջե. 1 նախագիծ - 15372 լարի,
- ❖ Գյուղին աջակցության ծրագիր. 14 նախագիծ - 187309 լարի:

Սագարեջոյի մունիցիպալիտետ.

- ❖ Գյուղին աջակցության ծրագիր. 12 նախագիծ - 198100 լարի

Ղվարելի մունիցիպալիտետ.

- ❖ Գյուղին աջակցության ծրագիր. 6 նախագիծ - 79531 լարի,

❖ Պետական բյուջե. 3 նախագիծ - 110698 լարի:

2019 թվականին Կախեթի տարածաշրջանում տարածական սարքավորման, շինարարության, ճարտարապետության և հուշարձանների պահպանության բաժնի կողմից շինարարության 70 թույլատվություն է տրվել էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին, ինչը կազմում է ընդհանուր դիմումների 65% -ը:

Քվեմո Քարթլիի տարածաշրջանում էթնիկ փոքրամասնություններով բնակվող գյուղերում իրականացվեցին բազում ենթակառուցվածքային նախագծեր, այդ թվում ճանապարհային ենթակառուցվածքի բարեկարգում և դպրոցների, ամբուլատորիաների կառուցում-վերականգնում, գյուղին աջակցության ծրագրի շրջանակներում իրականացվեցին բազում նախագծեր.

Գարդաբանի մունիցիպալիտետ էթնիկ փոքրամասնություններով բնակվող գյուղերում ենթակառուցվածքային աշխատանքների ծախսը ընդհանուր առմամբ կազմեց գումարային – 2582143 լարի,

❖ Տարածաշրջանային զարգացման հիմնադրի ծախս – 983168 լարի,

❖ Մունիցիպալային ծախս – 1 367501 լարի,

❖ Գյուղին աջակցության ծրագրի շրջանակներում ծախսած գումար - 231 474 լարի,

Բոլնիսի մունիցիպալիտետ

2019 թվականին Բոլնիսի մունիցիպալիտետի էթնիկ փոքրամասնություններով բնակվող գյուղերում իրականացվեց 57 ենթակառուցվածքային նախագիծ, ընդամենը՝ 3 942 8196 լարի:

❖ Տեղական բյուջեից հատկացվեց - 1 600 4856 լարի,

❖ Տարածաշրջանային զարգացման հիմնադրամի ծախս - 1 552 680 լարի,

❖ Պետական բյուջեից - 589 834 լարի,

❖ Գյուղին աջակցության ծրագրի շրջանակներում ծախսած գումար - 1 034 217 լարի:

Դմանիսի մունիցիպալիտետ

2019 թվականին Դմանիսի մունիցիպալիտետի էթնիկ փոքրամասնություններով բնակվող գյուղերում իրականացվեց 59 ենթակառուցվածքային նախագիծ, ընդամենը - 5 861 532 լարի

❖ Տեղական բյուջեից հատկացվեց - 1 827 848 լարի,

- ❖ Տարածաշրջանային զարգացման հիմնադրամի ծախս - 2 687 592 լարի,
- ❖ Պետական բյուջեից - 155 576 լարի,
- ❖ Գյուղին աջակցության ծրագրի շրջանակներում ծախսած գումար -1 190 516 լարի:

Թերթիծղարոյի մունիցիպալիտետ

2019 թվականին Թերթիծղարոյի մունիցիպալիտետի էթնիկ փոքրամասնություններով բնակվող գյուղերում (7 գյուղ) իրականացվեց ենթակառուցվածքային նախագիծ, ընդամենը 8 նախագիծ -1 773 000 լարի,

- ❖ Տարածաշրջանային զարգացման հիմնադրամի ծախս - 1 667 000 լարի,
- ❖ Գյուղին աջակցության ծրագրի շրջանակներում ծախսված գումար 106 000 լարի,

Ծալկայի մունիցիպալիտետ

Մունիցիպալիտետի էթնիկ փոքրամասնություններով բնակվող 19 գյուղում ենթակառուցվածքային նախագծերի վրա ծախսվել է ընդամենը 4 455 959 լարի,

- ❖ Պետական բյուջեից ծախսվեց - 1679319 լարի,
- ❖ Տեղական բյուջեից – 2 77640 լարի:

Մառնեուլիի մունիցիպալիտետ

Մառնեուլիի մունիցիպալիտետում 2019 թվականին իրականացվեց 50 ենթակառուցվածքային նախագիծ, որի արժեքը կազմում էր 19 044 606 լարի:

- ❖ Գյուղին աջակցության ծրագրի շրջանակներում իրականացվեց 77 նախագիծ, ընդհանուր արժողությամբ 1195300 լարի,
- ❖ Տեղական բյուջեից հատկացվեց - 48 080 լարի,
- ❖ Տարածաշրջանային զարգացման հիմնադրամի ծախս - 1 232 000 լարի:

2.1.1.10 Բիզնեսի զարգացմանը նպաստող միջավայրի ձևավորում, պետական ծրագրերի իրականացման օժանդակություն, տրանս-սահմանային տնտեսական կապերի ուժեղացման օժանդակություն -

Սամցխե-Ջավախեթի երկրամասային վարչությունը ընդգրկված է բիզնեսին օժանդակող պետական ծրագրերի տեղեկատվական ընկերություններում, այս տեսակետից հատկանշական են «Արտադրի՛ր Վրաստանում», «Արմատավորի՛ր ապագան» ծրագրերը,

որոնց շնորհանդեսները երկրամասային վարչության աջակցությամբ տարվա ընթացքում անցկացվեց 3-անգամ:

2.1.1.11 Ենթակառուցվածքային նախագծերի իրականացում

Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանի բնակչության կենսամակարդակի բարելավման նպատակով պետական և տեղական բյուջեների ֆինանսավորմամբ իրականացվում են ենթակառուցվածքային նախագծեր՝ կատարվում է ճանապարհների, խմելու ջրի համակարգերի, կամուրջների, մինի մարգահրապարակների, դպրոցների և նախադպրոցական դաստիարակության հիմնարկությունների և այլ օբյեկտների վերականգնում/շինարարություն:

Հաշվետու ժամանակաշրջանում Էթնիկ փոքրամասնություններով բնակվող վարչական միավորներում, պետական և տեղական բյուջեների ֆինանսավորմամբ իրականացվեց 144 նախագիծ, ընդհանուր արժողությամբ 19 813 000 լարի: Մասնավորապես.

- ❖ Ախալցխի մունիցիպալիտետում - 41 նախագիծ, ընդհանուր արժողությունը՝ 7 109 172 լարի,
- ❖ Ախալքալաքի մունիցիպալիտետում – 58 նախագիծ, գումարային արժողությունը՝ 6 210 611 լարի,
- ❖ Նինոծմինդայի մունիցիպալիտետում – 44 նախագիծ, գումարային արժողությունը՝ 5 818 434 լարի,
- ❖ Ասպինձայի մունիցիպալիտետում - 1 նախագիծ, գումարային արժողությունը՝ 674 784 լարի:

Խնդիր. 2.1.2 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների սոցիալական իրավիճակի բարելավման օժանդակություն

2.1.2.1 Տեղեկատվական հանդիպումներ քաղաքի բյուջեով նախատեսված սոցիալական ծրագրերին և սերվիսներին ծանոթության նպատակով

Ք.Թբիլիսիի սակրեբուլոյի կողմից պլանավորված ակտիվությունը տարվա ընթացքում չի իրականացվել:

2.1.2.2 Սոցիալապես անպաշտպան Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտանիքներին օգնություն

«Բարեկամության տանը» գործող Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից, տարբեր կրոնական միջոցառումների ժամանակ, Բաթումի մունիցիպալիտետի

տեղական բյուջեից հատկացված գումարի որոշակի մասով իրականացվեց համապատասխան էթնիկ փոքրամասնությունների սոցիալապես կարիքավոր ընտանիքների օգնության տրամադրում, նրանց պարենային մթերքների փոխանցում: Մասնավորապես, 2019 թվականի երկրորդ և չորրորդ եռամսյակում մեկանգամյա օգնություն տրվեց ռուսական, ուկրաինական և գերմանական էթնիկ խմբերի ներկայացուցիչ սոցիալապես անպաշտպան 326 ընտանիքի:

2.1.2.3 Ենթակառուցվածքային նախագծերի իրականացում

Ենթակառուցվածքի վերականգնում⁸

Տարբեր նախագծերի, այդ թվում ենթակառուցվածքային նախագծերի իրականացման ճանապարհով աջակցություն ցուցաբերվեց էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների սոցիալական վիճակի բարելավմանը, իրականացվեց ճանապարհների վերականգնում, դրսի լուսավորության և ներքին ճանապարհների սարքավորում, ոռոգման և ջրհեղեղային համակարգերի վերականգնում և այլն:

Սամցխե-Ջավախեթի տարածաշրջան

- ❖ Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանի մունիցիպալիտետներում (Ախալցխե, Ադիգենի, Ասպինձա, Ախալքալաքի, Բորջոմի, Նինոծմինդա) Վրաստանի տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում, ֆինանսավորվեց 38 նախագիծ՝ 24 413 867 լարի ընդհանուր արժեղությամբ, այդ թվում տարածաշրջանային զարգացման հիմնադրամը՝ 21 635 672 լարի,
- ❖ Բարձրալեռ բնակավայրերի զարգացման հիմնադրամի կողմից ֆինանսավորվեց 1 նախագիծ՝ 687 718 լարի արժեղությամբ, այդ թվում լեռնային հիմնադրամի գումարը՝ 653 332 լարի:

Քվեմո-Քարթլիի տարածաշրջան

- ❖ Քվեմո Քարթլիի տարածաշրջանի մունիցիպալիտետներում (Ռուսթավի, Բոլնիսի, Դմանիսի, Գարդաբանի, Թեթրիձոր, Մաոնեուլի, Ծալկա) Վրաստանի տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորվեց 67 նախագիծ՝ 44 715 268 լարի ընդհանուր

⁸Դիտե՛լ Հավելված 1

արժողությամբ, այդ թվում տարածաշրջանային զարգացման հիմնադրամի գումարը՝ 38 539 369 լարի:

Կախերի տարածաշրջան

- ❖ Կախերի տարածաշրջանի մունիցիպալիտետներում (Ախմետա, Լագոդեխի) Վրաստանի տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորվեց 28 նախագիծ՝ 10135576 լարի ընդհանուր արժողությամբ, այդ թվում տարածաշրջանային զարգացման հիմնադրամի գումարը՝ 9 459 892 լարի:

2.1.2.4 Մունիցիպալիտետների և այլ հիմնարկությունների սոցիալական ծրագրերից էթնիկ փոքրամասնությունների օգտվելուն և հավասար բաշխելուն օժանդակություն

Սամցխե-Ջավախերի տարածաշրջանի բնակչության համար առողջապահության պետական ծրագրերի հետ միասին, տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են տարբեր սոցիալական ծրագրեր: 2019 թվականի ընթացքում Ախալքալաքի, Նինոծմինդայի և Ախալցխի մունիցիպալիտետներում 2 234 591 լարիի չափով օգնություն ստացավ 22 790 շահառու, այդ թվում 1 220 285 լարի էթնիկ փոքրամասնությունների 8 145 ներկայացուցիչ: Մասնավորապես.

- ❖ Նինոծմինդայի մունիցիպալիտետում տեղական ինքնակառավարման մարմինը 366 000 լարիի ֆինանսական օգնություն ցուցաբերեց 1370 շահառուի, որոնցից 1020-ը էթնիկական փոքրամասնության ներկայացուցիչ է, որոնք ստացան 258 000 լարիի օգնություն,
- ❖ Ախալքալաքի մունիցիպալիտետում 736 580 լարիի օգնություն ստացավ 1 658 շահառու, որոնցից 1 359 էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ է, որոնք ստացան 61 362 լարիի օգնություն:
- ❖ Ախալցխի մունիցիպալիտետում 19762 շահառու ստացավ 1 132 011 լարիի օգնություն, որոնցից 5730-ը էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ է, որոնք ստացան 350 923 լարիի օգնություն:

Գործնական պլանի ներքո իրականացված լրացուցիչ միջոցառումներ.

2019 թվականին մունիցիպալիտետների սոցիալական օգնության ծրագրի շրջանակներում Կախերի տարածաշրջանում օգնություն ցուցաբերվեց 1100-ից ավելի շահառուի՝ 284 903 լարիի չափով:

- ❖ **Ախմետայի մունիցիպալիտետի** բնակչության սոցիալական օգնության 2019 թվականի ծրագրի շրջանակներում բժշկական տեսանկյունից օգնություն ցուցաբերվեց նույն մունիցիպալիտետի տարածքում բնակվող էթնիկ փոքրամասնությունների 173 ներկայացուցչի (58 944 լարի), իսկ սոցիալական տեսանկյունից՝ 32 շահառուի 5710 լարիի չափով,
- ❖ **Թելավի մունիցիպալիտետում** բնակվող էթնիկ փոքրամասնությունների համար առողջապահության և սոցիալական ծրագրերի հոդվածով 2019 թվականին ծախսվեց 57 658 լարի,
- ❖ **Լագոդեխի մունիցիպալիտետի** բնակչության առողջության և սոցիալական պաշտպանության ծրագրի» շրջանակներում օգնություն տրամադրվեց էթնիկ փոքրամասնության 376 ներկայացուցչի և գումարային ծախսվեց 53 663 75 լարի,
- ❖ **Սագարեջոյի մունիցիպալիտետի** տարածքում բնակվող սոցիալապես անպաշտպան էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ իրականացվեցին սոցիալական ծրագրեր սոցիալապես անպաշտպան բնակչության ամբուլատորային բուժման, վիրահատությունների, դեղորայքի, վերականգնման և բուժքնությունների համաֆինանսավորման գումարի 50-70%-ով, բավարարվեց 119 քաղաքացի, տրված է 76 545 լարի (այդ թվում ուռուցքային հիվանդների բուժօգնություն),
- ❖ **Ղվարեղի մունիցիպալիտետի** բնակչության առողջության և սոցիալական պաշտպանության ծրագրի» շրջանակներում օգտվեց էթնիկ փոքրամասնության 95 ներկայացուցիչ և գումարային ծախսվել է 21 263 լարի:

Ռազմավարական նպատակ 3

Որակյալ կրթության մատչելիության ապահովում և պետական լեզվի իմացության բարելավում

Հաշվետու ժամանակաշրջանում առանձնահատուկ ուշադրություն հատկացվեց որակյալ կրթության մատչելիության ապահովմանը և պետական լեզվի՝ որպես քաղաքացիական ինտեգրման կարևոր գործիքի իմացության մակարդակի բարելավմանը: Էթնիկ փոքրամասնություններն ունեն հասանելիություն կրթության բոլոր աստիճաններին (նախադպրոցական, հանրակրթական, բարձրագույն, մասնագիտական), այդ թվում մայրենի լեզվով: Վրաստանում 207 ոչվրացալեզու հանրային դպրոց է և 84 ոչվրացալեզու սեկտոր:

Նշված ռազմավարական նպատակի շրջանակներում իրականացվեցին բազում միջոցառումներ և ծրագրեր, որոնք ծառայում էին հետևյալ առաջնահերթային նպատակների իրականացմանը.

- ❖ Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար նախադպրոցական կրթության հնարավորությունների աճ և հանրային կրթության որակի բարելավում,
- ❖ Բարձրագույն կրթության մատչելիության ապահովում,
- ❖ Մասնագիտական և չափահասների կրթության մատչելիության բարելավում,
- ❖ Պետական լեզվի իմացության մակարդակի բարելավում:

Միջանկյալ նպատակ. 3.1 Նախադպրոցական կրթության մատչելիության աճ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար

Խնդիր. 3.1.1 Նախադպրոցական կրթության ծրագրի մշակում, ուսումնական ռեսուրսների մոդելների ստեղծում, դաստիարակ-ուսուցիչների և վարչական անձնակազմի մասնագիտական զարգացման ծրագրերի պատրաստում

3.1.1.1 Ծալկայի մունիցիպալիտետի գյուղերում նախադպրոցական դաստիարակության հաստատությունների շինարարության երկրորդ փուլի իրականացում (շինարարության ավարտ և գույքով սարքավորում)

Ծալկայի մունիցիպալիտետի գյուղերում ավարտվեցին նախադպրոցական դաստիարակության հաստատությունների շինարարական աշխատանքները: Ընդհանուր առմամբ կառուցվեց 4 մանկապարտեզ:

3.1.1.2 Գարդաբանում Աղաթակլիա-Ղարաթակլիայում պարտեզի շինարարության երկրորդ փուլի իրականացում, ինչպես նաև նախադպրոցական նախապատրաստության ծրագրերի պլանավորում և մշակում Քվեմո Քարթլիի մունիցիպալիտետներում

Գարդաբանի մունիցիպալիտետում կառուցվեց 5 մուր-մանկապարտեզ: Ներկայումս ընթանում է 1 մանկապարտեզի շինարարություն:

3.1.1.3 Նախադպրոցական դաստիարակության հաստատություններում ոչվրացալեզու խմբերի ձևավորման և պետական լեզվի ուսուցման օժանդակություն: Ոչվրացալեզու մանկապարտեզների նյութա-տեխնիկական բազայով սարքավորում, ուսուցման և դաստիարակության համարժեք պայմանների ստեղծում

Տարվա ընթացքում Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում տեղական բյուջեի ֆինանսավորմամբ վերանորոգվեցին Ախալցխեի, Ախալքալաքի և Նինոծմինդայի մունիցիպալիտետների 7 նախադպրոցական դաստիարակության հաստատություններ, ընդհանուր արժողությամբ 1 121 348 լարի:

Հավելյալ միջոցառում.

Բոլնիսի մունիցիպալիտետում գոյություն ունեցող 12 մանկապարտեզում անցկացվեց լրիվ վերակառուցում: 11 մանկապարտեզում ընթանում է վրաց լեզվով ինտեգրված ուսուցում: Նախիդուրի, Մուխրանա և Բոլնիսի գյուղերում գործում են դպրոցական նախապատրաստության կրթական ցերեկային կենտրոններ:

Նախադպրոցական դաստիարակության հաստատություններում՝ Պանկիսի կիրճի մանկապարտեզներում (11 մանկապարտեզ և 17 խումբ) ակտիվորեն արմատավորվել և ընթանիկ տարում նույնպես կշարունակվի «Դպրոցական նախապատրաստության ծրագրով» աշխատանքը:

Միջանկյալ նպատակ. 3.2 Որակյալ հանրային կրթության մատչելիության աճ ինչպես պետական, այնպես էլ մայրենի լեզուներով

Խնդիր.3.2.1 Ազգային ուսումնական պլանի և կրթական ռեսուրսների բարելավում – զարգացում՝ որակյալ երկլեզվյա կրթության արմատավորմանը աջակցության համար

3.2.1.1 Ազգային ուսումնական օլիմպիադայի անցկացում հայերեն, ադրբեջաներեն և ռուսերեն լեզուներով

ՀԻԻԱ գնահատման և քննությունների ազգային կենտրոնի կողմից կազմակերպված 2018-2019 ուսումնական տարվա ազգային ուսումնական օլիմպիադայի երկրորդ փուլին մասնակցեցին 80 ադրբեջանալեզու, 126 հայալեզու և 180 ռուսալեզու աշակերտներ: Օլիմպիադայի երրորդ փուլին մասնակցում էր 15 հայալեզու և 46 ռուսալեզու աշակերտ:

3.2.1.2 Դպրոցի ավարտական քննությունների անցկացում ռուսերեն, հայերեն և ադրբեջաներեն լեզուներով

2019 թվականից բոլոր դպրոցների համար չեղարկվեցին դպրոցական ավարտական քննությունները (2019 թվականի ապրիլի 8-ին «Հանրային կրթության մասին» Վրաստանի օրենքում իրականացված փոփոխություններով) և ուժը կորցրած հայտարարվեց «Դպրոցի ավարտական քննությունների անցկացման կարգի և պայմանների հաստատման մասին» Վրաստանի կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 48/ն հրամանը:

Խնդիր. 3.2.2 Ոչվրացալեզու դպրոցների ուսուցիչների որակավորման բարձրացման օժանդակություն

3.2.2.1 Առարկայի, առարկայական և մասնագիտական իրավասությունների հաստատման քննության անցկացում ռուսերեն, հայերեն, ադրբեջաներեն լեզուներով միայն այն ապլիկանտների համար, ովքեր դասավանդում են ոչվրացալեզու դպրոցներում:

2019 թվականին ՀԻՒԱ գնահատման և քննությունների ազգային կենտրոնի կողմից անցկացված առարկայի ամառային քննությանը, առարկայական և մասնագիտական իրավասությունների հաստատման թեստավորմանը մասնակցեց 2126 ապլիկանտ, որոնցից.

- ❖ 880-ը ընտրեց թեստերի առաջադրանքների մատուցումը ադրբեջաներեն,
- ❖ 262-ը՝ ռուսերեն,
- ❖ 984 –ը՝ հայերեն:

Ապլիկանտները ընթացիկ տարում նույնպես հնարավորություն ունեցան մասնակցել 2019 թվականի աշնանը կազմակերպված առարկայի քննությանը, առարկայական և մասնագիտական իրավասությունների հաստատման թեստավորմանը: Համապատասխանաբար, 2019 թվականի աշնանը կազմակերպված առարկայի քննությանը, առարկայական և մասնագիտական իրավասությունների հաստատման թեստավորմանը մասնակցող ապլիկանտների վիճակագրական տվյալները այսպիսի տեսք ունեն.

- ❖ 672 ապլիկանտ ընտրեց թեստային առաջադրանքների մատուցումը ադրբեջաներեն,
- ❖ 140-ը՝ ռուսերեն,
- ❖ 753-ը՝ հայերեն:

Հաշվետու ժամանակաշրջանում, ՀԻՒԱ ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման կենտրոնը իրականացրեց ոչվրացալեզու դպրոցների աջակցության ծրագիր, որի նպատակն էր պետական լեզվի ուժեղացման ճանապարհով, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով խիտ բնակվող տարածաշրջանների ոչվրացալեզու դպրոցների ուսուցիչներին մասնագիտական զարգացման և ուսում-ուսուցման գործընթացի օժանդակությունը և, նաև դպրոցի բազայի վրա ոչձևական ուսուցման պրակտիկայի բարելավումը: Ծրագրի խնդիրներն են.

- ❖ Էթնիկ փոքրամասնությունների համար հանրակրթական աստիճանին պետական լեզվով որակյալ կրթություն ստանալու ապահովումը,
- ❖ Պետական լեզվի մանկավարժների որակյալ կադրերի պատրաստության ապահովումը էթնիկ փոքրամասնություններով բնակվող մունիցիպալիտետներում,
- ❖ Էթնիկ փոքրամասնությունների աշակերտների համար ընդհանուր կրթամշակութային տարածքում ինտեգրման օժանդակությունը ոչձևական կրթության ճանապարհով:

Ծրագրի շրջանակներում 2019 թվականի ընթացքում, Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլիի և Կախեթի 175 ոչվրացալեզու հանրային դպրոցներում կադրերի սակավության լրացման նպատակով, 2018-2019 ուսումնական տարում գործուղված էր 285 ուսուցիչ (121 կոնսուլտանտ-ուսուցիչ, 85 օժանդակ ուսուցիչ և 77 երկլեզու օժանդակ ուսուցիչ ազգային ուսումնական պլանով նախատեսված տարբեր առարկայական ուղղություններով): 2019-2020 թվականներին ծրագրի մասնակիցների թվաքանակը փոփոխվեց. 169 դպրոցում ներկայացված է 121 կոնսուլտանտ-ուսուցիչ, 75 օժանդակ ուսուցիչ և 69 երկլեզու օժանդակ ուսուցիչ:

Մունիցիպալի-տետ	Ընդգրկված դպրոցների քանակ	Մասնակիցների թվաքանակ	Կոնսուլ-տանտ ուսուցիչ	Օժանդակ ուսուցիչ	Երկլեզու օժանդակ ուսուցիչ
Ախալքալաքի	24	31	17	8	6
Ախալցխիսե	11	13	1	9	3
Ախմետա	1	2	0	2	0
Բոլնիսի	19	32	15	9	8
Գարդաբանի	14	29	10	13	6
Դմանիսի	4	5	3	2	0
Լազոդեխի	2	3	0	2	1
Սագարեջո	4	7	4	1	2
Ծալկա	8	11	6	2	3
Նինոծմինդա	23	30	13	3	14
Մառնեուլի	59	101	52	23	26
Ընդամենը	169	265	121	75	69

Հավելյալ միջոցառումներ.

«Ոչվրացալեզու դպրոցներին աջակցության» ծրագրի շրջանակներում (մարտ-հուլիս) Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլի և Կախեթի տարածաշրջանների ոչվրացալեզու դպրոցների տեղական ուսուցիչների առաջին հոսքի համար անցկացվեց պետական լեզվի ուսուցման դասընթաց, որին ընդգրկված էր 306 ունկնդիր (ա1 մակարդակ-150, ա2 մակարդակ-89, ա2+ մակարդակ-46, բ1 մակարդակ-21):

2019 թվականի հոկտեմբեր ամսին պետական լեզվի ուսուցման դասընթաց սկսվեց ուսուցիչների երկրորդ հոսքի համար: Այս փուլում պետական լեզվի ուսուցման դասընթացին ընդգրկված էր 349 ունկնդիր:

Ծրագրի շրջանակներում մշակվեց վրացերենի, որպես երկրորդ լեզվի ուսուցման երկարատև դասընթացի երեք վարժանք-մոդուլ (ընթերցանության ուղղություն, լսել-խոսելու ուղղություն, գրելու ուղղություն), նշված վարժանք մոդուլները անցկացվեցին ոչվրացալեզու դպրոցների վրացերենը, որպես երկրորդ լեզու տեղական ուսուցիչների համար: Առաջին մոդուլը՝ կարդալու ուղղություն, անցավ թիրախային դպրոցների 303 ուսուցիչ: Երկրորդ մոդուլը՝ լսել-խոսելու ուղղություն, անցավ 216 ունկնդիր, երրորդ մոդուլը՝ գրելու ուղղություն, ունկնդրեց 270 մանկավարժ:

Ծրագրի շրջանակներում մշակվեց վրացերենի, որպես երկրորդ լեզվի առարկայական իրավասության հաստատման նախապատրաստական վարժանք մոդուլ, որը հոկտեմբերին անցկացվեց Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլիի և Կախեթի ոչվրացալեզու դպրոցների տեղական վրացերենի, որպես երկրորդ լեզվի 206 ուսուցիչների համար:

Ոչձևական կրթության ուղղությամբ ծրագրի մասնակիցների կողմից 2019 թվականին իրականացված ստորև թվարկված ակտիվությունները ներգրավեցին մոտավորապես 11 000 աշակերտի.

- ❖ Դպրոցական գործընկերության նախագծեր,
- ❖ Ճանաչողական նախագծեր,
- ❖ Գրական խմբակներ,
- ❖ Վիկտորինա. Ի՞նչ, Որտե՞ղ, Ե՞րբ:
- ❖ Գրագիտության ակումբներ,
- ❖ Նախագիծ «Կինո դպրոցում»,
- ❖ Գեղագրության խմբեր,
- ❖ Ուսումնական և սոցիալական նախագծեր,

- ❖ Քաղաքացիական ակումբներ,
- ❖ Մեդիա գրագիտության ակումբներ,
- ❖ Ազատ դասեր,
- ❖ Արշավներ,
- ❖ Թատերական խմբակներ:

Միջանկյալ նպատակ. 3.3 Բարձրագույն կրթության մատչելիության աճ.

Խնդիր.3.2.1 Արտոնյալ քաղաքականության ապահովում և աջակցություն

3.3.1.1 Միասնական ազգային քննություններին ընդհանուր ունակությունների թեստավորման ապահովում աղբյուրներեն, հայերեն և ռուսերեն լեզուներով

Միասնական ազգային քննությունները միայն արխագալեզու, օսալեզու, աղբյուրներենալեզու և հայալեզու ընդհանուր ունակությունների թեստերի արդյունքների հիման վրա ընդունված ուսանողների ֆինանսավորում, ովքեր պետք է սովորեն վրաց լեզվից նախապատրաստության կրթական ծրագրով և ուսումնառությունը շարունակեն բակալավրիատի, ուսուցչի պատրաստման ինտեգրված բակալավրային-մագիստրային, դիպլոմավորված բուժակի/ատամնաբույժի կրթական ծրագրով

«Միասնական ազգային քննությունների անցկացման կանոնադրության և պետական ուսումնական դրամաշնորհի բաշխման կանոնի հաստատման մասին» Վրաստանի կրթության և գիտության նախարարի 2011 թվականի փետրվարի 18-ի թիվ 19/ն հրամանագրի հիման վրա 2019 թվականի մարտի 6-ին իրականացված փոփոխություններով, վրաց լեզվից նախապատրաստության կրթական ծրագրին ընդունվելու համար, բացի արվեստ-ստեղծագործական կամ սպորտային կրթության ծրագրերից, ինչպես նաև զինվորական բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելուց, պարտադիր է միասնական ազգային քննություններից միայն աղբյուրներեն կամ հայերեն լեզվով ընդհանուր ունակությունների քննության, կամ օսական կամ արխագական լեզվով քննության հանձնումը:

2019 թվականին միասնական ազգային քննություններին մասնակցեց և ընտրեց.

- ❖ Ընդհանուր ունակություններ հայոց լեզվով - 573 դիմորդ,
- ❖ Ընդհանուր ունակություններ աղբյուրներեն լեզվով - 1887 դիմորդ,
- ❖ Ընդհանուր ունակություններ օսական լեզվով - 5 դիմորդ,
- ❖ Ընդհանուր ունակություններ արխագական լեզվով - 1 դիմորդ,

Վրաց լեզվից նախապատրաստության կրթական ծրագրի շրջանակներում 2019 թվականի միասնական ազգային քննությունների արդյունքում, քննություններին մասնակցած, ուսումը շարունակելու իրավունք ձեռք բերած և պետական ուսումնական դրամաշնորհով ֆինանսավորվող անձանց վիճակագրական տվյալները.

Վրաց լեզվից նախապատրաստության ծրագիր	2019 թվական		
	Մասնակցեց	Ուսումը շարունակելու իրավունք ձեռք բերեց	Պետական ուսումնական դրամաշնորհի ձեռք բերեց
Հայոց լեզվով ընդհանուր ունակություններ	573	436	93
Ադրբեջանական լեզվով ընդհանուր ունակություններ	1887	893	96
Օսերեն	5	5	4
Աբխազերեն	1	1	1

3.3.1.2 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար բարձրագույն կրթության մատչելիության բարելավման նպատակով, քննությունների մասին տեղեկատվության հաղորդում (բաց դռների օրերի կազմակերպում)

2019 թվականին կենտրոնը տեղեկատվական հանդիպումներ անցկացրեց Ախալցխի, Ախալքալաքի, Մաոնեուլի, Լագոդեխի, Դմանիսի և Նինոծմինդայի մունիցիպալիտետներում, ինչպես նաև Քութաիսում, Թբիլիսիում և Բաթումիում: Շահառուների թվաքանակը կազմում էր շուրջ 1500 դիմորդ:

3.3.1.3 Սամցխե-Ջավախեթի, Կախեթի և Քվեմո Քարթլիի տարածաշրջաններում տեղեկատվական քարոզարշավ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ աշակերտների համար

Հաշվետու ժամանակաշրջանում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով խիտ բնակվող տարածաշրջաններում (Քվեմո Քարթլի, Սամցխե-Ջավախեթի և Կախեթի) ՆԱՏՕ-ի և Եվրամիության մասին տեղեկատվական կենտրոնի տարածաշրջանային ներկայացուցիչները

դպրոցի աշակերտների համար անցկացրեցին 29 հանդիպում, որին մասնակցեց IX-XII դասարանների շուրջ 950 աշակերտ: Հանդիպումների նպատակն էր աշակերտների իրազեկումը Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման գործընթացի մասին: Հանդիպումների ժամանակ երիտասարդներին փոխանցվեց ՆԱՏՕ-ի և Եվրամիության թեմատիկայի մասին տեղեկատվություն: Հանդիպումներն ընթանում էին տարբեր կրթական-ինտելեկտուալ ակտիվությամբ, մրցույթի և վիկտորինայի ուղեկցությամբ: Հաղթանակած աշակերտներին փոխանցվեցին նաև խրախուսական պարգևներ:

3.3.1.4 «1+4 ծրագրի» շրջանակներում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար բարձրագույն կրթության մատչելիության ապահովում/այս նպատակով տեղեկատվական հանդիպումներին ընգրկում

Դավիթ Ադմաշենեբեկիի անվան ազգային պաշտպանության ակադեմիան յուրաքանչյուր ուսումնական տարի իրականացնում է վրաց լեզվից նախապատրաստության ծրագիր: «Բարձրագույն կրթության մասին» Վրաստանի օրենքով սահմանված քվոտի շրջանակներում, ամենամյա ակադեմիայի նշված ծրագրին հաշվառվում է էթնիկ փոքրամասնության 14 ներկայացուցիչ, այդ թվում. ազգությամբ 6 ադրբեջանցի, ազգությամբ 6 հայ, 1 արխազ և 1 օս: 2019-2020 ուսումնական տարվա համար ակադեմիայում վրաց լեզվից նախապատրաստության ծրագրին ընդունվեց 11 ունկնդիր, այստեղից 6 ադրբեջանալեզու, 5 հայալեզու քաղաքացի:

Ակադեմիան միացած էր էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ աշակերտների համար 2019 հաշվետու տարվա առաջին և երկրորդ եռամսյակում անցկացված տեղեկատվական քարոզչությանը և մասնակցեց Սամցխե-Ջավախեթի և Քվեմո Քարթլիի տարածաշրջաններում անցկացված տեղեկատվական հանդիպումներին: Տեղի ունեցավ 5 հանդիպում, այստեղից 4 հանդիպումը Քվեմո Քարթլիի և Կախեթի տարածաշրջաններում բնակվող երիտասարդների հետ (Դմանիսի, Բոլնիսի և Լագոդեխի մունիցիպալիտետներում), իսկ 1 հանդիպումն անցկացվեց Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում, Նինոծմինդայի մունիցիպալիտետում բնակվող երիտասարդների հետ:

3.3.1.5 «1+4 ստաժավորման ծրագրի, բարձրագույն և մասնագիտական կրթության մատչելիության տեսանկյունից գոյություն ունեցող հնարավորությունների մասին տեղեկատվության մատչելիության» նախագծի իրականացում

«Էթնիկ փոքրամասնությունների շրջանում բարձրագույն և մասնագիտական կրթության մատչելիության աջակցություն» պետական նախարարի գրասենյակի նախագծի շրջանակներում հասակակից լուսավորիչները էթնիկ փոքրամասնություններով բնակվող տարածաշրջանների (Քվեմո Քարթլի, Սամցխե-Ջավախեթի, Կախեթի) 177 գյուղում

անցկացրեցին 172 հանդիպում և դպրոցի ավարտական դասարանների աշակերտներին (2752 շահառու) հաղորդեցին տեղեկատվություն բարձրագույն և մասնագիտական կրթության, Եվրոպայում կրթություն ստանալու հնարավորությունների, ինչպես նաև 1+4 արտոնագրային քաղաքականության մասին: Նախագիծն իրականացվեց Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի և «Քաղաքացիական ինտեգրման և ազգամիջյան հարաբերությունների կենտրոնի» (CCIIR) աջակցությամբ:

Միջանկյալ նպատակ. 3.4 Մասնագիտական և չափահասների կրթության ապահովում

Խնդիր. 3.4.1 Մասնագիտական ուսումնարաններում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցության բարելավում, ինչպես նաև չափահաս բնակչության համար պետական լեզվի ուսուցման մատչելիության ապահովում

3.4.1.1 Մասնագիտական թեստավորման անցկացում ռուսերեն, ադրբեջաներեն կամ հայերեն լեզուներով դիմողների կողմից միայն մասնագիտական կրթական ծրագրի շրջանակային փաստաթղթի հիման վրա ստեղծված մասնագիտական կրթական ծրագրերի ընտրության դեպքում

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները 2015 թվականից ունեն հնարավորություն հայերեն, ռուսերեն կամ ադրբեջաներեն լեզուներով անցնել մասնագիտական թեստավորում և պետական ֆինանսավորմամբ ընդունվել մասնագիտական ծրագրերով իրականացվելիք կրթական հաստատություններ: Ընդունվելուց հետո, մինչև մասնագիտության տիրապետումը նրանք սովորում են վրացերեն լեզվի մոդուլը: Ոչվրացալեզու թեստավորման հիման վրա մասնագիտական կրթական հաստատություններում 2019 թվականի գարնանային ընդուննելության շրջանակներում 90 անձնավորություն ցանկություն հայտնեց մասնագիտական թեստավորումն անցնել հայերեն, ռուսերեն կամ ադրբեջաներեն լեզուներով, որոնցից 24 անձ ընդունվեց մասնագիտական կրթական ծրագրով իրականացվելիք հաստատություններ և ընդգրկվեց վրաց լեզվի մոդուլով սովորելուն: Իսկ 2019 թվականին աշնանային ընդուննելության շրջանակներում թեստը վերը նշված լեզուներով անցնելու նպատակով գրանցվեց 122 անձ, որտեղից ընդունվեց 52-ը:

Դրա հետ միասին, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնագիտական կրթության մատչելիության բարելավման նպատակով, սկսվեցին աշխատանքներ Ախալքալաքի (նախագծում) և Մառնեուլի (շինարարություն սկսելու ընթացակարգեր) մունիցիպալիտետներում մասնագիտական կրթական հաստատությունների զարգացման նպատակով:

Ինչ վերաբերում է ադրբեջանալեզու, հայալեզու և ռուսալեզու մասնագիտական թեստավորմանը մասնակից ապլիկանտների մասին վիճակագրական տվյալներին, ՀԻԻԱ գնահատման և քննությունների ազգային կենտրոնի կողմից, 2019 թվականի գարնանը (մայիս ամսին) կազմակերպված մասնագիտական թեստավորմանը մասնակցեց.

- ❖ Ադրբեջանալեզու 11 ապլիկանտ,
- ❖ Հայալեզու 9 ապլիկանտ,
- ❖ Ռուսալեզու 35 ապլիկանտ:

2019 թվականի աշնանը կազմակերպված մասնագիտական թեստավորման ցուցանիշներն այսպես բաշխվեցին.

- ❖ Ադրբեջանալեզու 19 ապլիկանտ,
- ❖ Ռուսալեզու 66 ապլիկանտ,
- ❖ Հայալեզու 8 ապլիկանտ:

3.4.1.2 Էթնիկ փոքրամասնությունների չափահաս ներկայացուցիչների համար լեզվական պատենշը հաղթահարելու նպատակով վրաց լեզվի ուսուցման դասընթացների առաջարկություն

Վրաց լեզվի ուսուցման մատչելիության ապահովման նպատակով ք. Թբիլիսիի սակրեբուլոն, «Բարեկամության տանը» իրականացնում է «Վրաց լեզվի ուսուցման դասընթացներ» ընթացիկ նախագծի միջոցով: 2019-2020 թթ. դասընթացներն ունենին շուրջ 50 ունկնդիր:

3.4.1.3 Ք.Բաթումիի «Բարեկամության տան» շրջանակներում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար վրաց լեզվի դասընթացի առաջարկություն

Ք. Բաթումիի մունիցիպալիտետի քաղաքապետարանի կողմից պլանավորված ակտիվությունը տարվա ընթացքում չի իրականացվել:

3.4.1.4 Վրաց լեզվի օրվան նվիրված միջոցառում

Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետական նախարարի գրասենյակի նախաձեռնությամբ, Վրաստանի ոչվրացալեզու դպրոցների և սեկտորների իններորդ դասարանի աշակերտների համար, անցկացվեց մրցույթ «Ես գրում եմ վրացերեն» վերնագրով, որի նպատակը պետական լեզվի ժողովրդականացումը, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ աշակերտների պետական լեզվով գրավոր իրավասությունների զարգացումը և խթանումն էր: Բացահայտվեց 3 հաղթանակած, նրանց փոխանցվեցին գովասանագրեր և նվերներ: Միջոցառումն անցկացվեց Իվանե Զավախիշվիլիի

անվան Թբիլիսիի պետական համալսարանի հետ համագործակցությամբ և Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ:

3.4.1.5 Հանդիպումներ հանրակրթական դպրոցներում Ախալցխի մասնագիտական կրթության «Օպիզար» ուսումնարանում տարածաշրջանի սոցիալական և տնտեսական զարգացման ռազմավարության և գործնական պլանին ծանոթության և աշխատանքի շուկայի և պահանջարկային մասնագիտությունների մասին աշակերտներին տեղեկացնելու նպատակով –տեղեկություններ չկան

3.4.1.6 Ոչվրացալեզու դատապարտյալների համար պետական լեզվի ուսումնական դասընթացի ապահովում

Պատժա-կատարողական հաստատություններում կրթության կարիքների ուսումնասիրությամբ սահմանվեց ոչվրացալեզու շահառուներին վրաց լեզվի դասավանդմամբ ապահովելու անհրաժեշտությունը: 2019 թվականի ընթացքում վրաց լեզվի ուսուցմանը ընդգրկված էր 86 շահառու:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀԻՒԱ Զուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցի կողմից իրականացված գործունեություն.

- ❖ Պետական լեզվի ուսուցման ծրագրի շրջանակներում պատրաստվեց դասագիրք. «Հաղորդակցական վրացերեն»,
- ❖ Պետական լեզվի ուսուցման ծրագրով դպրոցի 10 տարածաշրջանային ուսումնական կենտրոնում, որոնք գտնվում են Վրաստանի երեք տարածաշրջաններում. Քվեմո Քարթլի, Սամցխ-Ջավախեթի և Կախեթի, ուսումնառությունն ավարտեց 2018 թվականին ընդունված (84 խումբ) էթնիկ փոքրամասնությունների 1342 և 2019 թվականին ընդունված (162 խումբ) 2206 ներկայացուցիչ,
- ❖ Կոմպլեկտավորվեց 276 ուսումնական խումբ, որոնցից կայացավ 207 մոբիլային խումբ 4 քաղաքում, 66 գյուղում և 7 ռազմական հենակայանում: Ընդունվեց էթնիկ փոքրամասնության 3545 ներկայացուցիչ,
- ❖ Պետական լեզվի ուսուցման ծրագրի ավարտման կապակցությամբ, 10 տարածաշրջանային ուսումնական կենտրոնում անցկացվեցին վերջնական քննություններ (թեստավորում-հարցազրույց), որին ներկա էին ՀԻՒԱ Զուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցի ներկայացուցիչները և քննություն հանձնողները,
- ❖ Դպրոցը պետական լեզվի ուսուցման ծրագիրն իրականացվում է դաշտային-զինավարժությունների հենակայաններում Վրաստանի զինված ուժերում

պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար, որոնք անցնում են սկզբնական մարտական պատրաստություն. Ալգերի, Վազիանի, Օսիաուրի, Խցիսի, Կոջորի, Օրիսի և Վարցիխե ռազմական հենակայաններում: Լեզվի տիրապետման A1 մակարդակի ծրագրից օգտվեց էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչ 541 ռեկրուտ,

- ❖ Վրաստանի ներքին գործերի նախարարության նախաձեռնությամբ և ջանքերով ծրագրին ակտիվորեն ընդգրկվեցին Ախալքալաքի և Նինոծմինդայի մունիցիպալիտետների ներքին գործերի մարմիններում զբաղված անձինք, ընդհանուր առմամբ վերապատրաստվեց 24 ոստիկան,
- ❖ ՀԻԻԱ Կրոնի հարցերով պետական գործակալության հետ համագործակցության հուշագրի շրջանակներում, էթնիկ փոքրամասնության 84 հոգևոր դեմքերից 4 տարածաշրջանային ուսումնական կենտրոնում և Թբիլիսիում կոմպլեկտավորվեց 7 ուսումնական խումբ: Հոգևոր դեմքերը ակտիվորեն սովորում են պետական լեզուն A1 մակարդակով,
- ❖ Պետական լեզվի ուսուցման ծրագրում իրականացված փոփոխություններին ծանոթության, մանկավարժների համար վարժանքների անցկացման և մանկավարժների գնահատման նպատակով անցկացվեց 2-օրյա աշխատանքային հանդիպում Քութախում 60 մանկավարժների և 10 ադմինիստրատորի մասնակցությամբ,
- ❖ Ք. Թբիլիսիի սակրեբուլոյին առընթեր գործող «Բարեկամության տան» հետ համագործակցությամբ, «Սովորե՛նք վրացերեն» նախագծի շրջանակներում, Թբիլիսիում բնակվող էթնիկ փոքրամասնության 44 ներկայացուցիչներից կոմպլեկտավորվեց պետական լեզվի ուսուցման ծրագրի 3 մոբիլային խումբ, որոնք A1 և A2 մակարդակով սովորում են վրացերեն,
- ❖ Դպրոցը՝ „world vision international“-ի հետ համագործակցությամբ իրականացրեց «Պետական լեզվի ուսուցում արտասահմանյանների և քաղաքացիություն չունեցող անձանց համար» նախագիծը, որի շրջանակներում A1 մակարդակի ծրագրով վերապատրաստվեց ժամանակավոր ապաստան ունեցող 122 անձ,
- ❖ Պատրաստվեցին և տպագրվեցին ծրագրերի քարտարան, տեղեկատվական բրոշուրներ և այլ նյութեր,
- ❖ Ք.Թբիլիսիում տեղի ունեցավ կոնֆերանս «Վրաստանում պետական լեզուն քաղաքացիական ինտեգրման և մարդկային կապիտալի զարգացման համար»: Կոնֆերանսի շրջանակներում Զուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցի, պետական նախարարի գրասենյակի, պետական լեզվի

դեպարտամենտի և Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանի միջև ստորագրվեց համագործակցության քառակողմ հուշագիր, որի նպատակն է էթնիկ փոքրամասնությունների շրջանում պետական լեզվի ժողովրդականացման համար ուսումնական, կրթական և տեղեկատվական նախագծերի իրականացումը,

- ❖ Թբիլիսիի պետական համալսարանի հումանիտար գիտությունների ֆակուլտետի, երիտասարդական կենտրոնի, PITA-ի և լեզվի ամերիկյան կենտրոնի հետ համատեղ պլանավորվեց և անցկացվեց մայրենի լեզվի օրվան նվիրված շաբաթ: Անցկացվեց էսսեների մրցույթ «Վրացերենն՝ իմ պետական լեզու» թեմայով, որին մասնակցեց պետական լեզվի ուսուցման ծրագրի 30 ունկնդիր և գեղագրության մրցույթում բացահայտվեց 7 հաղթող, նրանց փոխանցվեցին վկայականներ և արժեքավոր նվերներ,
- ❖ Ախալքալաքի քաղաքապետարանի աջակցությամբ, Ախալքալաքում, «Մայրենի լեզվի օրվա» կապակցությամբ, մշակույթի տան պատին բացվեց «Մայրենի լեզվի» պանո,
- ❖ Պետական լեզվի ժողովրդականացման նպատակով պատրաստվեց դպրոցի առաջադեմ ունկնդիրների մասին ֆիլմ,
- ❖ Դպրոցը մասնակցեց Վրաստանի անկախության օրվան նվիրված միջոցառմանը: Քութաիսում, Վերիկո Անջափարիձեի անվան պուրակում սարքավորված տաղավարներում ցուցադրվեցին դպրոցի կողմից հրատարակված դասագրքեր, «Սովորի՛ր վրացերեն աուդիո դասերով» աուդիո սկավառակներ, տեղեկատվական բուկլետներ, որոնց ծանոթանալու հնարավորություն ունեցան հյուրերը, գեղագրության մրցույթի հաղթողը անցկացրեց վարպետության դաս:

Ռազմավարական նպատակ 4

Էթնիկ փոքրամասնությունների մշակույթի պահպանում և հանդուրժողական միջավայրի խթանում

Միջանկյալ նպատակ. 4.1 Մշակույթի քաղաքականության մշակման և իրականացման մեջ էթնիկ փոքրամասնությունների դերի և նշանակության արտացոլում

Խնդիր.4.1.1 Տարածաշրջանային և տեղական միավորների հետ էթնիկ փոքրամասնությունների մշակույթի պահպանությանն ուղղված գործունեության բարելավում, համակարգման ապահովում

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվեց տարբեր ծրագրերի/նախագծերի և միջոցառումների իրականացումը, ինչը նպատակաուղղված էր էթնիկ փոքրամասնությունների մշակույթի պաշտպանությանը- զարգացմանը/ժողովրդականացմանը և էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մշակութային ժառանգության պահպանությանը: Մշակութային ինքնարտահայտմանը նպաստելու և հետագա ինտեգրման նպատակով շարունակվեց թանգարանների և թատրոնների գործունեության օժանդակությունը ֆինանսական աջակցության ապահովման ճանապարհով:

4.1.1.1 Մշակութային միջոցառումների օժանդակություն

Հաշվետու տարում ք. Թբիլիսիի սակրեբուլոյի «Բարեկամության տան» կազմակերպմամբ տեղի ունեցան տարբեր մշակութային միջոցառումներ, այդ թվում նշվեց Լատվիայի անկախության 101–ամյա հոբելյանը, որին ներկա էր շուրջ 50 հյուր:

4.1.1.2 Էթնիկ փոքրամասնությունների տարբեր ժողովրդական, մշակութային և կրոնական տոների նշում, ինչպես նաև նրանց ընդգրկում Վրաստանի ավանդական ժողովրդական, մշակութային և կրոնական տոների կազմակերպմանը

Հաշվետու ժամանակաշրջանում ք. Բաթումի մունիցիպալիտետի քաղաքապետարանի աջակցությամբ և «Բարեկամության տան» կազմակերպմամբ իրականացվեց Վրաստանում բնակվող տարբեր էթնիկ փոքրամասնությունների մոտավորապես 15 նշանակալից մշակութային կարգի միջոցառում:

4.1.1.3 Հասարակական գործիչների (բանաստեղծներ, գրողներ) հոբելյանների նշում, գրական երեկոների կազմակերպում ականավոր նկարիչների հոբելյանների նշում և ցուցահանդեսների կազմակերպում սովորող-երիտասարդների ընդգրկմամբ,

Ընթացիկ տարի էթնիկ ուկրաինացիները մասնակցեցին Բաթումի արվեստի թանգարանում անցկացվող «Ուկրաինական աշուն» միջոցառմանը, որի շրջանակներում ներկայացվեց վրացի և ուկրաինացի նկարիչների թեմատիկ աշխատանքների ցուցահանդես, ինչպես նաև սովորող երիտասարդության ընդգրկմամբ «Բարեկամության տանը» տեղի ունեցան «Ուկրաինական լեզվի առաջացում» միջոցառումը և «Լիթերինգ» նկարների մրցույթը, կայացավ Տարաս Շեվչենկոյի ծննդյան օրվան նվիրված միջոցառում:

4.1.1.4 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ պատանի նկարիչների «Սովորող երիտասարդության աչքով տեսած Վրաստանը և վրացիները» թեմայով նկարների ցուցահանդեսի օժանդակություն

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ պատանի նկարիչներին աջակցության նպատակով անցկացվեց թեմատիկ աշխատանքների ցուցահանդես:

4.1.1.5 «Ճանաչի՛ր Վրաստանը» նախագծի շրջանակներում Էթնիկ փոքրամասնությունների Վրաստանի մշակութային հուշարձաններ և տեսարժան վայրեր այցելություններին օժանդակություն (Էքսկուրսիաների, շրջայցերի կազմակերպում)

Ք.Բաթումի մունիցիպալիտետի քաղաքապետարանի կողմից Վրաստանի մասշտաբով անցկացվեց շուրջ 5 էքսկուրսիա-տեսարժանությունների շրջայց տարբեր էթնիկ փոքրամասնության խմբերի նախաձեռնության հիման վրա:

Հավելյալ միջոցառում.

«Շրջագայի՛ր Վրաստանում» նախագծի շրջանակներում էթնիկ փոքրամասնությունների Վրաստանի մշակութային հուշարձաններ և տեսարժան վայրեր այցելություններին օժանդակության նպատակով Գարդաբանի մունիցիպալիտետի կողմից կայացավ 15 շրջայց Վրաստանի տարբեր անկյուններ, 300 շահառու: Մասնակից էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների թիվը՝ 80 :

4.1.1.6 - 4.1.1.7 Նովրուզ-Բայրամ տոնի կապակցությամբ անցկացված միջոցառումներ, փախստականների միջազգային օր, գրական երեկոներ, սպորտային և մշակութային միջոցառումներ

Քվեմո Քարթլիի տարածաշրջանի մունիցիպալիտետներում անցկացվեցին տարբեր մշակութային միջոցառումներ, այդ թվում՝ Նովրուզ Բայրամ, գրական/պոեզիայի երեկոներ, սպորտային միջոցառումներ, երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառումներ, ցուցահանդեսներ, ժողովրդական տոնակատարություններ (Գարդաբնոբա, Քոսալարոբա, Ավասոբա, Ռուսթավլաքոբա):

4.1.1.8 Հանդուրժողականության շաբաթի անցկացում

Թերթիժդարոյի և Մաոնեուլիի մունիցիպալիտետներում անցկացվեցին հանդուրժողականության միջազգային օրվան նվիրված տարբեր կարգի միջոցառումներ:

4.1.1.9 Կանանց միջազգային օրվան նվիրված միջոցառումներ (մարտի 3 և 8)

Քվեմո Քարթլիի տարածաշրջանի մունիցիպալիտետներում, մասնավորապես, Գարդաբանի, Բոլնիսի, Մաոնեուլի, Դմանիսի և Ծալկայի մունիցիպալիտետներում, անցկացվեցին Կանանց միջազգային և Մոր օրվան նվիրված միջոցառումներ:

4.1.1.10 Անկախության օրվան նվիրված միջոցառումներ (Մայիսի 26)

Քվեմո Քարթլիի տարածաշրջանի մունիցիպալիտետներում, մասնավորապես, Գարդաբանի, Դմանիսի, Մառնեուլիի և Ծալկայի մունիցիպալիտետներում անցկացվեցին Վրաստանի անկախության օրվան նվիրված միջոցառումներ:

4.1.1.11 Տարածաշրջանում անցկացվելիք մշակութային միջոցառումներին էթնիկ փոքրամասնությունների ընդգրկվածության ապահովում

Սամցխե-Ջավախեթի երկրամասային վարչությունը ակտիվորեն կատարում է այն միջոցառումների համակարգում, որոնք օժանդակում են էթնիկ փոքրամասնությունների մշակույթի և ինքնակենցաղի պահպանմանը: Էթնիկ փոքրամասնություններով խիտ բնակվող վարչական միավորներում գործում են ակումբային հաստատություններ, ստեղծվել են երգի և պարի համույթներ, երաժշտական դպրոցներ: Ք.Ախալքալաքում և ք. Ախալցխեում գործում են նկարչության դպրոցներ, որոնք սիստեմատիկաբար մասնակցում են տեղի և միջազգային ցուցահանդեսներին: Հաշվետու ժամանակաշրջանում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ակտիվ մասնակցությամբ անցկացվեցին բազում միջոցառումներ, որտեղ գեղարվեստական կոլեկտիվները ցուցադրեցին սեփական էթնոսի մշակույթը և ավանդույթները: Մասնավորապես, անցկացվեցին հայ բանաստեղծների հիշատակին նվիրված օրեր, հայկական խոհանոցի փառատոն, ժողովրդական ձեռքի աշխատանքների վարպետների աշխատանքների և գեղարվեստական դպրոցների աշխատանքների ցուցահանդեսներ, ինտելեկտուալ վիկտորինաներ, հայկական ժողովրդական պարի փառատոներ, մարզական-առողջարար միջոցառումներ, «Ջավախեթի գարուն» փառատոն, գյուղի տոնական միջոցառումներ և այլն:

Միջանկյալ նպատակ. 4.2 Էթնիկ փոքրամասնությունների մշակութային ժառանգության պաշտպանություն և ժողովրդականացում

Խնդիր. 4.2.1 Էթնիկ փոքրամասնությունների նյութական և ոչնյութական մշակութային արժեքների պաշտպանություն

4.2.1.1 Էթնիկ փոքրամասնությունների ՀԻԻԱ կազմակերպությունների գործունեության օժանդակություն՝ ներկայացումներ, հյուրախաղեր, ցուցահանդեսներ, հրատարակություններ, համերգներ

Էթնիկ փոքրամասնությունների մշակույթի ՀԻԻԱ կազմակերպության տարեկան բյուջեն 2019 թվականին կազմեց 1 877 700 լարի:

Թանգարաններ.

- ❖ ՀԻԻԱ Դավիթ Բաագովի անվան Վրաստանի հրեական և վրաց-հրեական հարաբերությունների պատմության թանգարան – բյուջեն՝ 117 500 լարի, անցկացվեց 26 միջոցառում,
- ❖ ՀԻԻԱ Միրզա Ֆաթալի Ախունդովի անվան ադրբեջանական մշակույթի թանգարան՝ բյուջեն՝ 48 000 լարի, անցկացվեց 24 միջոցառում,
- ❖ ՀԻԻԱ Սմիռնովների թանգարան – բյուջեն՝ 60160 լարի, անցկացվեց 10 միջոցառում,

Նշված ՀԻԻԱ թանգարանների կողմից իրականացվեց շուրջ 200 միջոցառում, որոնց զումարային բյուջեն կազմեց 206 000 լարի:

Թատրոններ.

- ❖ **ՀԻԻԱ Հեյդար Ալիևի անվան Թբիլիսիի ադրբեջանական պրոֆեսիոնալ պետական դրամատիկական թատրոն**

Հաշվետու ժամանակաշրջանում ՀԻԻԱ Հեյդար Ալիևի անվան Թբիլիսիի ադրբեջանական պրոֆեսիոնալ պետական դրամատիկական թատրոնի ֆինանսավորումը կազմեց 175 000 լարի: Տարվա ընթացքում թատրոնը խաղացանկում ուներ երեք բեմադրություն, այդ թվում երկու պրեմիերայով: Թատրոնը մասնակցեց Ղազախստանի և Թուրքիայի թատերական փառատոներին: Ներկայացումներին ներկա հանդիսատեսի ընդհանուր թվաքանակը 3 000 մարդ էր:

- ❖ **ՀԻԻԱ Ալեքսանդր Գրիբոյեդովի անվան պրոֆեսիոնալ ռուսական դրամատիկական թատրոն**

Թատրոնի տարեկան բյուջեն 1 090 000 լարի է: Թատրոնը խաղացանկում ունի 31 բեմադրություն 4 պրեմիերայով: Տարվա ընթացքում իրականացված ակտիվությունների քանակը 152, ակտիվությունները ներառում են նաև հյուրախաղերը ինչպես երկրի տարածաշրջաններում (Ախալցխե, Բաթումի, Տղիֆուլի, Ճիաթուրա), այնպես էլ արտասահմանում (Հայաստան, Ուկրաինա, Ուզբեկստան, Ռուսաստան, Գերմանիա, Հունաստան, Կիպրոս):

- ❖ **ՀԻԻԱ Պետրոս Ադամյանի անվան հայկական դրամատիկական թատրոն**

Թատրոնի տարեկան բյուջեն կազմում է 400 000 լարի: Թատրոնն իր խաղացանկում տարվա ընթացքում ուներ 11 ներկայացում, այստեղից՝ 6 պրեմիերա: Թատրոնը հյուրախաղերի ուղևորվեց երկրի ներսում (Ամբրուլաուրի, Ախալցխե և գյուղեր, Քվեմո Քարթլիում. Խոժոռնի, Գյուլիֆաղ, Ծոփ, Միրզոնկա, Խաչեն գյուղեր): Հանդիսատեսի ընդհանուր թվաքանակը կազմեց 3000 մարդ:

4.2.1.2 Մրցույթ էթնիկ փոքրամասնությունների մշակութային ինքնակենցաղն արտացոլող միջոցառումներին օժանդակության համար

Անցկացվեց մրցույթ «Էթնիկ փոքրամասնությունների ինքնակենցաղի պահպանության և ստեղծագործական գործունեության օժանդակության նպատակով»: Մրցույթին մասնակցեց շուրջ 10 նախագծային հայտ և բացահայտվեց 6 հաղթանակած նախագիծ, որոնց գումարային ֆինանսավորումը կազմեց 98 846 լարի:

Մրցույթի արդյունքում բացահայտված հաղթող նախագծերի շրջանակներում հրատարակվեց Վրաստանում բնակվող տարբեր էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ հասարակական գործիչների կյանքն ու գործունեությունն արտացոլող 5 գիրք-ալբոմ և աուդիո-սկավառակ (ընդամենը 2150 օրինակ), Պատանի հանդիսատեսի թատրոնի մեծ բեմին ներկայացվեց արխագական առասպելների և լեգենդների հիման վրա ստեղծված ներկայացում «Սարա Բարա Բզիա Բզո», այսինքն՝ «Ես քեզ սիրում եմ»: Ներկայացման պրեմիերային ներկա էր 800 հանդիսատես:

Բացի դրանից, ՀԻԻԱ մշակութային ժառանգության պաշտպանության ազգային գործակալության կողմից, 2019 թվականի հունիսին սկսվեց Վրաստանի հրեա համայնքի ոչնյութական մշակութային ժառանգության գույքագրում, որի շրջանակներում տեղի ունեցան հանդիպումներ հրեա համայնքի ներկայացուցիչների հետ, այդ թվում վրաց-հրեական դպրոցի աշակերտների և մանկավարժների հետ: Գույքագրման շրջանակներում անցկացվեց նախագիծ «Պատկերում ենք հրեական հեքիաթները» (վրաց-հրեական դպրոցի կրտսեր դասարանցիների համար, մասնակցում էր 20 աշակերտ), «Իմ սիրած տոնը» (այս նույն դպրոցի բարձր դասարանցիների համար, մասնակցում էր 8 աշակերտ):

Ավարտվեց նաև դպրոցական «Ոչնյութական մշակութային ժառանգության նախանձախնդիր» մրցույթի առաջին փուլը: Դրան մասնակցում էին Վրաստանի հանրային և մասնավոր դպրոցների աշակերտները, այդ թվում, ոչվրացալեզու, էթնիկ փոքրամասնություններով բնակվող տարածաշրջանների դպրոցի աշակերտներ (Գորելովկա-ռուսալեզու, Նինոծմինդա, գյուղ Փոքր Գոնդուրա – հայալեզու, Մառնեուլի մունիցիպալիտետ, Ջեմո Սարալի, Ջանդարի – ադրբեջանալեզու):

4.2.1.3- 4.2.1.4 Վրաստանում գոյություն ունեցող լեհական ժառանգության գույքագրում-հետազոտություն

2019 թվականին իրականացվեց Վրաստանում լեհական մշակութային ժառանգության կոմպլեքսային մուլտիդիսցիպլինային հետազոտության և գույքագրման ծրագրի առաջին փուլը՝ լեհական ճարտարապետների և ինժեներների կողմից նախագծված շինությունների,

լեհերին պատկանող կամ նրանց կյանքի և գործունեության հետ կապված շինությունների և այլ օբյեկտների գույքագրում: Միջոցառման բյուջեն կազմեց 94 500 լարի:

4.2.1.5 Նախագծեր. «Բազմերանգ Վրաստան», «Բազմերանգ Վրաստանը Պանկիսում»

ՀԻԻԱ Գիորգի Լեոնիձեի անվան վրացական գրական թանգարանը Վրաստանում բնակվող էթնիկ փոքրամասնություններին հասարակությանը ինտեգրման օժանդակության, երիտասարդության իրազեկվածության և ստեղծագործական ունակությունների զարգացման նպատակով իրականացրեց նախագիծ «Բազմերանգ Վրաստան», որի բյուջեն կազմեց 42 000 լարի: Նախագծի շրջանակներում տեղի ունեցան մշակութային-կրթական միջոցառումներ Քվեմո Քարթլիի, Սամցխե-Ջավախեթի և Կախեթի (Պանկիսի կիրճ) տարածաշրջանների էթնիկ փոքրամասնություններով բնակվող 6 մունիցիպալիտետում և 7 գյուղերում (Նինոծմինդա, Մաոնետուլի, Բոլնիսի, Ախալցխի, Ախալքալաքի, Ախմետա, գյուղեր. Դուխի, Սակոբխանո, Ջոդոլո, ավան Շահումյան, Ալգեթի, Հեշտիա, Թամարիսի): Տեղի ունեցավ շուրջ 60 ակտիվություն, այդ թվում դասախոսություն-սեմինարներ, հոբբիյանական ամսաթվերի տոնակատարություն, ֆիլմերի ցուցադրում, ներկայացումներ, ցուցահանդեսներ, երաժշտական համերգներ և գրական-երաժշտական պերֆորմանսներ: Միջոցառումներին ներկաների թիվը շուրջ 6000 մարդ էր:

4.2.1.6 Նովրուզ Բայրամ տոնակատարություն

2019 թվականի մարտի 21-ին ք. Թբիլիսիի Սակրեբուլոյում անցկացվեց Նովրուզ Բայրամ շաբաթվա եզրափակիչ հանդիպումը: Կազմակերպվեց ցուցահանդես: Կատարվեցին ավանդական երաժշտական համարներ: Միջոցառմանը մասնակցեց 250 հյուր:

4.2.1.7 Վրաստանում բնակվող երիտասարդ ադրբեջանցի նկարիչների ցուցահանդես

ՀԻԻԱ Միրզա Ֆաթալի Ախունդովի ադրբեջանական մշակույթի թանգարանի կողմից անցկացվեց ադրբեջանցի և վրացի երիտասարդ արվեստագետների համատեղ ցուցահանդես: Միջոցառմանը մասնակցեց 70 հյուր:

4.2.1.8 Էթնիկ փոքրամասնությունների ոչնյութական մշակույթի պաշտպանություն և պահպանություն: Ակնառու ներկայացուցիչներին նվիրված միջոցառումների անցկացում, ցուցահանդեսների կազմակերպում, դիտե՝ք 4.1.1.1

Հավելյալ միջոցառում.

2019 թվականին ՀԻԻԱ «Վրաստանի զբոսաշրջության ազգային վարչության» կողմից իրականացված ակտիվություն. հրատարակվեց զբոսաշրջության 2 կատալոգ «Հրեական ժառանգություն» և «Գերմանական ժառանգություն»:

Միջանկյալ նպատակ. 4.3. Մշակութային բազմերանգության խթանում

Խնդիր. 4.3.1 Միջմշակութային երկխոսության զարգացում

4.3.1.1 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ բարձր դասարանցիների այցելություն ՆԳՆ վարչական շենքեր և Դ.Ադմաշենեքելիի անվան պաշտպանության ազգային ակադեմիա

2019 թվականի հունիսի 19-ին Վրաստանի ներքին գործերի նախարարության ՀԻԻԱ «112» այցելեցին «Դպրոցի, հասարակության և ոստիկանության հետ համագործակցության» ծրագրի (SCOPE) մասնակիցները, նրանց թվում էին էթնիկ փոքրամասնության 4 ներկայացուցիչ: Իսկ այդ նույն տարվա հոկտեմբերի 4-ին, «Անհետաձգելի օգնության հեռախոսահամարի իմացության աճ աշակերտների շրջանում» նախագծի շրջանակներում, «112»-ը հյուրընկալեց «Հայարտուն» կրթա-մշակութային և երիտասարդական կենտրոնի անդամներին, որոնց շրջանում էին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ 19 բարձր դասարանցիներ:

4.3.1.2 PH International միջազգային կազմակերպության կողմից կազմակերպված միջոցառումներին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների ընդգրկում

2019 թվականին Վրաստանի ներքին գործերի նախարարության և PH International ոչկառավարական կազմակերպության համագործակցությամբ, Աճարայի, Կախեթի, Սամեգրելոյի, Իմերեթի, Սվանեթի, Քվեմո Քարթլիի և Գուրիայի տարածաշրջաններում, իրավական մշակույթից վերապատրաստում անցան իրավապահներ և մանկավարժներ: Վերապատրաստված անձինք դպրոցի աշակերտների համար ապահովում են իրավական մշակույթի դասերի անցկացումը 2019-2020 թվականների ընթացքում:

4.3.1.3 Էթնիկ փոքրամասնություններով բնակվող շրջաններում գտնվող թանգարանների ուժեղացում կրթական գործունեության տեսանկյունից, թանգարանի աշխատակիցների վարժանք և օգնություն կրթական ծրագրերի և ռեսուրսների պատրաստության տեսանկյունից

2019 թվականի ընթացքում ավարտվեց Բոլնիսում նոր թանգարանի շինարարությունը, որի մշտական գործող ցուցահանդեսում ներկայացված կլինի Քվեմո Քարթլիի տարածաշրջանի բազմազգությունը: Թանգարանում պատրաստվում են հատուկ ծրագրեր աշակերտների համար: Թանգարանի բացումը պլանավորված է 2020 թվականին: Էթնիկ

փոքրամասնություններով բնակվող շրջաններում՝ Բոլնիսի, Դմանիսի, Ախալցխի – վերապատրաստվեցին թանգարանի ընտրված աշխատակիցները և մշակվեցին կրթական ծրագրեր:

4.3.1.4 Հանդիպումներ էթնիկ փոքրամասնություններով բնակվող շրջանների դպրոցների մանկավարժների հետ նրանց թանգարանային կրթական ծրագրերին ծանոթացնելու նպատակով

Վրաստանի կրթության, գիտություն, մշակույթի և սպորտի նախարարության կողմից պլանավորված ակտիվությունը տարվա ընթացքում չի իրականացվել:

4.3.1.5 «Վրացի լեզվի ուսուցում թանգարանում» - թանգարանային հավաքածուներին հենվելով, վրաց լեզվի ուսումնական ծրագրի մշակում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ աշակերտների համար ինչպես ազգային թանգարանի կազմի մեջ մտնող թանգարաններում, այնպես էլ էթնիկ փոքրամասնություններով բնակվող շրջանների տարածաշրջանային թանգարաններում

Ազգային թանգարանի կողմից, Էքսետերի համալսարանի (Բրիտանիա) և «Արվեստի և մարդասիրական գիտությունների հետազոտության խորհրդի» (Բրիտանիա) գործընկերությամբ մշակվել է երկու ծրագիր «Վրաց լեզվի ուսուցում թանգարանում» թեմայով 8-16 տարեկան տարիքի էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչ երեխաների համար: Ծրագրերի նպատակն է լսարանի ծանոթացումը վրաց մշակույթին և վրաց լեզվի ուսուցումը թանգարանների ցուցանմուշների կիրառմամբ:

Բացի գործնական պլանով նախատեսված ակտիվություններից, 2019 թվականի մայիսի 21-ին, պետական նախարարի գրասենյակի ընդգրկմամբ, նշվեց մշակութային բազմերանգության միջազգային օրը Սուխիշվիլիի ազգային բալետի մասնակցությամբ (բյուջե՝ 13 818 լարի): Նշված միջոցառման շրջանակներում, ներկայացվեցին Վրաստանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների պարերը: Միջոցառմանը մասնակցեցին տարբեր միջազգային և տեղական կազմակերպությունների, Վրաստանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների և Վրաստանում լիազորագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ (350 մասնակից),

4.3.1.6 Կրթական-ճանաչողական ճամբարների, շրջայցերի և արշավների կազմակերպում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ աշակերտության համար

Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից պլանավորված ակտիվությունը տարվա ընթացքում չի իրականացվել:

4.3.1.7 Արտագնա թեմատիկ դասախոսություններ և ծրագրեր էթնիկ փոքրամասնություններով բնակվող շրջաններում, այդ թվում արտագնա «Ճանապարհորդող ցուցահանդեսներ» (Օրինակ, «Բազմամշակութային Վրաստան») էթնիկ փոքրամասնություններով բնակվող շրջաններում կրթական բաղադրիչի ուղեկցությամբ

Վրաստանի ազգային թանգարանի կողմից հաշվետու ժամանակաշրջանում անցկացվեց (2) Ճանապարհորդող ցուցահանդես Մարտոկովում: Ցուցահանդեսը նախատեսում էր Մարտոկովի դպրոցի աշակերտության համար հնէաբանության պատմության մասին հնէաբանական շարժական ցուցահանդեսի ներկայացում: Ցուցահանդեսին ծանոթացավ շուրջ 80 աշակերտ:

4.3.1.8 **Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար (ինչպես երեխաների և պատանիների, այնպես էլ չափահասների) թանգարանների հավաքածուների և մշակութային ժառանգության ծանոթություն շրջայցերի և հատուկ ծրագրերի միջոցով**

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար (ինչպես երեխաների, այնպես էլ չափահասների) ազգային թանգարանի հավաքածուների և մշակութային ժառանգության ծանոթություն շրջայցերի և հատուկ ծրագրերի միջոցով (անցկացվեց 18 շրջայց, մասնակիցների թվաքանակը՝ 1500):

4.3.1.9 «Կլոր սեղան» հանդիպման կազմակերպում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Համատեղ նախագծի իրականացում, որտեղ բոլոր կողմերը ունեն սեփական մշակույթը ներկայացնելու հնարավորություն

Ք. Թբիլիսիի սակրեբուլոյի կողմից պլանավորված ակտիվությունը տարվա ընթացքում չի իրականացվել:

4.3.1.10 Թբիլիսիի «Բարեկամության տուն» նախագծի գործունեության օժանդակություն: Ք. Թբիլիսիի սակրեբուլոյի ազգային փոքրամասնությունների խորհրդի սերտ համակարգում «Բարեկամության տան հետ», համատեղ միջոցառումների անցկացում: Դիտել՝ 4.1.1.1

4.3.1.11 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մշակույթի պահպանության և զարգացման օժանդակություն

Նշված

4.3.1.12 «Բաթումոբա» տոնակատարությանը Բաթումի պուռաշարերի մոտ էթնիկ փոքրամասնությունների կենցաղի և մշակութային կենսակերպն ու վրացական մշակութային

տարածքում ինտեգրումն արտացոլող ցուցահանդեսների և տարբեր մրցույթների կազմակերպում, ազգային խոհանոցի համոտեսում, ձեռագործ աշխատանքների ցուցահանդես, վաճառք և այլն

2019 թվականի «Բաթումոբա» տոնակատարության շրջանակներում միջոցառումների կենտրոնական մասը զբաղեցնում էր, այսպես կոչված, «Բարեկամության ծառուղին», որտեղ ներկայացված էր գովազդային ցուցահանդես Բաթումի բարեկամացած քաղաքների և Բաթումում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների միջև: Միջոցառման շրջանակներում անցկացվեցին Բաթումի բարեկամացած քաղաքների պաշտոնական պատվիրակությունների և էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների հանդիպումներ:

4.3.1.13 Պանկիսի մանկավարժների եվրոպական և եվրատլանտյան կառուցվածքներին ինտեգրման հարցերի մասին գիտելիքների բարձրացման նպատակով ք. Բրյուսելում ուսումնական այցի իրականացում

ՆԱՏՕ-ի և Եվրամիության մասին տեղեկատվական կենտրոնի և Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի գրասենյակի համատեղ նախաձեռնությամբ, Վրաստանում Եվրամիության պատվիրակության ֆինանսական աջակցությամբ, առաջին անգամ իրականացվեց Պանկիսի կիրճի մանկավարժների գիտակցության բարձրացմանը և ընդգրկվածության ուժեղացմանը կողմնորոշված նախագիծ՝ «Գիտելիքների բարձրացում Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման գործընթացի մասին»: Նախագծի առաջին փուլն իրականացվեց 2018 թվականի դեկտեմբերի վերջին, որի շրջանակներում Թբիլիսիում նախագծի մասնակից մանկավարժների համար տեղի ունեցավ եվրոփոնտեգրման հարցերի մասին երկօրյա սեմինար: Նախագծին մասնակցեցին Պանկիսի կիրճի հանրային դպրոցների ուսուցիչ և տնօրեն տիկնայք (20 հոգի), ովքեր հնարավորություն ունեցան ստանալու տեղեկատվություն Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման գործընթացի մասին, դատողություն անելու և քննարկելու վերը նշվածի հետ կապված ակտուալ հարցեր: Ծրագրի երկրորդ փուլում, նախագծի բոլոր մասնակիցները, 2019 թվականի փետրվարի 3-7-ը ուսումնական այցով ուղևորվեցին Բրյուսել և տեղում ծանոթացան եվրոպական և եվրատլանտյան կառուցվածքների աշխատանքի սկզբունքներին: Այցի շրջանակներում տեղի ունեցան հանդիպումներ Եվրամիության կառուցվածքների և ՆԱՏՕ-ի շտաբակայանում, ինչպես նաև տեղական կրթության համակարգի և այս ուղղությամբ եվրոպական փորձի փոխանակման նպատակով կայացան հանդիպումներ Բելգիայի կրթական հաստատություններում: Նախագիծը լուսաբանվեց մեդիայով:

4.3.1.14 Էթնիկ փոքրամասնությունների համար կայացավ ֆոտո-ցուցահանդես «Բազմազգ Վրաստան»

2019 թվականին Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանում անցկացվեց 4 միջոցառում. ֆոտո-ցուցահանդեսներ, համերգներ, գրքերի շնորհանդեսներ: Մասնավորապես, գրադարանի ցուցահանդեսային դահլիճում կայացավ Էթնիկ ադրբեջանցի լուսանկարիչ Շախվալադ Էյվազի ֆոտո-ցուցահանդեսը: Միջոցառմանը մասնակցեց 200 հյուր:

Հավելյալ միջոցառում

Փետրվարի 19-ին ազգային գրադարանի ցուցահանդեսային դահլիճում կայացավ հայ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի և Երգահան Կոմիտասի 150-ամյա հոբելյաններին նվիրված երեկո: Միջոցառմանը մասնակցեց 80 հյուր:

Հունիսի 20-ին Ազգային գրադարանի ցուցահանդեսային դահլիճը հյուրընկալեց չերքեզական ավանդական ոճի հագուստի դեֆիլեն: Ցուցահանդեսային դահլիճում հավաքված հասարակությունը դիտեց չերքեզ դիզայներ Միլա Արդանի հավաքածուն: Միջոցառմանը մասնակցեց 150 հյուր:

4.3.1.15 Ոչվրացալեզու դպրոցներում Էթնիկ փոքրամասնությունների համար պլանավորվում է գրքային հիմնադրամի օգնությունը

Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանի «Էկվիլիբրիում» շարժումը Բոլնիսի մունիցիպալիտետի գյուղերի բնակչությանը որպես նվեր փոխանցեց գրքեր:

4.3.1.16 Վրաստանում բնակվող Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ աշակերտների համար ազգային գրադարան կրթական էքսկուրսիաների պլանավորում

Բոլնիսի մունիցիպալիտետի Իրգանչայ և Սավանթի գյուղերի դպրոցների աշակերտների համար կազմակերպվեց էքսկուրսիա Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարան:

4.3.1.17 Գրադարանային ռեսուրսների կիրառմամբ ուսուցում-վարժանք Էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչների համար

Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանի կողմից պլանավորված ակտիվությունը տարվա ընթացքում չի իրականացվել:

4.3.1.20 Բազմազգ արվեստի փառատոնի կազմակերպում «Մեկ երկնքի տակ-մշակութային երկխոսություն»

Հաշվետու ժամանակաշրջանում ք. Լազոդեխում և ք. Մառնեուլիում անցկացվեց բազմազգ արվեստի փառատոն «Մեկ երկնքի տակ – մշակութային երկխոսություն», որտեղ էթնիկ փոքրամասնությունների 210 երիտասարդ ներկայացրեց տարբեր էթնոսների բնորոշ ազգագրական համարներ, կատարվեցին դասական երաժշտության ստեղծագործություններ:

4.3.1.21 Պետական միջգերատեսչական հանձնաժողովի նիստեր

Պատրաստվեց և պետական միջգերատեսչական հանձնաժողովին, ինչպես նաև ժողովրդական պաշտպանի գրասենյակին կից գործող փոքրամասնությունների խորհրդին ներկայացվեց քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական ռազմավարության 2018 թվականի գործնական պլանի կատարման հաշվետվությունը և 2019 թվականի գործնական պլանը:

Պետական նախարարի գրասենյակի համակարգմամբ, անկախ փորձագետների կողմից պատրաստվեց և քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման կառավարական հանձնաժողովին ներկայացվեց քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական ռազմավարության 2015-2018 թթ. գործնական պլանի գնահատման միջանկյալ հաշվետվությունը:

Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի գրասենյակի համակարգմամբ անցկացվեց միջգերատեսչական հանձնաժողովի նիստ, որտեղ տեղի ունեցավ «Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական ռազմավարության և 2015-2020 թվականների գործնական պլանի» միջանկյալ գնահատման փաստաթղթի աշխատանքային տարբերակի շնորհանդեսը: Քննարկվեց ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի (FCNM) շրջանակներում խորհրդատուների կոմիտեի կողմից Վրաստանի մասին պատրաստված երրորդ եզրակացությունը: Զրույցի թեման նաև հանրային կառավարման բարեփոխումն էր. ռազմավարական փաստաթղթերի մշակման նոր մեթոդոլոգիան և ընթացակարգերը: Հանդիպման վերջում կայացավ բանավեճ:

4.3.1.22 Միջգերատեսչական հանձնաժողովի թեմատիկ աշխատանքային խմբերի հանդիպումներ

«Փոքրաթիվ և խոցելի էթնիկ փոքրամասնություններին աջակցություն» թեմայով անցկացվեց պետական միջգերատեսչական հանձնաժողովի շրջանակներում գոյություն ունեցող թեմատիկ խմբի նիստ: Փորձագետների, պետական հաստատությունների, ոչկառավարական կազմակերպությունների և էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած հանդիպմանը քննարկվեցին մարտահրավերները և

հնարավորությունները, կարծիքները, առաջարկությունները և հանձնարարականները, որոնք օժանդակում են էթնիկ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը և ընդհանուր առմամբ քաղաքացիական ինտեգրման գործընթացին:

4.3.1.23 Հանդուրժողականության միջազգային օրվան նվիրված միջոցառումների անցկացում

Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի գրասենյակի կազմակերպմամբ տեղի ունեցավ հանդուրժողականության և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառում: Միջոցառմանը, պետական նախարարի գրասենյակի կողմից հայտարարված «Մեր բազմերանգությունը մեր հարստությունն է» խորագրով ֆոտո և մեդիա մրցույթում բացահայտված հաղթողներին փոխանցվեցին պատվոգրեր և հուշանվերներ:

4.3.1.24 Անկախության օրվան (Մայիսի 26) նվիրված միջոցառման անցկացում

Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի գրասենյակի կազմակերպմամբ, Վրաստանի անկախության օրվա կապակցությամբ Մաոնեուլիում և Ախալքալաքում իրականացվեց բազմազան ծրագիր, որի շրջանակներում անցկացվեց համերգ, կազմակերպվեցին մանկական ցուցահանդեսներ, որոնց ակտիվորեն ընդգրկված էին Քվեմո Քարթլիի և Սամցխե-Ջավախեթի տարածաշրջաններում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները:

4.3.1.25 Կանանց միջազգային օրվան նվիրված միջոցառումների անցկացում

Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի գրասենյակի կողմից պլանավորված ակտիվությունը չի իրականացվել:

4.3.1.26 Էթնիկ փոքրամասնությունների ազգային մշակույթի պահպանության և զարգացման օժանդակություն (Դիտե՛ք՝ 4.1.1.11)

Հավելյալ ակտիվություններ.

- ❖ Հաշտեցման ժամանակաշրջանի ընթացքում պետական նախարարի գրասենյակը «Ճանաչի՛ր բազմերանգ Վրաստանը» նախագծի շրջանակներում պատրաստեց տեսահոլովակների սերիա էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ հաջողակ և շնորհալի համաքաղաքացիներին հասարակությանը ծանոթացնելու նպատակով: Տեսա-հոլովակները տեղադրվեցին պետական նախարարի գրասենյակի կայք-էջին և տեղի ունեցավ դրանց շնորհանդեսը միջազգային և ոչկառավարական

կազմակերպությունների և դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչների հետ:

- ❖ Մառնեուլի մունիցիպալիտետի Ծոփ գյուղի աշակերտության համար, պետական նախարարի գրասենյակի կողմից (12 աշակերտ, 3 մանկավարժ) պլանավորվեց և իրականացվեց մշակութային-ճանաչողական շրջայց Թբիլիսիում,
- ❖ Քվեմո Քարթլի, Սամցխե-Ջավախեթի և Կախեթի տարածաշրջաններում բնակչության կարիքների նույնականացման նպատակով, պետական նախարարի գրասենյակի ընդգրկմամբ, կայացան հանդիպումներ: Տեղեկատվական հանդիպումների ժամանակ, որոնց մասնակցում էին նաև օրենսդրական մարմնի և տեղական ինքնակառավարման ներկայացուցիչները, քննարկվեցին տարածաշրջաններում առկա իրավիճակը և հիմնախնդիրները: Տեղացիները, այդ թվում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները, մանրամասնորեն խոսեցին իրենց կարիքների մասին:

Գործնական պլանի ներքո իրականացված լրացուցիչ միջոցառումներ.

Պանկիսի կիրճում գործում է 5 հանրային և 2 բազային դպրոց, որտեղ կրթություն է ստանում շուրջ 1400 աշակերտ: Պանկիսի կիրճի հանրային դպրոցի աշակերտները 2019 թվականի ընթացքում՝ Ախմետայի մունիցիպալիտետի քաղաքապետարանի երիտասարդական ծառայության ֆինանսավորմամբ և նախաձեռնությամբ, մասնակցեցին հետևյալ նախագծերին. ազգային մեդիանախագիծ «Էտալոն», դպրոցական սպորտային օլիմպիադա «Ի՞նչ, որտե՞ղ, Ե՞րբ», «Զվարճասերների և հնարամիտների մունիցիպալային և տարածաշրջանային շրջայցեր», Եվրոպայի սպորտի շաբաթ, արշավներ, շաբաթօրյակներ և այլ մշակութային կամ զվարճալի միջոցառումներ: Քաղաքապետարանի երիտասարդության գործերի ծառայության կազմակերպմամբ, Ախմետայի մունիցիպալիտետի բոլոր վարչական միավորներում, այդ թվում Պանկիսի կիրճի չորս վարչական միավորումում ընտրվեցին երիտասարդ առաջնորդների 5-հոգիանոց նախաձեռնողական խմբեր, որոնց ընդգրկմամբ կիրճում պլանավորվեցին և իրականացվեցին հետևյալ ակտիվությունները. դարի բանասաց-բանաստեղծ Գաբրիել Գարաշվիլիի հիշատակի երեկո (Սակոբիանո գյուղ), բարեկարգման գործողություն, գույների փառատոն, սպորտային ակտիվություն – ըմբշամարտ ձյուդոյից (Դուխի և Ջողոլո գյուղեր), վարժանքներ անցկացվեցին և նախագիծ գրելու ուղղությամբ պատրաստություն անցավ 20 առաջնորդ – աշակերտ, «Զարգացրո՛ւ քո տարածաշրջանը, քո քաղաքը» անկախ երեխաների և ուսանողների միավորման նախագծի շրջանակներում պանկիսցի Ամինա Խանգոշվիլին այլ աշակերտների հետ միասին ուղևորվեց Կաբադոկիա (քաղաքապետարանի նույն ծառայության ֆինանսավորմամբ):

Ախմետայի մունիցիպալիտետի արվեստի-ճանաչողական դպրոցի բազայի վրա Ջոդոլո գյուղում բացվեց արվեստի դպրոցի մասնաճյուղ՝ կիրառական արվեստի խմբակ, որին ավելացան նաև նկարչության, գեղանկաչության, ծեփագործության, կոմպոզիցիայի ուսուցման խմբեր: Երեխաների պաշտպանության օրվա կապակցությամբ կազմակերպվեցին տոնական համերգ և երեխաների աշխատանքների ցուցահանդեսներ: Շրջանավարտներին փոխանցվեցին համապատասխան դիպլոմներ:

Դուխի գյուղում գործում է երաժշտական դպրոց, որտեղ երեխաները ստանում են դասական երաժշտության կրթություն:

Ո(Ն)ԻԱ Ախմետայի մշակույթի կենտրոն. Պանկիսի կիրճում գործում է չորս մշակույթի կենտրոն (Դուխի, Ջոդոլո, Օմալո, Սակոբխանո), մեկ թանգարան (Պանկիսի ազգագրական թանգարան), հինգ գրադարան (Դուխի, Ջոդոլո, Խալաձանի, Օմալո, Սակոբխանո) և մունիցիպալիտետի բազայի վրա գործող «Պանկիսի» պարի և երգի համույթ: 2019 թվականի ընթացքում կատարվեց գրքային հիմնադրամի թարմացում, թանգարանային ցուցանմուշների հագեցում, տարբեր մշակութային-զվարճալի միջոցառումների անցկացում. այդ թվում ամանորյա, զարնանային և Սոր օրվան նվիրված միջոցառումներ (Դուխի մշակույթի տուն, մարտ), մշակութային բազմերանգության օր (Պանկիսի կիրճ, Խաղորի, հուլիս), նշված միջոցառմանը մասնակցեցին տեղական պարային-ազգագրական համույթները և անհատական կատարողներ:

Առանձնահատուկ ուշադրություն հատկացվեց Պանկիսի կիրճում երիտասարդ պատանի սերնդի կյանքում առողջ կենսակերպի հաստատմանը: Պանկիսի մարզիկները 2018 թվականին մասնակցեցին մարզական դպրոցների գրաֆիկով նախատեսված ինչպես տեղական, այնպես էլ տարածաշրջանային և միջազգային մրցաշարերին սպորտի հետևյալ տեսակներից. ձյուդո, հունա-հռոմեական, ատլետիզմ, ռաբբի, կոկ-բոքսինգ, ֆուտբոլ: Սպորտի այս տեսակներում ընդհանուր առմամբ զբաղված է կիրճի 350 երեխա, այդ թվում.

- ❖ **Ո(Ն)ԻԱ «Բախտրիոնի» ֆուտբոլային դպրոցի** բազայի վրա Պանկիսի կիրճում գործում է չորս ֆուտբոլային խումբ (Դուխի, Ջոդոլո, Բիրկիանի, Օմալո գյուղեր), որտեղ շուրջ 80 երեխայի սովորեցնում է չորս մարզիչ-ուսուցիչ:
- ❖ **Ո(Ն)ԻԱ Զ.Զվիադաուրիի անվան ձյուդոյի դպրոց** - կիրճում բացվել է երեք ըմբշամարտի դահլիճ (Դուխի, Սակոբխանո, Դումաստուրի գյուղեր), որտեղ վեց տարբեր խմբերում մարզվում է մինչև 120 երեխա: 2019 թվականին սկսնակ մարզիկները մասնակցեցին բոլոր մակարդակների մրցաշարերին ինչպես տեղական, այնպես էլ տարածաշրջանային և միջազգային մասշտաբով:

❖ **Ո(ն)ԻԱ կոմպլեքսային սպորտային դպրոցի բազայի վրա** Պանկիսի կիրճում 2019 թվականին գործում էր չորս մարզական խումբ (կոկ-բոքսինգ, հունա-հռոմեական ըմբշամարտ և ատլետիզմ), որտեղ շուրջ 150 երեխայի պարապում է ութ մարզիչ-ուսուցիչ: Ընթացիկ տարում կյանքի առողջ կենսակերպի արմատավորման նպատակով պլանավորվեց և իրականացվեց (դպրոցի բյուջեի նախատեսմամբ) նյութա-տեխնիկական բազայի բարելավում, սպորտային գույքի ձեռք բերում և սպորտային օրացույցով նախատեսված բոլոր մրցաշարերին մասնակցություն:

Դեղովիլիսծղարոյի մունիցիպալիտետի Սաբաթո և Ճոեթի գյուղերում բնակվող էթնիկ փոքրամասնությունները ակտիվորեն մասնակցում էին մունիցիպալիտետի մշակութային միջոցառումներին, ինչպիսիք են մայիսի 26-ին Վրաստանի անկախության օրվան նվիրված միջոցառումները, փառատոներ, տոնահանդեսներ:

Թելավի մունիցիպալիտետում 2019 թվականի ընթացքում էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչ 70-ից ավելի երիտասարդ մասնակցեց Թելավի մունիցիպալիտետի սպորտի և երիտասարդության բաժնի կողմից անցկացված տարբեր սպորտային և երիտասարդական միջոցառումներին. դպրոցական սպորտային օլիմպիադա, ինտելեկտուալ նախագիծ «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ», «Ապրի՛ր սպորտով» օլիմպիադա, ««Հնէաբանական ճամբար Գոնիո-Ափսարոսի թանգարան-արգելանոցում»:

Ղարաջալա գյուղի հանրային դպրոցի բազայի վրա գործում է Ո(ն)ԻԱ «Սպորտային ակումբների միավորման» սպորտային սեկցիա՝ բասկետբոլիստների խումբ, որտեղ մարզվում է 27 երիտասարդ: Ո(ն)ԻԱ Թելավի ֆուտբոլային դպրոց «Թելավի» կողմից գործում է սպորտային սեկցիա՝ ֆուտբոլի խումբ, որտեղ մարզվում է 28 երիտասարդ: Ո(ն)ԻԱ «Թելավի մունիցիպալիտետի ըմբշամարտի սպորտային դպրոց Թելավում» սպորտի տեսակ բազկամարտում, մարզվում է 3 երիտասարդ: Թելավի մունիցիպալիտետում գործող երաժշտական դպրոցներում 8 աշակերտ էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչ է: Թելավի մունիցիպալիտետի վրացական ժողովրդական երգի և պարի համույթի անդամ 1 աշակերտ էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչ է, իսկ «Ո(ն)ԻԱ Թելավի սովորող երիտասարդության տանը» կրթություն է ստանում էթնիկ փոքրամասնության 4 ներկայացուցիչ: Ղարաջալա գյուղում նույնպես գործում է 1 գրադարան, որտեղ 2 900 տպագիր գրականություն վրացերեն, ադրբեջաներեն և ռուսերեն լեզուներով հասանելի է ինչպես մեծահասակների, այնպես էլ երեխաների համար: Ղարաջալա գյուղում գործում է նախադպրոցական դաստիարակության հաստատություն, որտեղ 2019 թվականի դրությամբ հաշվառված է 204 երեխա: Հաստատությունում աշխատում է 11 կադր տեղական համայնքից:

Լագոդէիսի մունիցիպալիտետում 2019 թվականին անցկացվեցին հետևյալ մշակութային միջոցառումները.

Մարտի 21-22, գյուղ Կաբալա - «Նովրուզ Բայրամ»,

Ապրիլի 14, գյուղ Կաբալա – երիտասարդական միջոցառում,

Սեպտեմբերի 23-30, «Եվրոպայի սպորտի շաբաթի» շրջանակներում Հերեթիսկարիի և Արեշփերանի բնակչությունը մասնակցեց ֆուտբոլի մրցույթին:

Հոկտեմբերի 15, Արեշփերանի գյուղ - «Կոստաոբա»,

Հոկտեմբերի 19, Հերեթիսկարի գյուղ «Աճարական օր» փառատոն,

Հուլիսի 5-6, «Միասին դեպի առողջ կենսակերպ» նախագիծ – մրցաշար մինի ֆուտբոլից և բասկետբոլից, մասնակցեց Կաբալայի և Հերեթիսկարիի բնակչությունը:

Սագարեջոյի մունիցիպալիտետի կողմից 2019 թվականին իրականացված մշակութային միջոցառումներ.

- ❖ Կայացավ սպորտային միջոցառում - մինի ֆուտբոլ «Բարեկամության գավաթ», որին վրացի հասակակիցների հետ միասին մասնակցում էին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներ, միջոցառումն անցկացվեց Լամբալոյի հանրային դպրոցի մարզադաշտում,
- ❖ Մայիսի 26-ին անցկացվեց Վրաստանի անկախության օրվան նվիրված միջոցառում: Կազմակերպվեց տոնական երթ Վրաստանի անկախության համար գոհված Հերոսների հրապարակի հուշատախտակի մոտ, մշակույթի տանը տեղի ունեցավ համերգ:
- ❖ Ապրիլի 9-ին ծակեպսակներով զարդարվեց Յորմուղանլոյում գոյություն ունեցող երկու երկրների ազատագրության համար պայքարողների հուշարձանը (Թբիլիսիում 1989 թվականի ապրիլի 9-ի և Բաքվում 1990 թվականի հունվարի 20-ին), ինչպես նաև Սագարեջոյի թիվ 1 հանրային դպրոցի բակում գտնվող հուշաքարը:
- ❖ Մայիսի 28-ին Յորմուղանլո գյուղում, մունիցիպալիտետի քաղաքապետարանի աջակցությամբ և կազմակերպմամբ, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ, ադրբեջանալեզու բնակչության կրոնական տոն «Ռամադան» և դրա բաղկացուցիչ տոնի՝ Օրուջ-բայրամի (Պահք) կապակցությամբ տեղի ունեցավ ժողովրդական հավաք և տոնական միջոցառում:

Հավելված 1

Ենթակառուցվածքի վերակառուցում

Քվեմո Քարթլիի տարածաշրջան

Ռուսթավի

- ❖ Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում Ռուսթավի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 16 նախագիծ, գումարային արժողությունը 12 404 606 լարի, այդ թվում տարածաշրջանների զարգացման հիմնադրամի գումարը՝ 11 682 203 լարի,

Բոլնիսի

- ❖ Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում Բոլնիսի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 16 նախագիծ, գումարային արժողությամբ 5 960 886 լարի, այդ թվում տարածաշրջանային զարգացման հիմնադրամի գումարը՝ 5 590 896 լարի,

Գարդաբանի

- ❖ Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում Գարդաբանի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 7 նախագիծ, գումարային արժողությունը՝ 8 114 806 լարի, այդ թվում տարածաշրջանային զարգացման հիմնադրամի գումարը՝ 6 406 476 լարի,

Դմանիսի

- ❖ Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում Դմանիսի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 6 նախագիծ, գումարային արժողությունը 3 320 660 լարի, այդ թվում տարածաշրջանային զարգացման հիմնադրամի գումարը՝ 2 687 596 լարի,

Թեթրիձղարո

- ❖ Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում Թեթրիձղարոյի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 8 նախագիծ, գումարային

Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական ռազմավարության 2019 զործնական պլանի կատարման հաշվետվություն

արժողությունը՝ 5 202 178 լարի, այդ թվում տարածաշրջանային զարգացման հիմնադրամի գումարը՝ 4 166 263 լարի,

Մառնեուլի

- ❖ Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում Մառնեուլի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 11 նախագիծ, գումարային արժողությունը 6 294 125 լարի, այդ թվում տարածաշրջանային զարգացման հիմնադրամի գումարը՝ 4 942 872 լարի,

Ծալկա

- ❖ Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում Ծալկայի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 3 նախագիծ, գումարային արժողությունը 3 418 007 լարի, այդ թվում տարածաշրջանային զարգացման հիմնադրամի գումարը՝ 3 063 063 լարի:

Սամցխե-Ջավախեթի տարածաշրջան

Ախալցխի

- ❖ Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում Ախալցխի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 10 նախագիծ, գումարային արժողությունը 6 455 721 լարի, այդ թվում տարածաշրջանային զարգացման հիմնադրամի գումարը՝ 5 661 869 լարի,
- ❖ Բարձրալեռ բնակավայրերի զարգացման հիմնադրամի կողմից Ախալցխի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 1 նախագիծ, արժողությունը 687 718 լարի, այդ թվում լեռնային հիմնադրամի գումարը՝ 653 332 լարի,

Ադիգենի

- ❖ Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում Ադիգենի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 2 նախագիծ, գումարային արժողությունը 2 434 656 լարի, այդ թվում տարածաշրջանային զարգացման հիմնադրամի գումարը՝ 2 205 432 լարի,

Ասպինձա

- ❖ Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում Ասպինձայի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 5 նախագիծ, գումարային

Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական ռազմավարության 2019 զործնական պլանի կատարման հաշվետվություն

արժողությունը 2 729 486 լարի, այդ թվում տարածաշրջանային զարգացման հիմնադրամի գումարը 2 552 564 լարի,

Ախալքալաքի

- ❖ Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում Ախալքալաքի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 5 նախագիծ, գումարային արժողությունը 4 438 015 լարի, այդ թվում տարածաշրջանային զարգացման հիմնադրամի գումարը՝ 4 065 468 լարի,

Բորջոմի

- ❖ Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում Բորջոմի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 10 նախագիծ, գումարային արժողությունը 5 126 114 լարի, այդ թվում տարածաշրջանային զարգացման հիմնադրամի գումարը՝ 4 089 417 լարի,

Նինոծմինդա

- ❖ Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում Նինոծմինդայի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 6 նախագիծ, գումարային արժողությունը 3 229 875 լարի, այդ թվում տարածաշրջանային զարգացման հիմնադրամի գումարը՝ 3 060 922 լարի:

Կախեթի տարածաշրջան

Ախմետա

- ❖ Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում Ախմետայի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 18 նախագիծ, գումարային արժողությունը 4 578 987 լարի, այդ թվում տարածաշրջանային զարգացման հիմնադրամի գումարը՝ 4 325 217 լարի,

Լագոդեխի

- ❖ Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում Լագոդեխի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 10 նախագիծ, գումարային արժողությունը 5 556 589 լարի, այդ թվում տարածաշրջանային զարգացման հիմնադրամի գումարը 5 134 675 լարի: